ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2

ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՊ 103834

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՏՈՐ 2

ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

(Ժողովածուն նվիրվում է պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ Նիկոլայ Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակին)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ НАН РА

ВОСТОКОВЕДЕНИЕ В АРМЕНИИ

ТОМ II

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ АРАБИСТИКИ

(Сборник посвящается 85-летию со дня рождения д.и.н. профессора, члена корреспондента НАН РА, заслуженного деятеля науки Николая Оганесяна)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
2017

INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

ORIENTAL STUDIES IN ARMENIA

VOLUME II

CURRENT PROBLEMS OF ARABIC STUDIES

(The Collection of papers in honour of Prof., Dr., Corresponding Member of NAS RA, Honoured Scientist Nikolay Hovhannisyan on the occasion of his 85th birthday)

YEREVAN
"GITUTYUN" PUBLISHING HOUSE OF NAS RA
2017

PUBLICATION BASED ON THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

SERIES EDITOR:

Ruben Safrastyan, Prof., Dr., Member of NAS RA

EDITORIAL BOARD:

Editor of the Volume: Lilit Harutyunyan, Assoc. Prof., PhD
Vice-Editor: Arax Pashayan, Assoc. Prof., PhD
Assistant: Anush Tamrazyan

ՀՏԴ 80:008:94
ԳՄԴ 80+71+63.3
Ա 862

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝
ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, պրոֆ., պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

ՀԱՏՈՐԻ ԽՄԲԱԳԻՐ՝ ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պ.գ.թ., դոցենտ
ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԱԲՍ ՓԱՇԱՅԱՆ, պ.գ.թ., դոցենտ
ՕԳՆԱԿԱՆ՝ ԱՆՈՒՇ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Ա 862 Արևելագիտությունը Հայաստանում. – Եր.: «Գիտություն», 2017,
հ. II: Արաբագիտության արդի հիմնախնդիրները, 199 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2015 թ. հոկտեմբերի 29-30-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում անցկացված «Արաբագիտության արդի հիմնախնդիրները» գիտաժողովի նյութերը: Նվիրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական, Միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ, պ.գ.դ, պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, արևելագետ-միջազգայնագետ Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակին:

ISBN 978-5-8080-1286-8
© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2017



ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ, ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ազգային-ազատագրական պայքարը Իրաքում (1945-1963 թթ.), Եր., 1964, 228 էջ:
2. Der Kampf der Demokratischen Krafte des Irak gegen den Anglo-irakischen vertrag von 1930, Kolonialismus und Neo-kolonialismus in Nordafrica und Nahost, Berlin, 1964, ss. 351-363.
3. Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958 թթ.), Եր., 1967, 331 էջ:
4. Образование независимой Сирийской Республики (1939-1946 гг.), Москва, 1968, с. 118.
5. An-Nidal at -Taharuri al-Watani fi-l Lubnan (1939-1958), Dar al-Farabi, Beirut, 1974, 191 p. (Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958), Բեյրութ, 1974 (արաբերեն):
6. Отношение различных арабских политических сил ко Второй мировой войне. Москва, 1974, сс. 83-91.
7. Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946 թթ.), Հ. Ս. Սարգսյանի մասնակցությամբ, Եր., 1975, 320 էջ:
8. Национально-освободительное движение в Ираке (1917-1958 гг.), Ер., 1976, 394 стр.
9. Восстание в Ливане в ноябре 1943 г. и его историческое значение. Арабский Восток и Магриб. Москва, 1977, сс. 208-230.

10. Политика империалистических держав на Арабском Востоке в годы Второй мировой войны (1939-1945 гг). Ер., 1980, 264 стр.
11. Неравномерное развитие арабских стран (50-70 гг.). Ереван, 1980, стр. 42-45.
12. Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982 թթ.), Եր., 1982, 79 էջ:
13. Советский опыт решения национального вопроса и его значение дла народов Африки и Азии (авторский коллектив). Ереван, 1982, 300 стр.
14. Отношения Иракской Республики со странами Арабского Востока. Ер., 1985, 115 стр.
15. Активизация ислама: характер, специфика и последствия. Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока (коллектив авторов). Ер., 1986, (сс. 7-47), 229 стр.
16. The Uneven Development of the Arab Countries and Its Consequences (1950-1970s), Moscow, 1986.
17. Становление и развитите востоковедения в Советской Армении - "Востоковедческие центры в СССР (Азербайджан, Армения, Грузия, Украина)" (коллектив авторов). Вып. I, Москва, 1988, (45-73 стр.), 128 стр.
18. О некоторых последствиях активизации ислама. Академия наук СССР, Институт востоковедения. Современный ислам: проблемы политики и идеологии. Вып. 4, часть III, Москва, 1988, сс. 31-35.
19. Е. А. Лебедев, Н. О. Оганесян. Изучение новой и новейшей истории арабских стран между III и IV Всесоюзными конференциями арабистов (1969-1985 гг.) – в книге "Современные политические и социально-экономические проблемы арабских стран". I. Ереван, 1988, сс. 5-17.

20. Հեղափոխական պրոցեսը արաբական աշխարհում, Եր., 1990, 96 էջ:
21. Հայաստանի հարակից երկրների պատմություն, հեղինակային կոլեկտիվ (Գլուխ 3, պար. 2-3), Եր., 1992, 239 էջ:
22. Նորագույն պատմություն (1939-1991), հեղինակային կոլեկտիվ (Երկու խոսք, Գլ. 1-3): Դասագիրք միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի համար, Եր., 1992, 215 էջ:
23. Irregularities in the Development of Arab Countries and their Consequences (1950-1970). Proceedings of the XXXII International Congress for Asian and North African Studies, Hamburg, 25th-30th August, 1986, Stuttgart, 1992, pp. 450-451.
24. Арабская историография новой истории Армении-Новая история Армении в трудах современных зарубежных авторов (коллектив авторов). (Гл. V, стр. 159-219). Ер., 1993, 287 стр.
25. The Persian Gulf War and the Kurdish Problem, "Acta Kurdica", vol. I, London, 1994, pp. 65-71.
26. Նորագույն պատմություն (1939-1995 թթ.), հեղինակային կոլեկտիվ (Գլ. 1-3), Եր., 1996, 224 էջ:
27. Հայոց ցեղասպանության պատճառների լուսաբանությունը և գնահատականը արաբական ժամանակակից պատմագրության մեջ, Եր., 1996:
28. Դիվանագիտություն. Ֆունկցիաները. Մարմինները. Ծառայողները, Եր., 1997, էջ 103:
29. The Problems of National Security of Armenia in the Middle Eastern-Transcaucasian Geopolitical System, Yerevan, 1997.
30. "Нагорно-карабахский конфликт и варианты его решения" в книге "Этнополитические конфликты в Закавказье: их истоки и пути решения" (оллектив авторов).

Мерилендский университет, США, 1997, (стр. 92- 122), 177 стр.
31. Карабахский конфликт. Этапы. Подходы. Варианты решения. Ер., 1997, 80 стр.
32. The Foreign Policy of Armenia, Yerevan, 1998, 108 p.
33. The Karabakh Problem. Factors. Criteria. Variants of Solution, Yerevan, 1999, 112 p.
34. Նորագույն պատմություն (հեղինակակից՝ Գ. Գեղամյան), Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք, Եր., «Զանգակ-97», 1999, 156 էջ:
35. Նորագույն պատմություն (1939-1998), Հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, հեղ. կոլեկտիվ (Ն. Հ. Հովհաննիսյան, Գ. Գեղամյան, Ռ. Լ. Ազիզբեկյան, Վ. Կ. Ֆուրաև, Գ. Ռ. Լևին, Ե. Ի. Պոպովա, Ս. Մ. Ստեցկևիչ), Եր., «Լույս», 1999, էջ 223:
36. Каким мы нашли Имама Хомейни. Третий взгляд. No 72, Москва, 2000, с. 26-28, Публикация посольства Иранской Исламской Республики в Москве о Хомейни.
37. Formation of the Transcaucasian-Middle Eastern Geopolitical System,Yerevan, 2000.
38. Նորագույն պատմություն (հեղինակակից՝ Գ. Գեղամյան): Դասագիրք հանրակրթական դպրոցների համար. 8-րդ դասարան (գլուխ 1, 3-10, 12-18), Եր., «Զանգակ-97», 2001, 160 էջ:
39. Պատմություն. Հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում. Դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, հեղինակային կոլեկտիվ, Եր., «Զանգակ-97», 2001, 303 էջ:
40. The Armenian Genocide. Armenocide, Yerevan, 2002, 107 p.
41. Հայոց ցեղասպանությունը Ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Եր., 2002:

42. Արաբական երկրների պատմություն, Հ.I. Արաբները VII դարից մինչև 1516թ., Եր., 2003, 418 էջ:
43. Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Եր., «Զանգակ-97», 2004, 112 էջ:
44. Արաբական երկրների պատմություն, Հ.II, Օսմանյան տիրապետության շրջան. 1516-1918, Երևան, «Զանգակ-97», 2004, 677 էջ:
45. Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Եր., 2004, 206 էջ:
46. The Karabakh Problem. The Thorny Road to Freedom and Independence, Yerevan, 2004, 146p.
47. The Armenian Genocide, Yerevan, 2005, "Zangak-97", 59 p.
48. Le Genocide Armenien, Erevan, 2005, 62 p.
49. Der Volkermord an den Armeniern, Jerewan, 2005, 66 S.
50. Геноцид армян, Ереван, 2005, 62 с.
51. The Arabic Histiriography on the Armenian Genocide, Yerevan, 2005, 168 p.
52. Ermeni Soykirimi. Ermenikirim (Հայոց ցեղասպանություն. հայասպանություն). Istanbul, 2005, 120 p (թուրքերեն).
53. Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը և եվրատլանտյան համագործակցությունը, հեղ. կոլ., Առաջաբան, Գլուխ I. Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության ստեղծման ռազմա-քաղաքական նախադրյալները, Եր., 2005թ., 78 էջ:
54. Արաբական երկրների պատմություն. Հ.III. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918-2005թթ., Ալժիր, ԱՄԷ, Բահրեյն, Եգիպտոս, Եմեն, Թունիս, Իրաք, Լիբանան, Լիբիա, Կատար, «Զանգակ-97», Երևան, 2006, 840 էջ:
55. Arab National-Cultural Renaissance-Nahda and The Contribution of Armenians, Yerevan, 2007, 14 p.

56. Nikolaj Hovhaniszjan, Az Ormeny Genocidium, Budapest, 2007, 107 էջ (հունգարերեն):
57. Արաբական երկրների պատմություն. Հ. IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918-2005 թթ., Հորդանան, Մավրիտանիա, Մարոկկո, Պաղեստինի Ինքնավարություն, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Սուդան, Քուվեյթ, Օման, «Զանգակ-97», Երևան, 2007, 767 էջ:
58. "Al-alakat al-tarikhiya al-armaniya al-arabiya, al-Kahira", 2008 (Հայ-արաբական պատմական հարաբերությունները, Կահիրե, 2008, 52 էջ, արաբերեն): Ներածական՝ պրոֆ. Ահմադ Զայդ՝ Կահիրեի համալսարանի գրականության ֆակուլտետի դեկան: Առաջաբան՝ դոկտոր Ռուբեն Կարապետյան, Եգիպտոսում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան:
59. Nasl-Kushi-i-Armaniyan, tarjumat Qarun Sarqsyan, edited by Mostafa Zamani-Nia, Qitab Siyamak, Tehran, 2009 (Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո), թարգմանությունը պարսկերենի՝ Գարուն Սարգսյանի, խմբագրությամբ՝ Մոստաֆա Զամանի-Նիա, Սիյամակ Բուկ, Թեհրան, 2009, 311 էջ (պարսկերեն):
60. The Armenian Genocide. Armenocide –The Most Genocidal Genocide. In Ten Languages of the World- In English, French, Russian, German, Turkish, Japanese, Hungarian, Armenian, Arabic, Persian., "Zangak-97", Yerevan, 2009, 856 p.
61. Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, «Զանգակ-97», 2010, 263 էջ:
62. Հայաստան-Սփյուռք. Ինտեգրման ռազմավարական ուղենիշները: Հայեցակարգային մոտեցումներ, «Աշխատանքային տետրեր»: «Հայկական բանակ» ռազմագի-

տական հանդեսի հավելված. 1-2 /13-14/, Երևան, 2010, 240 էջ /հոդվածը՝ էջ 68-84/:

63. Марван Бухейри. Теодор Герцль и армянский вопрос. (Перевод с англ.). Подготовка к изданию, предисловие и редактирование проф. Николая Оганесяна, Ереван, 2010, 70 стр.
64. "Suriya. Ala darbi al-qifah min ajli al-istiqlali" («Պայքար անկախության համար»), Հալեպ, 2010, 239 էջ (արաբերեն):
65. IL Problema del Karabakh. IL faticoso percorso verso la liberta e l'indipendenza, Roma, 2011, 172 p.
66. "Al-qitabat al-tarikhiyat al-arabiyat an al-ibadat al armaniyat", Al-Kahirat, 2011 (Արաբական պատմագիտությունը հայոց ցեղասպանության մասին), Կահիրե, 2011, 208 էջ (արաբերեն):
67. Մատենագիտություն Արևելագիտության ինստիտուտի հրատարակությունների. Մեկենասությամբ «Արմեն և Բերսաբե Ճերեճյան Հիմնադրամի», ԱՄՆ: Արսեն և Էդվարդ Ճերեճյանների պրեզիդենտության շրջանում (1997-2011): Կազմեց և խմբագրեց Նիկոլայ Հովհաննիսյանը, Երևան, 2011, 32 էջ: Նույնը՝ անգլերեն, նույն գրքույկում՝ BIBLIOGRAPHY Publications of the Institute of Oriental Studies. Sponsored by "Armen and Bersabe Jerejian Foundation".USA. During the Presidency of Arsen and Edward Jerejians (1997-2011). Compiled and Edited by Professor Nikolay Hovhannisyan, Yerevan, 2011, 32 p.
68. Genocidul Armean, Bucuresti, 2012, 112 p. (ռումիներեն):
69. King of Kings Tigran the Great and the Armenian Empire as Evaluated by Modern Arab Historiography, Yerevan, 2012: Նույնը՝ ռուսերեն /27-51/ և հայերեն /53-83/:
70. Այաթոլլահ Խոմեյնիի մոտեցումը Խորհրդային Միության հետ հարաբերությունները կարգավորելու հարցում և

դիրքորոշումը Հայաստանի ու հայության հանդեպ: «Հայաստան-Իրան 20 տարի համագործակցության ճանապարհով»: Երևան, 2012, էջ 55-77:

71. Համակարգային նոր մօտեցումները Հայոց ցեղասպանութեան գնահատման եւ ցեղասպանութեան ճանաչման ռազմավարութիինում՝ արդի ցեղասպանագիտութեան համատեքստում, «Ազդակ Բացառիկ», Բեյրութ, 2013, էջ 66-75:
72. Արաբների և հայերի հարաբերությունները հնագույն շրջանից մինչև այսօր, «Փայման», Թեհրան, Իրան, No 61, 2013, էջ 164-180 (պարսկերեն):
73. Նիկոլայ Հովհաննիսյան, Աշոտ Ղուկասյան, Արմեն Ղուկասյան, Արմինե Նարիմանյան, Համաշխարհային պատմություն. 8-րդ դասարան: Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից: Երևան, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2013, 191 էջ: (Ն. Հովհաննիսյանի մասը՝ II բաժին, Գլ. 23-27, էջ 139-171), խմբագիրներ՝ Նիկոլայ Հովհաննիսյան, Աշոտ Ղուկասյան:
74. Արաբների և հայերի հարաբերությունները հնագույն շրջանից մինչև այսօր, «Փայման», 61, Թեհրան, 2013, 154-180, պարսկերեն (թարգմ. արաբերենից՝ Մասուդ Ահմադի և Թուրջ Խուսրուվի):
75. «Նեմեսիս» գործողությունը և հայ վրիժառուների առաքելությունը արաբական արդի պատմագիտության գնահատմամբ, «Գիտություն», ՀՀ ԳԱԱ թերթ, 2014, սեպտեմբեր, N 9, էջ 2, 5:
76. Всемирная смута во имя модернизации. Ереван, "Голос Армении", 22 мая 2014, с. 6; Al-tamarun al-arabi al-am liajli tahdisi al-mujtama al-arabi, "Al Watan", Dimashq, 9, VII, 2014 (արաբերեն): Համաարաբական ըմբոստությունը՝ հանուն արաբական հասարակության արդիականացման, «Տարածաշրջանային խնդիրներ», Երևան, 2014, էջ 5-15:

77. ՀՀ պաշտպանության նախարարություն: Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ: Ռազմավարական ազգային հետազոտություններ, Հատոր 1, Երևան, 2014, համահեղինակ և խմբագրական խորհրդի նախագահ, 673 էջ:
78. ՀՀ պաշտպանության նախարարություն: Դ.Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ: Ռազմավարական ազգային հետազոտություններ, Հատոր 2, Երևան, 2014, համահեղինակ և խմբագրական խորհրդի նախագահ, 497 էջ:
79. ՀՀ պաշտպանության նախարարություն: Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ: Ռազմավարական զգային հետազոտություններ, Հատոր 3, Երևան, 2014, համահեղինակ և խմբագրական խորհրդի նախագահ, 614 էջ:
80. ՀՀ պաշտպանության նախարարություն: Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ: Ռազմավարական ազգային հետազոտություններ, Հատոր 4, Երևան, 2014, համահեղինակ և Խմբագրական խորհրդի նախագահ, 709 էջ:
81. Նիկոլայ Հովհաննիսյան, Աշոտ Ղուկասյան, Հարություն Ալեքսանյան, Համաշխարհային պատմություն. 9-րդ դասարան: Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից: (Ն. Հովհաննիսյանի մասը՝ Ներածություն, I բաժին, պար. 1-4, 6-12, II բաժին, պար. 13-14, 17-21, III բաժին , պար. 22-25): Խմբագիր՝ Նիկոլայ Հովհաննիսյան: «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, Երևան, 2014, 191 էջ:
82. Նիկոլայ Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից (հայերեն, ռուսերեն, անգլերեն), Երևան, 2015, 175 էջ:

ՊՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ

Ականավոր գիտնական, արևելագետ, արաբագետ և միջազգայնագետ Նիկոլայ Հովհաննիսյանը, որի գիտական վիթխարի և ծանրակշիռ վաստակի մասին կխոսվի հաջորդ էջերում, արժանացել է բազմաթիվ գիտական աստիճանների և կոչումների:

Գիտական աստիճաններ և կոչումներ

1958 թ. - Պատմական գիտությունների թեկնածու: Ատենախոսությունը՝ նվիրված «Հայերի իրավիճակը 1907-1914 թթ.» հիմնախնդրին, պաշտպանել է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդում:

1968 թ. - Պատմական գիտությունների դոկտոր: Ատենախոսության թեման՝ «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում (1917-1958 թթ.)»: Պաշտպանվել է Թբիլիսիի պետական համալսարանի գիտական խորհրդում և հաստատվել ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից: Նա դառնում է արաբական երկրների նոր և նորագույն պատմության գծով առաջին դոկտորը Խորհրդային Միությունում:

1972 թ. - Պրոֆեսոր, կոչումը շնորհվել է ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից:

2003 թ. - Գիտությունների վաստակավոր գործիչ:

2003 թ. - Ազգային անվտանգության հիմնախնդիրների համահայկական (Panarmenian) ակադեմիայի անդամ:

2006 թ. - Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

2010 թ. - Շնորհվել է «Գյումրիի պատվավոր քաղաքացի» պատվավոր կոչումը:
2010 թ. - Շնորհվել է «Եվրասիական միության պետությունների պատվավոր քաղաքացի» (Почетный гражданин Евразийского Союза Государств) կոչումը:

Արտասահմանյան ակադեմիաներին անդամակցություն
Ընտրվել է.
1997 թ. - Փարիզի «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ
1999 թ. - Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի անդամ
1999 թ. - Մոսկվայի Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ
2005 թ. - Գերմանիայի Բնության և հասարակության գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ
2013 թ. - Մոսկվայի Համաշխարհային մարդկության հոգևոր միասնության և համագործակցության միջազգային ակադեմիայի անդամ
2016 թ. - Կանադայի Միջազգային ինֆորմացման ակադեմիայի անդամ

Միջազգային գիտական ասոցիացիաներին և միություններին անդամակցություն
1985 թ. - Սիրիայի արաբական գիտության պատմության միության անդամ
2002 թ. - Հյուսիսային Կարոլինայի կենսագրական ինստիտուտի հետազոտական միության անդամ-խորհրդական, ԱՄՆ
2002 թ. - ԱՄՆ-ի Ազգային աշխարհագրական ընկերության անդամ

2005 թ. - Ցեղասպանության միջազգային ասոցիացիայի անդամ, Ֆլորիդա, ԱՄՆ
2011 թ. - Հայաստանի քաղաքական գիտությունների ասոցիացիայի անդամ

Քեմբրիջ, Անգլիա, Միջազգային կենսագրական կենտրոնի (IBC) կողմից շնորհված գիտական կոչումներ և աստիճաններ
2004 թ. սեպտեմբերի 3-ին - Տարվա միջազգային գիտնական
2004 թ. հոկտեմբերի 1-ին - Մտցվել է Քեմբրիջի Կապույտ գրքի մեջ
2004 թ. հոկտեմբերի 15-ին - Մտցվել է Միջազգային կենսագրական բառարանի 32-րդ հրատարակության մեջ
2004 թ. դեկտեմբերի 3-ին - 21-րդ դարի ականավոր գիտնական
2005 թ. հունվարի 14-ին - Աշխարհի առաջատար գիտնական
2009 թ. հունիսի 26-ին - Մտցվել է 100 Բարձրագույն (Top) գիտնականների ցանկում
2009 թ. օգոստոսի 7-ին - Ճանաչվել է 2008-2009 թթ. ականավոր գիտնական
2009 թ. սեպտեմբերի 18-ին - Էյնշտեյնի Միջազգային մրցանակ՝ գիտական նվաճումների համար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան, 10 հունիսի 2015թ.

ՊԱՏՄԱԲԱՆ, ԱՐԵՎԵԼԱԳԵՏ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ ծննդյան 85-րդ տարեդարձի կապակցությամբ:

Դուք մեծ ավանդ եք ներդրել հայ պատմագրության զարգացման, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի պատմության, Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզներում:

Նշանակալի է Ձեր վաստակը արաբագիտության հայկական դպրոցի կայացման և միջազգային հեղինակության բարձրացման, արևելագետների նոր սերունդներ կրթելու և դաստիարակելու գործում:

Մաղթում եմ Ձեզ առողջություն, անսպառ եռանդ և գիտական ու մանկավարժական երկարատև հաջողություններ:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ «ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածի 17-րդ կետով և հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարգևների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը մատուցած ծառայությունների համար և ծննդյան 85-ամյակի կապակցությամբ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանին պարգևատրել «Երախտագիտություն» մեդալով:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

2015 թ. հոկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՆՀ-102-Ա

ՍՈՒՐԲ ԱՌԱՔԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պապու-ոյ բարյոր շէանշանը:

Ի խորոց սրտի աղօթիով բարեմաղթու-մ ենք, որ Երկնաւորը Տէրը Իր Հայրական սիրոյ և խնամքի մէջ միշտ ճաշակողք ու- երջանիկ պահի ու- պահպանի Ձեզ և Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգևելով ամենայն բարիք և գորժոց յարատևորոգ յաջողու-թի-ններ:

Ողջ լերու-ք ի Տէր, կօրհնեալ շնորհօք Սու-րբ Հոգ-ոյն և յաւէտ օրհնեալ Մէնք. ամէն:

Օրհնու-թեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Փետրուարի յամի Տեառն 2016 և ի թուին հայոց ՌՆԿԵ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 945

Նիկոլայ Հովհաննիսյանը պարգևատրվել է՝

Մովսես Խորենացի մեդալով
ՀՀ Պաշտպանության նախարարության «Սպարապետ Վազգեն Սարգսյան» մեդալով
ՀՀ Պաշտպանության նախարարության «Հայկական զինված ուժեր. 1992-2012» մեդալով
«Բարեկամության բնագավառում ներդրման համար» (Մոսկվա) մեդալով
ՀՀ Կառավարության «Հայոց Մեծ Եղեռն» ոսկեզօծ մեդալով
Ֆրիտյոֆ Նանսեն հուշամեդալով
ԼՂՀ «Ղարաբաղյան Շարժում» մեդալով
ՀՀ ԳԱԱ Գովեստագրով
ՀՀ Ազգային Ժողովի նախագահի Պատվոգրով
«Հայաստան-Եգիպտոս. դիվանագիտական հարաբերություններ. 15 տարի. Բարեկամություն և Համագործակցություն» մեդալով
Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ պատվո շքանշանով
Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված հոբելյանական մեդալով
ԼՂՀ նախագահի «Երախտագիտություն» մեդալով
«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով
Նիկոլայ Հովհաննիսյանին շնորհվել է նաև Գյումրու պատվավոր քաղաքացի կոչումը

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
արաբական երկրների բաժնի վարիչ,
պ.գ.թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ ՊՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը ծնվել է 1930 թ. հունիսի 10-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1953 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, իսկ 1956 թ.՝ ասպիրանտուրան: 1968 թ. ստացել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1971 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 2006 թ. ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ: Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ է: Պրոֆ. Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի և արդի հայ արևելագիտության հիմնադիրներից ու ղեկավարներից մեկն է: Նրա ջանքերով Հայաստանում հիմնադրվեց, կայացավ և արևելագիտության ոլորտում իր ուրույն տեղը զբաղեցրեց հայ արաբագիտությունը: Նա մինչ օրս էլ ՀՀ-ում արաբագիտության պատմագիտական դպրոցի կարևոր հիմնասյուներից և ղեկավարներից մեկն է և ավելի քան քառասուն տարի (1962-2003 թթ.) գլխավորել է արաբական երկրների բաժինը: 1995-2006 թթ. պրոֆ. Հովհաննիսյանը եղել է Արևելագիտության ինստիտուտի տնօրենը: Գիտության համար այդ ոչ նպաստավոր ժամանակաշրջանում նրան հաջողվեց ոչ միայն պահպանել հայ արևելագիտական դպրոցն ու նրա ձեռքբերումները, այլև այն համալրել երիտասարդ և

խոստումնալից կադրերով, որոնք այսօր կազմում են մեր ինստիտուտի գիտական կորիզը: Նրա ղեկավարման տարիներին Արևելագիտության ինստիտուտը դարձավ կարևոր գիտական կենտրոններից մեկը՝ իրականացնելով նաև ռազմավարական առաքելություն: 2003 թ. Նիկոլայ Հովհաննիսյանը ստանձնեց նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի տեղակալի պարտականությունները: Զգալի է նաև նրա դերակատարումն Արևելագիտության ինստիտուտի Արևելյան Ասիայի երկրների, ինչպես նաև Մերձավոր ու Միջին Արևելքի միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրությունների բաժինների կազմավորման և կայացման գործում: Ն. Հովհաննիսյանը 2006 թ.-ից ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական և Մերձավոր ու Միջին Արևելքի միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների բաժնի վարիչն է, իսկ 2007 թ.-ից նաև ՀՀ պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդականն է:

Զգալի են Ն. Հովհաննիսյանի գիտական վաստակը և ներդրումը համաշխարհային արաբագիտության զարգացման բնագավառում: Վստահորեն կարող ենք փաստել, որ նաև պրոֆ. Հովհաննիսյանի բեղուն գիտական գործունեության արդյունքում հայ արաբագիտությունը դարձել է համաշխարհային արաբագիտության կարևոր բաղադրիչը: Նրա ուսումնասիրությունները համալրում, լրացնում և հարստացնում են համաշխարհային արևելագիտության ձեռքբերումները: Նիկոլայ Հովհաննիսյանն իր «Հայ արևելագիտությունը համաշխարհային արևելագիտության համատեքստում (մինչխորհրդային ժամանակաշրջան)» հոդվածում նշում է. «Հայ արևելագիտությունը բացառիկ նշանակություն է ունեցել համաշխարհային արևելագիտության համատեքստում: Նա կախված չի եղել արևելագիտական այլ դպրոցներից, իսկ

շփումները նրանց միջև չեն եղել «գերակայի և ստորադասի» հարաբերություններ: Հայ արևելագետներն արևելագիտական կլոր սեղանի շուրջ նստել են հավասարազոր իրավունքներով՝ երբեմն նաև ստանձնելով առաջանցիկ դեր՝ հավասար քայլելով եվրոպական և ռուսական արևելագիտական դպրոցների հետ»[1]:

Տասնյակ տարիներ ականավոր արևելագետ-միջազգայնագետի ուսումնասիրությունների կենտրոնում դրված են արաբական երկրների նորագույն պատմության, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների, «քաղաքական իսլամի», հայ-արաբական, այդ թվում նաև միջպետական հարաբերությունների արդիական հիմնախնդիրները: Նա առաջիններից էր, ով անդրադարձավ արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությանը և ընթերցողի սեղանին դրեց այնպիսի արժեքավոր մենագրական ուսումնասիրություններ, ինչպես՝ «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում» (Երևան, 1963 թ., հայերեն և Բեյրութ, 1974 թ., արաբերեն), «Սիրիական անկախ հանրապետության ստեղծումը» (Մոսկվա, 1968 թ., ռուսերեն), «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում» (Երևան, 1976 թ., ռուսերեն), «Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982 թթ.)», Երևան, 1982 թ. և այլն:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանը ԽՍՀՄ-ում առաջիններից մեկն էր, ով միջարաբական հարաբերությունները սկսեց դիտարկել իբրև միջազգային հարաբերությունների ուսումնասիրության առանձին և կարևոր բաղադրիչ: Իր աշակերտների հետ միասին նա սկսեց ուսումնասիրել այդ բարդ հիմնախնդիրը, որի արդյունքը դարձավ թեմատիկ առումով նրա

---

[1] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Հայ արևելագիտությունը համաշխարհային արևելագիտության համատեքստում (մինչխորհրդային ժամանակաշրջան), «Պատմաբանասիրական հանդես», 2(193), Երևան, 2013, էջ 66-106:

եզակի մենագրությունը՝ «Իրաքի Հանրապետության հարաբերություններն Արաբական Արևելքի երկրների հետ» (Երևան, 1985 թ., ռուսերեն):

Մեր սիրելի ուսուցիչը լուրջ ներդրում է ունեցել նաև «քաղաքական իսլամի», մասնավորապես «Իսլամի քաղաքականացման և քաղաքականության իսլամացման» հայեցակարգի մշակման գործում: Նիկոլայ Հովհաննիսյանի ղեկավարությամբ հայ արաբագետները Խորհրդային Միությունում առաջիններից էին, որ իրենց ուսումնասիրություններում կենտրոնական տեղ հատկացրին իսլամի ակտիվացմանն ու դրա դրդապատճառների ուսումնասիրությանը: Արդյունքում տպագրվեց «Իսլամն արդի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների քաղաքական կյանքում» հեղինակային կոլեկտիվ աշխատությունը (պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի ղեկավարությամբ)[2]: Հաշվի առնելով նրա ծառայություններն իսլամագիտության բնագավառում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը 1985 թ. Ն. Հովհաննիսյանին նշանակեց Հայաստանում իսլամագիտական ուսումնասիրությունների համակարգող:

Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրություններում կարևոր տեղ է զբաղեցնում նրա «Արաբական երկրների պատմություն (VII դ. - 2005 թ.)» քառահատոր աշխատությունը[3],

---

[2]Активизация ислама: характер, специфика и последствия, – Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока. (коллектив авторов). Ер., 1986.

[3] Նիկոլայ Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն. Արաբները VII դարից մինչև 1516թ., հ. I, Երևան, 2003, 418 էջ, Արաբական երկրների պատմություն. Օսմանյան տիրապետության շրջան. 1516-1918, հ. II, Երևան, 2004, 677 էջ, Արաբական երկրների պատմություն. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918-2005 թթ., Ալժիր, ԱՄԷ, Բահրեյն, Եգիպտոս, Եմեն, Թունիս, Իրաք, Լիբանան, Լիբիա, Կատար, հ. III, Երևան, 2006, 840 էջ, Արաբական երկրների պատմություն. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918-2005 թթ., Հորդանան, Մավրիտանիա,

որը բացառիկ է իր նշանակությամբ: Պատահական չէ, որ այս լայնածավալ աշխատանքը 2007 թ. արժանացավ ՀՀ նախագահի մրցանակին, իսկ 2011 թ. թարգմանվեց արաբերեն և հրատարակվեց Հալեպում՝ իր տեղը գրավելով նաև արաբալեզու պատմագրության մեջ:

Ն. Հովհաննիսյանի ջանքերով և ակտիվ մասնակցությամբ Արևելագիտության ինստիտուտում ձևավորվեց արաբագիտական տարբեր գիտաժողովներ անցկացնելու ավանդույթը, որն այսօր շարունակում է ինստիտուտի ներկայիս տնօրեն ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը: Մասնավորապես կցանկանայի անդրադառնալ 1985 թ. Երևանում անցկացված խորհրդային արաբագետների 4-րդ համամիութենական համաժողովին՝ Արաբական երկրների ժամանակակից քաղաքական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները խորագրով, որին մասնակցում էին Խորհրդային Միության մի շարք առաջատար արաբագետներ (Ե. Լեբեդև, Ն. Հովհաննիսյան, Ռ. Անդրեասյան, Օ. Կաջայա, Գ. Միրսկի, Է. Փիր-Բուդաղովա, Ե. Պիրլին և այլք): Այն խորհրդային արաբագետների վերջին գիտաժողովն էր, որի զեկուցումները տպագրվել են Երևանում 1988 թ.[4]: Գիտաժողովի ավարտին մասնակիցների ընդունած որոշման մեջ ամրագրված է. «Գիտաժողովը փաստում է, որ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևանում բազմիցս կազմակերպվող արաբագիտական տարբեր գիտաժողովների անցկացումը վկայում է, որ Հայաստանում գոյություն ունի արաբագիտական բարձր մակարդակի դպրոց, ինչպես նաև աղբյուրագիտական հա-

---

Մարոկկո, Պաղեստինի Ինքնավարություն, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Սուդան, Քուվեյթ, Օման, հ. IV, Երևան, 2007, 767 էջ:

[4] Изучение новой и новейшей истории арабских стран между III и IV Всесоюзними конференциями арабистов (1969-1985 гг.) – в книге "Современные политические и социально-экономические проблемы арабских стран", I. Ереван, 1988.

մապատասխան հենք և բարձրորակ կադրեր, որը բացատրվում է ինչպես հանրապետությունում արևելագիտության ընդհանուր զարգացվածությամբ, այնպես էլ հայ-արաբական տարաբնույթ պատմական և մշակութային կապերի առկայությամբ»[5]:

Նիկոլայ Հովհաննիսյանի ուսումնասիրությունների շրջանակից դուրս չեն մնացել նաև էթնոքաղաքական հակամարտությունների, այդ թվում և Ղարաբաղյան հիմնախնդրի հետազոտությունը, ինչպես՝ «Ղարաբաղյան հիմնախնդիրը. անկախության և ազատության փշե ճանապարհը» (Երևան, Վենետիկ, անգլերեն, Հռոմ, իտալերեն), ԱՄՆ-ում՝ Մերիլենդի համալսարանում, հրատարակված «Էթնոքաղաքական առճակատումներն Անդրկովկասում. նրանց արմատները և լուծումները» և այլն:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում մշտապես եղել է նաև Հայոց ցեղասպանության հայեցակարգային հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որին նվիրված է նրա հետազոտությունների մի ամբողջ շարք: Այդ տեսանկյունից կցանկանայինք նշել «Հայոց ցեղասպանություն. հայասպանությունը որպես ամենագենոցիդային գենոցիդ. Աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն, հունգարերեն, ճապոներեն, հայերեն, արաբերեն, պարսկերեն» բազմապլանային հետազոտությունը, որին ավելի ուշ ավելացան նաև կորեերեն և ռումիներեն լեզուներով հրատարակությունները: Այս հիմնարար աշխատանքն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության առաջին կարգի դիպլոմի: Նիկոլայ Հովհաննիսյանի ջանքերով միջազգային լայն տարա-

---

[5]Նույն տեղում, էջ 280:

ծում է ստացել «Արմենոցիդ» եզրը՝ որպես «Հայասպանության» հոմանիշ[6]:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի հրատարակած աշխատությունների թիվն անցնում է 540-ից, որից ավելի քան 80-ը մենագրական ուսումնասիրություններ են[7]: Միայն 2015 թ. նա հրատարակել է 3 մենագրություն[8]: Նա արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ է, այդ թվում՝ Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի, Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, Գերմանիայի Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի, Մոսկվայի Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի, Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի (Մոսկվա), Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերության, ԱՄՆ-ի Ազգային աշխարհագրական ընկերության, Ցեղասպանագիտության միջազգային ասոցիացիայի և այլն: 1989 թ. Բրիտանական ակադեմիայի հրավերով նա գիտական ուսումնասիրություններ է իրականացրել Լոնդոնի, Օքսֆորդի և Էդինբուրգի համալսարաններում, Ֆուլբրայթի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 1993-1994 թթ. գիտահետազոտական աշխատանքներ է կատարել ԱՄՆ-ի Ջորջ Վաշինգտոնի հա-

---

[6] Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, «Զանգակ-97», 2010, 263 էջ:

[7] Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատությունների ցանկը տե՛ս https://nhovhannisyan.wordpress.com/published-works/.

[8] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հեռանկարները, Երևան, 2015, էջ 52, Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից (հայերեն, ռուսերեն, անգլերեն), Երևան, 2015, 175 էջ, Հայոց ցեղասպանությունն արաբական պատմագրության քննական լույսի ներքո, որն արաբերենով վերահրատարակվել է Հալեպում 2015 թ.:

մալսարանում, իսկ 1995 թ.՝ Մերիլենդի համալսարանում, ապա նաև Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի և Իրաքի գիտական հաստատություններում:

Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական ղեկավարությամբ մոտ 50 պատմաբաններ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, այդ թվում՝ Սիրիայից, Եգիպտոսից, Լիբանանից, Հորդանանից, Իրանից, Վրաստանից, Ռուսաստանից և արտասահմանյան այլ երկրներից: Մեծ է նրա դերն արաբագետների մի քանի սերունդների պատրաստման գործում: Ն. Հովհաննիսյանի աշակերտներից շատերն այսօր իրենց աշխատանքն են շարունակում նաև ՀՀ պետական մարմիններում, մասնավորապես արտաքին գործերի նախարարությունում և այլ դիվանագիտական հաստատություններում: Նրանց գիտելիքներն ու փորձը մեծապես օգտագործվում են պետական տարբեր մարմիններում:

Կառավարական պաշտոնական պատվիրակությունների կազմում պրոֆ. Ն. Հովհաննիսյանն այցելել է Լիբանան, Սիրիա, Իրաք, Հորդանան, Լիբիա, Հնդկաստան, Չինաստան և այլ երկրներ, մասնակցել Իրաքի նախագահ Ահմադ Հասան՝ Ալ-Բաքրի, Սիրիայի նախագահ Հաֆիզ Ասադի, Լիբանանի նախագահ Սուլեյման Ֆրանժիեի և վարչապետ Ռաշիդ Սոլհի, Պաղեստինի ազատագրության կազմակերպության ղեկավար Յասիր Արաֆաթի, Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարար և Հեղափոխական խորհրդի նախագահ, այաթոլլահ Խոմեյնիի հատուկ ներկայացուցիչ Մուստաֆա Չամրանի և այլ երկրների բարձրաստիճան պետական այրերի հետ բանակցություններին:

Զգալի է նաև Նիկոլայ Հովհաննիսյանի ներդրումը հասարակական ոլորտում: Նա զբաղեցրել է խորհրդա-արաբական բարեկամության և մշակութային կապերի ասոցիա-

ցիայի փոխնախագահի պաշտոնը, եղել է Ասիայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի և նրա վարչության անդամ, Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ, «ԽՍՀՄ-Իրաք» բարեկամության ընկերության փոխնախագահ, «ԽՍՀՄ-Լիբանան», «ԽՍՀՄ-ԵԺԴՀ» բարեկամության ընկերությունների վարչությունների անդամ և այլն: 1975 թ. Լիբանանում բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմի տարիներին, երբ լիբանանահայ համայնքը կանգնած էր լուրջ մարտահրավերների առջև, պրոֆ. Հովհաննիսյանը Խորհրդային Հայաստանից Լիբանան մեկնած պատվիրակության կազմում ակտիվ դերակատարում է ունեցել համայնքին ցուցաբերած աջակցության կազմակերպման և դրա գոյության համար բարենպաստ քաղաքական մթնոլորտի ձևավորման գործում: Այս կապակցությամբ կցանկանայի ներկայացնել ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար (1974-1988 թթ.) Կարեն Դեմիրճյանի անտիպ գրառումներում Ն. Հովհաննիսյանին նվիրված հատվածը (որը Կարեն Դեմիրճյանի այրին՝ Ռիմա Դեմիրճյանը, փոխանցել է Ն. Հովհաննիսյանին): «Հայաստանի Հանրապետություն» թերթում (20 օգոստոս, 1991 թ.) հրատարակված է Ն. Հովհաննիսյանի հոդվածը՝ «Մի դրվագ հայերի հանդեպ այաթոլլահ Խոմեյնիի դիրքորոշումից»: Այդտեղ ասվում է, որ 1978 թ. Լիբանանում դեռևս 1976 թ. սկսված քաղաքացիական պատերազմը հասել էր իր բարձր լարվածությանը, լիբանանյան աջ ուժերն ուղղակի ճակատային հարձակում սկսեցին լիբանանահայ համայնքի նկատմամբ, որը որդեգրել էր դրական չեզոքության քաղաքականություն: «Իրավիճակին ծանոթանալու և լիբանանահայությանն անհրաժեշտ օգնություն տրամադրելու նպատակով Հայաստանի կառավարության որոշմամբ 1979 թ. հունվարին Լիբանան մեկնեց պատվիրակություն, որի կազմում էր նաև տողերիս հեղինակը (Ն. Հովհաննիսյանը-Լ.Հ.): Պատվիրակությունը հաջողությամբ լուծեց իր

առջև դրված խնդիրները: Բավական է նշել, որ մեկ ամսվա ընթացքում Հայաստանից Բեյրութ ուղևորվեց շուրջ 30 տրանսպորտային ինքնաթիռ, որը Լիբանան հասցրեց պարեն, հագուստ, դեղորայք և այլ անհրաժեշտ իրեր»:

Կարեն Դեմիրճյանը նշում է. «Ն. Հովհաննիսյանին մենք գործուղեցինք Լիբանան (այդ պատրվակի տակ նա պետք է այցելեր նաև Մերձավոր Արևելքի այլ երկրներ)՝ ավելի լայն շրջանակների խնդիրներ լուծելու համար (օգտագործելով նրա լայն կապերն այդ ռեգիոնի շատ հասարակական գործիչների հետ): Այնպես որ նա պատվիրակության կազմում ընդգրկված էր հատուկ նպատակների համար: Եվ ի պատիվ իրեն պետք է ասել, որ նա հենց հատուկ առաջադրանքները կատարեց բավական հաջող: Մեզ, Հայաստանի ղեկավարությանը, շատ էր հետաքրքրում նաև Խոմեյնիի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ն. Հովհաննիսյանն, իրոք, լուրջ աշխատանք տանելով Իրանի տարբեր շրջանակների (հասարակական գործիչների) հետ, մեզ հաղորդեց, որ այաթոլլահ Խոմեյնին կվարի հայանպաստ քաղաքականություն: Հենց այդ հոդվածում նա (Ն. Հովհաննիսյանը - Լ.Հ.) գրում է. «Իմ այն հարցին, թե կարող եմ այաթոլլահ Խոմեյնիի կարծիքի մասին տեղյակ պահել Հայաստանի բնակչությանն ու ղեկավարությանը, այաթոլլահ Խոմեյնիի հատուկ ներկայացուցիչ Մուստաֆա Չամրանը (հետագայում՝ Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարար և Հեղափոխական խորհրդի նախագահ) պատասխանեց, որ ոչ միայն կարող եմ, այլև դա այաթոլլահ Խոմեյնիի ցանկությունն է: Ն. Հովհաննիսյանը մեր իսկ առաջադրանքով Մուստաֆա Չամրանի հետ զրույցում շոշափել է նաև գազի մատակարարման հարցը և ստացել դրական պատասխան՝ 1979 թ. Հայաստան գազ մղելու մասին»:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը պարգևատրվել է Մովսես Խորենացու, ՀՀ պաշտպանության նախարարության

«Սպարապետ Վազգեն Սարգսյան» և «Հայկական զինված ուժեր. 1992-2012», «Բարեկամության բնագավառում ներդրման համար» (Մոսկվա) մեդալներով, ՀՀ կառավարության «Հայոց Մեծ Եղեռն» ոսկեզօծ մեդալով, Ֆրիտյոֆ Նանսեն հուշամեդալով, ԼՂՀ «Ղարաբաղյան Շարժում» մեդալով, ՀՀ ԳԱԱ գովեստագրով, ՀՀ Ազգային ժողովի նախագահի պատվոգրով, «Հայաստան-Եգիպտոս. Դիվանագիտական հարաբերություններ. 15 տարի. Բարեկամություն և Համագործակցություն» մեդալով: 2015 թ. ծննդյան 85-ամյակի կապակցությամբ պրոֆ. Հովհաննիսյանին ուղերձ է հղել նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, որում բարձր է գնահատել վերջինիս ավանդը հայ պատմագրության զարգացման, մասնավորապես Մերձավոր Արևելքի պատմության, Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների ասպարեզում: Առանձին հոդվածով Ն. Հովհաննիսյանին շնորհավորել է նաև ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Վերջինս ևս բարձր է գնահատել պրոֆեսորի ներդրումը հայ արևելագիտության և հատկապես արաբագիտության կայացման գործում: 2015 թ. Արևելագիտության ինստիտուտը Ն. Հովհաննիսյանին շնորհեց շնորհակալագիր՝ ընդգծելով վերջինիս ներդրումը համայն աշխարհում հայրենական արևելագիտության մասնագիտական համբավի տարածման գործում: 2015 թ. հոկտեմբերի 28-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հրամանով ծննդյան 85-ամյակի կապակցությամբ և ԼՂՀ-ին մատուցած ծառայությունների համար Նիկոլայ Հովհաննիսյանը պարգևատրվեց «Երախտագիտություն» մեդալով: 2016 թ. հունվարի 23-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը պարգևատրվեց նաև 2-րդ աստիճանի մեդալով, որը նրան հանձնեց ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Քեմբրիջի (Անգլիա) Միջազգային Կենսագրական Կենտրոնը հայ մեծանուն գիտնականին 2004 թ. հռչակել է «Աշխարհի առաջատար գիտնական», 2005-ին՝ ճանաչել «XXI դարի ականավոր գիտնական», իսկ 2009 թ.՝ ներառել «100 բարձրակարգ գիտնականների» ցանկում:

Ամփոփելով ցանկանում եմ իմ բոլոր գործընկերների անունից կրկին շնորհավորել մեր սիրելի ուսուցչին, ցանկանալ քաջառողջություն և նորանոր գիտական աշխատություններ, որոնք կհարստացնեն ու կհամալրեն համաշխարհային արևելագիտության ձեռքբերումները:

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ԿԱՊԻՏԱԼ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2004-2007 թթ. պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, միջազգային մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ, հայ արաբագիտության դպրոցի հիմնադիր, միջազգային մեծ ճանաչում ունեցող արևելագետ-պատմաբան Նիկոլայ Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմություն» քառահատորյակի լույսընծայումը դարձավ խոշոր իրադարձություն ոչ միայն հայ, այլև համաշխարհային արևելագիտության համար: Դա արևելագիտության պատմության մեջ իր նախադեպը չունեցող կոթողային աշխատանք է, որի նմանը չունեն մյուս ժողովուրդները, այդ թվում նաև իրենք՝ արաբները: Աշխատությունը նոր խոսք է գիտության այդ կարևոր ճյուղի բնագավառում, որն այս տարիների ընթացքում արդեն դարձել է սեղանի գիրք ոչ միայն արաբագետների և արևելագետների, այլև լայն առումով քաղաքագետների, միջազգայնագետների ու քաղաքական գործիչների, պատմաբանների ու սոցիոլոգների, ազգագրագետների, կրոնագետների և այլ մասնագետների համար: Հեղինակը համարձակ և լուրջ քայլ է կատարել՝ չորս հատորներում ընդգրկելով ողջ արաբական աշխարհի պատմությունը՝ սկսած VII դարից մինչև մեր օրերը: Գիտական բարձր մակարդակով գրված այս աշխատությունը, որը կառուցված է բազմալեզու աղբյուրագիտական ընդարձակ հենքի վրա, իր տեսակի մեջ առաջին և դասական ուսումնասիրությունն է: Այն հեղինակի ավելի քան

կեսդարյա գիտական տքնաջան պրպտումների և տիտանական աշխատանքի արգասիքն է: Նման աշխատություն կարող էր գրել միայն տասնամյակների ընթացքում գիտահետազոտական աշխատանքի բովում իմաստնացած մասնագետը:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն իրեն հատուկ խորաթափանցությամբ, պատմության առանցքային հարցերի նկատմամբ իր քննական-վերլուծական մոտեցմամբ նորովի է մեկնաբանում բազմաթիվ հանգուցային հիմնախնդիրներ, վերանայում է հնացած և պատմության քննությանը չդիմացած տարբեր հարցադրումներ և ասում իր փաստարկված խոսքը՝ հիմնված բազմաթիվ հայկական, արաբական, անգլիական և ռուսական սկզբնաղբյուրների փայլուն իմացության վրա:

Այս կապիտալ ուսումնասիրության առաջին երկու հատորները նվիրված են արաբական աշխարհի միջնադարյան և նոր պատմությանը: Այստեղ լավագույնս վերլուծության են ենթարկվել ջահիլիայի շրջանը, իսլամի ծագման սոցիալական և կրոնաքաղաքական նախադրյալները, արաբական առաջին արշավանքները, արաբական աշխարհակալության՝ խալիֆայության ձևավորումը, հաստատումը և նվաճումները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված այնպիսի բարդ հիմնախնդրի լուսաբանմանը, ինչպես արաբամուսուլմանական քաղաքակրթության ձևավորումը և նրա տեղը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Հեղինակը մանրակրկիտ անդրադարձել է խալիֆայության հպատակ երկրների և ժողովուրդների մղած ազատագրական պայքարին, խալիֆայության հզորության աստիճանական անկմանը, բազմապիսի անկախ և կիսանկախ իշխանությունների՝ պատմության թատերաբեմում հայտնվելուն, տարբեր ռազմաքաղաքական կազմավորումների հարաբերություններին ու հակասություններին: Ապա ներկայացված է արաբական աշխար-

հում Օսմանյան կայսրության տիրապետության 400-ամյա ժամանակաշրջանը, որը, ինչպես համոզիչ կերպով ցույց է տրված, արաբների պատմության մեջ մտել է որպես զուլումի դարաշրջան, արաբական ազգային զարթոնքը, պայքարը հանուն ազատության և անկախության ձեռքբերման, Առաջին համաշխարհային պատերազմի ազդեցությունը և հետևանքներն արաբ ժողովրդի ճակատագրում: Հատուկ ուշադրություն է դարձված արաբամուսուլմանական մշակութային ժառանգությանը և նրա թողած ազդեցությանը համաշխարհային մշակույթի զարգացման վրա:

Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի այս աշխատության երրորդ և չորրորդ հատորներն ընդգրկում են արաբական երկրների պատմության նորագույն շրջանը՝ 1918 թ. Օսմանյան կայսրության անկումից մինչև մեր օրերը: Հեղինակը հերթականությամբ ներկայացրել է Ալժիրի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի, Եգիպտոսի, Եմենի, Թունիսի, Իրաքի, Լիբանանի, Լիբիայի, Կատարի, Հորդանանի, Մավրիտանիայի, Մարոկկոյի, Պաղեստինի Ինքնավարության, Սաուդյան Արաբիայի, Սիրիայի, Սուդանի, Քուվեյթի և Օմանի տվյալ ժամանակաշրջանի պատմությունը, լուսաբանել կարևոր ռազմաքաղաքական իրադարձությունները, ազգային-ազատագրական շարժումները, արաբական երկրների անկախության նվաճման ընթացքը, սոցիալ-տնտեսական զարգացումները և այլն: Ընդհանրապես քառահատորյակն իր կառուցվածքով բազմապլանային է: Դրանում քննարկվում են քաղաքական, դինաստիական, կրոնագիտական, սոցիալական, տնտեսական հիմնահարցեր, առանձին բաժիններ են նվիրված արաբամուսուլմանական քաղաքակրթության ձևավորմանը, նրա էության և օրինաչափությունների բացահայտմանը, սահմանված են արաբների տեղը և դերը համաշխարհային պատմության մեջ: Դա մի եզակի, արաբագիտության մեջ իր նախադեպը չունեցող կապիտալ հետազո-

տություն է, որն ապշեցնում է իր լայնածավալ ընդգրկումով, հարցերի լուսաբանման խորությամբ և հեղինակային խոսքի հիմնավորությամբ ու ինքնատիպությամբ: Ընթերցողն այս բացառիկ աշխատության մեջ կգտնի իրեն հետաքրքրող շատ հարցերի պատասխաններ, ձեռք կբերի նոր գիտելիքներ մեր պատմական հարևան արաբների պատմության վերաբերյալ:

Այդ կապակցությամբ կցանկանայինք նշել աշխատության բազում արժանիքներից մեկը, որն ունի սկզբունքային նշանակություն: Հակառակ գոյություն ունեցող ավանդության՝ պրոֆ. Ն. Հովհաննիսյանն իր ուսումնասիրության մեջ արաբական աշխարին ընդգրկել է ամբողջությամբ՝ չտրոհելով առանձին հատվածների՝ Մաշրիկի՝ Արաբական Արևելքի, և Մաղրիբի՝ Արաբական Արևմուտքի: Դրա շնորհիվ արաբական աշխարին ընկալվում է որպես մեկ ամբողջություն, որպես մեկ ընդհանուր երևույթ, որը հնարավորություն է տալիս ավելի հստակ և հավաստի պատկերացում կազմելու Ատլանտյան օվկիանոսից մինչև Հնդկական օվկիանոս ձգվող այդ լայնածավալ աշխարհի, նրանում տեղի ունեցող պատմական, քաղաքական, տնտեսական և մշակութային խմորումների, երևույթների և իրադարձությունների մասին: Արաբական երկրները Հայաստանի մերձավոր հարևաններն են, և մենք պատկանում ենք միևնույն՝ մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանին: Հայ ժողովրդի պատմությունը սերտորեն կապված է Արաբական Արևելքի պատմության հետ թե՛ Արաբական խալիֆայության շրջանում, թե՛ օսմանյան տիրապետության ժամանակ, երբ արաբները և հայերը գտնվում էին միևնույն դաժան լծի ներքո և դարձել էին բախտակից ժողովուրդներ, և թե՛ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մասնավորապես Հայոց ցեղասպանության ընթացքում, երբ արաբները, որոնց գլխին նույնպես կախված էր կոտորվելու իրական վտանգը, օգնության ձեռք մեկնեցին հայ տարագիրներին:

Քառահատորյակի կարևորագույն արժանիքներից է նաև այն, որ նրանում արաբական երկրների համար կարևորագույն իրադարձությունները սերտորեն միահյուսված են հայ ժողովրդի պատմության հետ: Եվ այս առումով միանգամայն տեղին վեր է հանվում այն մեծ դերակատարումը, որ դարերի ընթացքում ունեցել են հայերն արաբական երկրների պատմության մեջ, այդ երկրների կառավարման համակարգում, որը պատմական որոշ դարաշրջաններում անգամ եղել է վճռորոշ, ինչպես Ֆաթիմյան խալիֆայության, Նահդայի, Մուհամմադ Ալի կառավարման, Լիբանանի մութասարիֆության, արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների և այլ շրջաններում: Մինչև այս աշխատության լույս-ընծայումը դեռ ոչ ոք այդ հարցն այդպիսի խորությամբ և ամբողջությամբ չէր լուսաբանել: Էլ չենք խոսում այն մասին, որ օտար շատ հեղինակներ, միտումնավոր թե պատահականորեն, շատ հաճախ անտեսում են հայերի դերը, անգամ չեն հիշատակում այդ մասին:

Անհրաժեշտ է նաև նշել, որ առաջին անգամ հեղինակը հանգամանորեն լուսաբանել է նաև նորանկախ Հայաստանի և արաբական երկրների միջպետական հարաբերությունները: Թեև Հայաստանի անկախության հռչակումից և արաբական երկրների հետ միջպետական հարաբերությունների հաստատումից հետո այնքան էլ երկար ժամանակ չի անցել, այնուհանդերձ այդ բնագավառում նշանակալի քայլեր են կատարվել, որոնք արդեն արժանի են առանձին ուսումնասիրության: Հեղինակն իր աշխատության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Հայաստանի Երրորդ հանրապետության պետական, քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային հարաբերություններին Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի, Քուվեյթի, Իրաքի և արաբական այլ երկրների հետ, որոնք բարեկամական բնույթ են կրում: Առանձին տեղ է հատկացվել նաև հայ համայնքներին

և արաբական երկրներում նրանց ունեցած դերին ու գործունեությանը:

Քառահատոր այս խորքային մենագրության գլխավոր արժանիքներից են մի ամբողջ շարք կարևոր երևույթների և իրադարձությունների նորովի մեկնաբանություններն ու գնահատականները, որոնք լույս են սփռում դրանց իրական էության և նշանակության վրա: Հեղինակի եզրահանգումները հիմնված են հսկայական փաստագրական նյութի բազմակողմանի և խորքային ուսումնասիրման ու վերլուծության վրա:

Գիտական մեծ արժեք է ներկայացնում նաև հեղինակի ինքնատիպ վերջաբանը, որը վերնագրված է «Վերադարձ պատմության թատերաբեմ: Նոր ժամանակներ, նոր դիտարկումներ»: Նա այստեղ կատարում է գիտական հսկայական հետաքրքրություն ներկայացնող տեսական բնույթի մի շարք դիտարկումներ և զարգացնում այն միտքը, որ արաբական երկրները, հայտնվելով օսմանյան լծի տակ, փաստորեն չորս հարյուր տարի անհետացան պատմության թատերաբեմից որպես ինքնուրույն քաղաքական և պետական գործոն, և դադարեցին լինել միջազգային իրավունքի սուբյեկտ: Իրադրությունը կտրուկ փոխվեց նորագույն շրջանում՝ Օսմանյան կայսրության կործանումից, եվրոպական գաղութատիրության վերացումից և արաբական երկրների անկախության նվաճումից հետո: Եվ, ինչպես նշում է պրոֆ. Ն. Հովհաննիսյանը. «Արաբական երկրները երկրորդ անգամ հայտնվեցին պատմության թատերաբեմում»: Շարունակելով իր միտքը՝ հեղինակն այն հայեցակարգային տեսակետն է հիմնավորում, որ այդ երևույթն ունի կարևոր պատմական նշանակություն ոչ միայն արաբական աշխարհի, այլև ամբողջ միջազգային հարաբերությունների համար, քանի որ այդ իրողությունը. «...զգալիորեն փոխեց քաղաքական մթնոլորտը, ամբողջ աշխարհում ծնունդ տվեց նոր հիմնախնդիրների և

սահմանեց նոր դերակատարում նրանց համար»: Արաբների վերադարձը միջազգային թատերաբեմ համարելով XX դարի պատմաքաղաքական ամենանշանակալի իրադարձություններից մեկը՝ հեղինակն այն հիմնավոր կարծիքն է արտահայտում, որ արաբական երկրները դառնալու են «XXI դարում ակնկալվող միջազգային ուժային, ֆինանսական եւ տնտեսական նոր կենտրոններից մեկը»: Կապիտալ այս աշխատությունը, որն իր բնույթով, ոգով և ոճով համապատասխանում է դասական արաբագիտության նորմերին և օրինաչափություններին, գրված է հյութեղ լեզվով, տրամաբանական կուռ հենքի վրա և ընթերցվում է արտակարգ հետաքրքրությամբ:

Հարուստ աղբյուրագիտական հենքն ու հատկապես ժամանակակից շրջանի պատմության մասին հեղինակի սեփական տպավորությունները տարբեր արաբական երկրներ այցելություններից ու արաբ քաղաքական ու հասարակական գործիչների հետ բազմաթիվ հանդիպումներից աշխատությունը դարձնում է ուրույն, սեփական շունչն ու տեսլականն ունեցող հետազոտություն, ինչը եզակի երևույթ է հատկապես նման համապարփակ գիտական ուսումնասիրություններ կատարելիս: Նշենք, որ տեսականի ու գործնականի, պաշտոնականի ու անձնականի համաձուլումն ու համեմումը հաջողվել են պրոֆ. Ն. Հովհաննիսյանին, ինչը քառահատորյակին հավելյալ գիտական ու տեղեկատվական արժեք է հաղորդել՝ առանձնացնելով այն արաբների պատմությանը վերաբերող մյուս այլ աշխատություններից:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմությունը» քառահատորյակը, ամփոփելով արաբական երկրների տասնչորսդարյա պատմական ժամանակաշրջանը, իր հերթին կարող է հիմք դառնալ արաբագիտական նոր ուսումնասիրությունների համար և օրինակ ծառայել պատմագիտական հետազոտությունների համար՝ խարսխված նոր

գաղափարների, նոր մոտեցումների և մեթոդաբանության վրա:

Արձանագրենք, որ վաստակաշատ հայ գիտնականը պատմության դատին է հանձնել ֆունդամենտալ, բազմապլանային և մեծածավալ մի աշխատություն, որը պատիվ է բերում համաշխարհային արաբագիտությանը, իսկ մի քանի տարի առաջ արաբերեն քառահատորյակի թարգմանությունն ու հրատարակությունը դարձան նաև բացառիկ և եզակի իրադարձություն հենց արաբական երկրների գիտական աշխարհի համար: Այն հիրավի նոր մակարդակի վրա բարձրացրեց հայ արաբագիտական միտքն ու հեղինակությունը:

Գրքերն ապրում են այնքան ժամանակ, քանի դեռ նրանք ընթերցվում են մարդկանց կողմից: Վստահ եմ, որ Ն. Հովհաննիսյանի այս քառահատորյակը կապրի հավերժ, քանի որ արդեն իսկ իր արժանի տեղն է զբաղեցրել հայ արևելագիտության գանձարանում:

ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
ավագ գիտաշխատող

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական, ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդական, վերլուծական կենտրոնի գիտական-վերլուծաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի անվան հետ են կապված արևելագիտական մի շարք ուղղությունների հիմնումը և զարգացումը ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Ավելի քան կես դար է նրա գիտական հետաքրքրությունների կենտրոնում գտնվել արաբական երկրների պատմության, Մերձավոր և Միջին Արևելքում միջազգային ու տարածաշրջանային հարաբերությունների, քաղաքական իսլամի, բախումնաբանության, ցեղասպանության և արդիական այլ գիտական ուղղությունների հիմնահարցերի ուսումնասիրությունը: Նա բոլոր այդ հիմնախնդիրներն ուսումնասիրել է՝ սերտորեն շաղկապելով դրանք հայ ժողովրդի պատմության հարցերի հետ: Հայկական շերտի զոդումը արևելագիտական հիմնախնդիրների հետ մի առանձին նշանակություն և գրավչություն է տալիս Ն. Հովհաննիսյանի աշխատություններին, որի հետևանքով դրանց թարգմանությունն այլ լեզուներով դարձել է անհրաժեշտություն, հայտնվել օտար հեղինակների ու մասնագետների գիտական ուշադրության կենտրոնում և արժանացել նրանց բարձր գնահատականին:

Ն. Հովհաննիսյանն ինչ հարցերով էլ որ զբաղվի, միևնույնն է, պարբերաբար վերադառնում է հայ ժողովրդի համար սկզբունքային նշանակություն ունեցող մի այնպիսի հարցի, ինչպիսին Հայոց ցեղասպանության հարցն է: Նա այդ հիմնախնդրի լուսաբանությանը նվիրել է մոտ 130 աշխատություն, այդ թվում՝ 30 մենագրական ուսումնասիրություն՝ հրատարակված աշխարհի 15 լեզուներով ԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Թուրքիայում, Իրանում, Հունգարիայում, Ճապոնիայում, Կորեայում, Ռումինիայում և, բնականաբար, նաև արաբական երկրներում:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն իր խոսքում «Հայոց ցեղասպանություն» գրքի շնորհանդեսի ժամանակ նշել էր, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ իր առաջին ուսումնասիրությունը լույս է տեսել դեռևս 1965 թ. և հետագայում ինչ ուսումնասիրություններ էլ կատարել է, միշտ շոշափել է Ցեղասպանության խնդիրը: Ն. Հովհաննիսյանը հիշատակելով, որ մայրը Էրզրումից էր, և նրա ողջ ընտանիքը կոտորվել է Ցեղասպանության ժամանակ, նշում է. «Հայոց ցեղասպանության հարցը ինձ համար թե՛ անձնական հարց է՝ կապված իմ մայրական ընտանիքի հետ, թե՛ համազգային»[9]: Հեղինակը խոստովանեց, որ միշտ մտածել է, թե ինչպիսի գիրք գրի, որտեղ գիտության նորագույն տվյալների հիման վրա ամփոփված լինի Ցեղասպանության խնդիրը ու գրվի «առանց լացկանության»: «Այդ լացկանությունը, որ, կարծես թե, հնից է գալիս, մեր պատմագրության թերություններից մեկն է, պետք է վերջ տանք: Պետք է մեր պատմությունը ներկայացնենք՝ նույնիսկ ամենաեղերական էջերը, արժանապատվությամբ», - շեշտեց Ն. Հովհաննիսյանը:

Հայոց ցեղասպանությանը նվիրված աշխատությունների շարքում իրենց կարևորությամբ և ինքնատիպությամբ

---

9 «Մեր պատմությունը ներկայացնենք արժանապատվությամբ» http://www.aysor.am/am/news/2010/01/26/nikolay-hovhannisyan/104130

վեր են խոյանում Ն. Հովհաննիսյանի երկու յուրատիպ մենագրությունները՝ «Հայոց ցեղասպանություն: Հայասպանություն՝ ամենացեղասպան ցեղասպանություն. աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, թուրքերեն, ճապոներեն, հունգարերեն, հայերեն, արաբերեն և պարսկերեն»[10] և «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է»[11]: Այդ զույգ մենագրություններն առաջացրին տարբեր երկրների ցեղասպանագետների, պետական, քաղաքական, կուսակցական գործիչների, օրենսդիրների անանախադեպ հետաքրքրությունը: 2010 թ. հունվարին Երևանի Թեքեյան մշակութային կենտրոնում, իսկ հունիսին ԱՄՆ - ի Հայ իրավաց խորհրդի կողմից Լոս Անջելեսում կազմակերպված այդ ուսումնասիրությունների հրապարակային քննարկումների մասնակիցները միակարծիք էին այն հարցում, որ դրանք նորույթներ են, չունեն իրենց նախադեպերը և ծանր հարված են Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականությանը[12]: Իսկ Ալեքսանդրիա-Դամանհորի (Եգիպտոս) համալսարանի պատմության բաժանմունքի պրոֆեսոր, Կահիրեի հայկական «Արեգ» (նախկին «Արև») արաբալեզու ամսագրի գլխավոր խմբագիր դոկտ. Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամը հետևյալ գնահատականն է տվել. «Ես, որպես արաբագետ, կարող եմ հաստատել, որ հայ տաղանդավոր հետազոտող Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատությունները, որոնք հրատարակվել են Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Իրաքում, Քուվեյթում, Արաբական

---

[10] Hovhannisyan N.,The Armenian Genocide. Armenocide – the Most Genocidal Genocide in Ten Languages of the World. In English, French, Russian, German, Turkish, Japanese, Hungarian, Armenian, Arabic, Persian, Yerevan, "Zangak-97" Publishing House, 2009.

[11] Նիկոլայ Հովհաննիսյան, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, «Զանգակ-97», 2010:

[12] https://nhovhannisyan.wordpress.com/appraisals/

Միացյալ Էմիրություններում, ինչպես նաև Անգլիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Կանադայում, Ռուսաստանում, Իտալիայում, Հունգարիայում և այլ երկրներում, ժամանակակից արաբագիտությունը և ցեղասպանագիտությունը բարձրացրել են նոր մակարդակի, խթանել նշված ուղղությունների ուսումնասիրությունն աշխարհի տարբեր համալսարաններում և գիտական կենտրոններում: Մենք վարժվել ենք պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ինքնատիպ աշխատություններին, որոնք մշտապես հարուցում են գիտական աշխարհի մեծ հետաքրքրությունը: Սակայն նրա «Հայոց ցեղասպանությունը - Արմենոցիդը որպես ամենագենոցիդային գենոցիդ. Աշխարհի տասը լեզուներով» աշխատությունը (2009 թ.) իսկական սենսացիա էր: Դա մի եզակի և հիմնարար ուսումնասիրություն է, մի ֆենոմեն, որը չունի իր նախադեպը: Դա նոր խոսք է ոչ միայն Հայոց ցեղասպանության բնագավառում, այլև ցեղասպանագիտության բնագավառում ընդհանրապես»[13]:

Ցեղասպանագիտության առանցքային հիմախնդիրները եղել և մնում են պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Իրականում նա Հայաստանում ցեղասպանագիտության՝ որպես համաշխարհային գիտական նոր ուղղության, հիմնադիրներից մեկն է: Նա քայլ առ քայլ բացահայտել է այդ ֆենոմենի բնորոշ գծերը: Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել նրա նախորդ աշխատությունը[14], որտեղ նա առաջին անգամ քննարկում է Հայոց ցեղասպանության մի այնպիսի հիմնարար հայեցակարգ, ինչպիսին վիկտիմիզացիան է (զոհացումը), զոհ և դահիճ, ցեղասպան պետություն և ցեղասպան հասարակու-

---

[13] **Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամ**, «Նիկոլայ Հովհաննիսյանը և արդի արաբագիտությունն ու ցեղասպանագիտությունը» http://www.azg.am/AM/2015061220

[14] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Հայոց ցեղասպանությունը Ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, 2002:

թյուն, և գալիս այն եզրակացության, որ Օսմանյան կայսրությունը ցեղասպան. պետություն էր, որտեղ հայերը և կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդները՝ արաբները, հույները, ասորիները և մյուսները, զոհեր էին, իսկ սուլթանը և երիտթուրքերի վարչակարգը՝ դահիճներ, որոնք ցեղասպանության քաղաքականությունը բարձրացրել էին պետական քաղաքականության աստիճանի: Եվ հայերը դարձան առաջին զոհերը՝ կորցնելով իրենց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը:

Այնպիսի եզակի աշխատություն, որպիսին «Հայոց ցեղասպանությունն աշխարհի տասը լեզուներով» ուսումնասիրությունն է, ստեղծելու ուղղությամբ կարևոր քայլ եղավ նրա «Հայոց ցեղասպանությունն արաբական պատմագիտության քննական լույսի ներքո» աշխատությունը, որը հրատարակվեց հայերեն (2004 թ.), անգլերեն (2005 թ.), պարսկերեն (Թեհրան, 2009 թ.), ապա արաբերեն (Կահիրե, 2011 թ.): Հայ գիտնականն առաջին անգամ ներառել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ հարուստ և կարևոր արաբական աղբյուրներ: Արդյունքները ցնցող են: Արաբական աղբյուրները հաստատում են գլխավոր հիմնադրույթն այն մասին, որ 1915 թ. երիտթուրքերի ղեկավարները ծրագրել և բարբարոսաբար ու դաժանորեն իրականացրել են Հայոց ցեղասպանությունը, որն արաբական աղբյուրները որակել են որպես մարդկության պատմության սև էջ և քսաներորդ դարի առաջին ցեղասպանություն: Այս աշխատությունից հետո միանգամայն բնական էր «Հայոց ցեղասպանությունը - Արմենոցիդը որպես ամենագենոցիդային գենոցիդ. Աշխարհի տասը լեզուներով» աշխատության հրատարակումը, որի գիտական նշանակությունը դուրս է գալիս Հայոց ցեղասպանության շրջանակներից: Դա համաշխարհային նշանակություն ունեցող երևույթ է, մի եզակի ուսումնասիրություն, որը նոր հորիզոններ է բացում ցեղասպանագիտության առջև: Այդ գիրքը փաստորեն բաղկացած է երկու մասից:

Առաջին մասում հեղինակը քննարկում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման առաջին փուլը և դրա միտումները մոտ ապագայում: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը պաշտոնական փաստաթղթերի հիման վրա ցույց է տալիս , որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն արձանագրել է մեծ առաջընթաց: Մյուս կողմից թուրքական կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ժխտումն ավելի ու ավելի է թուլանում և նվազեցնում նրա շանսերը: Այս կապակցությամբ հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում օսմանյան լեգալ դատարանի կողմից երիտթուրքերի ղեկավարության 1919-1920 թթ. դատավարությանը, որը նրանց Հայոց ցեղասպանության իրականացման համար դատապարտեց մահվան: Օսմանյան դատարանի դատավճռի հիման վրա պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն առաջարկեց վերանայել Հայոց ցեղասպանության ժխտման Թուրքիայի մոտեցումը՝ գտնելով, որ Թուրքիան նախկինում արդեն մեկ անգամ այն ճանաչել է: Մենք գտնում ենք, որ այս տեսակետը վերին աստիճանի հետաքրքրական է և արժանի ապագայում ավելի զարգանալու:

Գրքի երկրորդ մասը բաղկացած է աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն, ճապոներեն, հունգարերեն, արաբերեն, հայերեն և պարսկերեն հրատարակված տեքստերից, որոնք ընդգրկված են գրքում: Այստեղ մենք ցանկանում ենք ուշադրություն հրավիրել հետևյալ փաստի վրա: Այդ թարգմանությունները կատարվել են ոչ թե հեղինակի նախաձեռնությամբ, այլ արդյունք են տեղական նախաձեռնության, որը վկայում է բազմաթիվ երկրներում այն մեծ հետաքրքրության մասին, որը դրսևորվում է Հայոց ցեղասպանության հեղինակի ուսումնասիրությունների նկատմամբ: Մենք դա համարում ենք նաև հեղինակի նկատմամբ խորը հարգանքի դրսևորում և նրա ճանաչում որպես ցեղասպանության մեծ մասնագետի: Դա

տարբեր աշխատությունների ժողովածու չէ: Դա միմյանց հետ և տրամաբանորեն փոխկապակցված միևնույն թեմայի վերաբերյալ ուսումնասիրություն է:

Այդ ուսումնասիրության կարևոր նվաճումներից մեկն արաբ ժողովրդի, տեղական կառավարման մարմինների, կրոնական առաջնորդների, մտավորականության մարդասիրական դերի գիտական բացահայտումն է հայկական քարավաններն ամբողջական ոչնչացումից փրկելու գործում: Հայտնի է, որ Հայոց ցեղասպանության ժամանակ սպանվել է ավելի քան 1,5 միլիոն հայ: Շնորհիվ արաբների ասպնջականության հարյուր հազարավոր հայեր փրկվեցին, և հետագայում նրանք հայկական նոր Սփյուռքի հիմք դարձան Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Հորդանանում, Եգիպտոսում և արաբական այլ երկրներում:

Արժե նաև ընդգծել հեղինակի շարադրանքի ոճի և հիմնախնդիրների լուսաբանման մասին: Մեր կարծիքով դրանց հատուկ են երեք բնորոշ գծեր: Առաջին, ակադեմիական ոճ, որը դրսևորվել է ստեղծագործական գաղափարների արտացոլման մեջ, արաբական տեքստերի խոր ըմբռնում և մեկնաբանում և գրքի իդեալական կառուցվածք: Երկրորդ, գիտական ինֆորմացիան ընթերցողներին մատուցելու իմաստուն ձև, օգնելու նրանց հասկանալու իսլամադավան արաբների դիքորոշումը հայերի հանդեպ: Երրորդ, արաբների քաղաքական-մարդասիրական դիրքորոշումը հայերի հանդեպ ցեղասպանության ընթացքում, արաբների և հայերի միջև փոխադարձ հարգանքի առկայությունը, արաբական երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային գործերում հայ համայնքների ակտիվ դերակատարումը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանությունը – Արմենոցիդն ամենագենոցիդային գենոցիդ. Աշխարհի տասը

լեզուներով» աշխատությունը նոր խոսք է ցեղասպանագիտության մեջ, իր նախադեպը չունեցող եզակի ուսումնասիրություն: Դա խոշոր ներդրում է թե՛ հայոց և թե՛ համաշխարհային ցեղասպանագիտության մեջ: Դա ակադեմիական բարձր մակարդակով գրված ուսումնասիրություն է, որը, անկասկած, կխթանի գիտության տվյալ ուղղության հետագա զարգացումը և կօգնի Հայոց ցեղասպանության ճանաչմանը:

Վերոնշյալ գործոնները և փաստերը գլխավոր պատճառներն են շատ բարձր գնահատելու ականավոր գիտնական և ցեղասպանագիտության տաղանդավոր մասնագետ-արաբագետ Նիկոլայ Հովհաննիսյանի ուսումնասիրությունը: Այն անմիջապես գրավեց տարբեր ազգերի գիտնականների ուշադրությունը, և չուշացան նրանց արձագանքները: Աշխատությունը շատ բարձր է գնահատել Երուսաղեմի Հոլոքոստի և Ցեղասպանության ինստիտուտի գործադիր տնօրեն, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի նախկին նախագահ, արդի խոշորագույն ցեղասպանագետներից մեկը՝ պրոֆեսոր Իսրայել Չարնին: Նա 2010 թ. նոյեմբերի 30-ին հեղինակին հղած իր նամակում գրում է. "I thank you so deeply for your very important and impressive book. Most of all I congratulate you and thank you for what seems like major original contribution to the historical memory of the Armenian Genocide. With warm regards Israel Charny" («Ես խորապես շնորհակալ եմ ձեր շատ կարևոր և տպավորիչ գրքի համար: Ամենից շատ շնորհավորում և շնորհակալ եմ ձեզ Հայոց ցեղասպանության պատմական հիշողության մեջ ձեր մեծ ինքնատիպ ներդրման համար: Ջերմ բարեմաղթանքներով՝ Իսրայել Չարնի»)[15]:

2005 թ. Ստամբուլում Ռագիփ Զարաքոլուն թուրքերեն

---

[15] Նիկոլայ Հովհաննիսյանի անձնական արխիվ:

հրատարակել էր «Էրմենի սոյքիրիմ. Էրմենիքիրիմ»[16] («Հայոց ցեղասպանություն. Արմենոցիդ») խորագրի ներքո առանձին գիրքը: Դա համարվեց կարևոր իրադարձություն: Առաջինն այդ գրքին անդրադարձավ «Ակօս»-ի խմբագիր, Թուրքիայի ամենաականավոր հասարակական գործիչներից մեկը՝ լուսահոգի Հրանտ Դինքը: Նա մի հիանալի և հավասարակշռված հոդված գրեց այդ գրքի վերաբերյալ և հրատարակեց «Հովաննիսյան՛ ին քիտաբի թուրքչե՛դե» («Հովհաննիսյանի գիրքը նաև թուրքերենով») վերնագրով[17]: Դա ինքնին արդեն երևույթ էր, որը մի կողմից վկայում էր աշխատության բարձր մակարդակի, իսկ մյուս կողմից բուն Թուրքիայում նոր ուժերի (գլխավորապես մտավորականության շրջանում) ձևավորման և հանդես գալու մասին, որոնք արդեն բարձրաձայն պահանջում են թուրքական կառավարությունից ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Հարկ ենք համարում կանգ առնել հեղինակի այն հազվագյուտ ուսումնասիրությունների վրա, որոնց միջոցով հայտնաբերվել են բազմաթիվ արաբ պատմաբանների կողմից հայերի ցեղասպանության վերաբերյալ մի շարք արժեքավոր վկայություններ, բնորոշումներ ու գիտական վերլուծություններ: Դրանով նոր լույս է սփռվում ինչպես XIX դարի 90–ական թվականների, այնպես էլ XX դարի առաջին՝ Հայոց ցեղասպանության եղելության և դատապարտման վրա: Դեռևս 1965 թ. հրատարակվում է Ն. Հովհաննիսյանի «Արաբ ժողովրդի ասպնջականությունը» խորագրով աշխատությունը («Սովետական Հայաստան» ամսագրի մարտի համարում), որում ցույց են տրվում երիտթուրքերի բարբարոսությունները հայերի ցեղասպանության ու նրանց բնօրրանից տեղահանության ժամանակ, և միաժամանակ ներկայացվում է արաբ-

---

[16] *Ermeni Soykirimi. Ermenikirim* (Հայոց ցեղասպանություն. Հայասպանություն), Istanbul, 2005.

[17] Hrant Dink, "Hovanisyan'in kitabi Türkçe'de", *«Agos»*, 14 Ekim, 2005.

ների ազնիվ, մարդասիրական կեցվածքը բռնի հայրենազրկված հայերի նկատմամբ: Այո՛, արաբ բնակիչներն օգնության ձեռք մեկնեցին իրենց տարածքներով գաղթող հայ տեղահանվածներին: Առաջին հրապարակումից կարճ ժամանակ անց նույն հանդեսում լույս է տեսնում նրա գրախոսականն արաբ հասարակական գործիչ Ֆայեզ Ալ-Ղոսեյնի «Ջարդերը Հայաստանի մեջ» գրքի մասին[18]: Այդ գիրքն առաջին անգամ լույս էր տեսել 1916 թ., որում զետեղված են վկայություններ հայերի ցեղասպանության վերաբերյալ: Ինչպես իրավացիորեն նշում է հայ պատմաբան Ստ. Ստեփանյանը, Ն. Հովհաննիսյանի հիշատակված աշխատություններով փաստորեն սկիզբ է դրվում Հայոց ցեղասպանությանը նվիրված արաբական պատմագրության ուսումնասիրմանը Հայաստանում[19]:

2002 թ. Ն. Հովհաննիսյանը հրատարակում է «Հայոց ցեղասպանությունը. հայասպանություն» անգլերեն մենագրությունը[20], որի մի շարք հատվածներ նվիրված են հայոց ցեղասպանության վերաբերյալ արաբական պատմագիտության հարցերին: Այդ խնդիրներին նա անդրադարձել է նաև իր հեղինակած «Արաբական երկրների պատմության» երկրորդ հատորում[21]: Փաստորեն շուրջ հիսուն տարի գիտնական պատմաբանը զբաղվում է Հայոց ցեղասպանության նկատմամբ արաբական պատմագիտության մոտեցումների ուսումնասիրությամբ: Արաբական ժողովրդի վկայությունները, արաբ գիտնականների ուսումնասիրությունները յուրա-

---

[18] **Ֆայեզ Ալ-Ղոսեյն**, Ջարդերը Հայաստանի մեջ (ականատեսի վկայություններ), Կահիրե, 1960:

[19] Ստ. Ստեփանյան, «Նոր ավանդ ցեղասպանագիտության և հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման ասպարեզում» http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20100218_11&flag=am

[20] The Armenian Genocide. Armenocide, Yerevan, 2002.

[21] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Արաբական երկրների պատմություն, Օսմանյան տիրապետության շրջան. 1516-1918, հ.II, Երևան, «Զանգակ-97», 2004:

հատուկ հիմք են, որպեսզի Օսմանյան կայսրությունը, սկսած Աբդուլ Համիդ Երկրորդից (1876–1909 թթ.) մինչև քեմալականների կառավարման ժամանակաշրջանը ներառյալ, դասվի ցեղասպան (գենոցիդային) պետությունների շարքում:

Հեղինակը միանգամայն իրավացիորեն շեշտում է. «Արաբները թերևս միակ ժողովուրդն են, որ ազգովին ականատես են եղել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի հետ կատարված մեծ ողբերգությանը: Նրանք դա չեն մոռացել, որը դրոշմվել է նրանց հիշողության մեջ: Ուստի և Հայոց ցեղասպանությանը նվիրված արաբական պատմագիտության շարժառիթների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում արաբների պատմական հիշողության պարագան»[22]: Կարևոր է մատնանշել, որ արաբները չեն եղել անտարբեր, անկարեկից ականատեսներ ու դիտորդներ: Նրանցից շատ-շատերը, արհամարհելով թուրքական խստագույն ու դաժան հրամանները, որոնցով մահվան սպառնալիքի տակ արգելվում էր որևէ օգնություն ցույց տալ արաբական տարածքներով անցնող իրենց բնօրրաններից տեղահանված հայերի քարավաններին, բարեկամաբար իրենց օգնությունն էին առաջարկում սովահար ու հիվանդ հայերին՝ փրկելով նրանցից շատերի, հատկապես երեխաների կյանքը: Դրա դիմաց մեծաթիվ ազնիվ արաբներ թուրք ցեղասպաններին վճարել են իրենց կյանքով:

Հարկ է նշել, որ XX դարի առաջին ցեղասպանության վերաբերյալ հատկապես արաբ հեղինակներն ստեղծել են փաստագրական մի շարք աշխատություններ: Նրանցից առաջինը վերոհիշյալ սիրիացի Ֆայեզ Ալ–Ղոսեյնն է, որը 1916 թ. հրատարակում է «Ջարդերը Հայաստանի մեջ» վերտառությամբ գիրքը: Այն թարգմանվել և հրատարակվել է նաև անգլերեն ու ֆրանսերեն՝ «Մի արաբ իսլամադավանի

---

[22] Նշվ. աշխ., էջ 373:

վկայությունը հայերի անմեղության և կոտորածների մասին» վերնագրով: Այդ աշխատությունը՝ որպես ականատեսի վկայություններ, սկզբնաղբյուրի նշանակություն ունի:

Հայերի ցեղասպանության վերաբերյալ մյուս նշանավոր արաբ հեղինակը լիբանանցի Մուսա Պրենսն է: Նա ստեղծել է տպավորիչ աշխատություններ հայերի ցեղասպանության վերաբերյալ: Առաջին աշխատությունը վերնագրված է «Մի անպատիժ ցեղասպանություն. Արմենոցիդ»: 600-էջանոց այդ գիրքը հրատարակվել է ֆրանսերեն: Այդ աշխատության համառոտ տարբերակը ներկայացվել է ցեղասպանության հանցագործության կանխման միջազգային 2–րդ կոնգրեսին, որը տեղի է ունեցել 1967 թ. հուլիսի 10–14–ին Փարիզում: Դրանից հետո՝ 1996 թ.՝ արաբերեն հրատարակել է «Հայերի կոտորածները. հանցագործություն մարդկության դեմ» վերնագրով աշխատությունը: Մուսա Պրենսի աշխատությունների մեջ գիտականորեն լուսաբանված են այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են արմենոցիդը համիդյան վարչակարգի պայմաններում, երիտթուրքերը և արմենոցիդը և այլ խնդիրներ: Լիովին ճշմարիտ է Ն.Հովհաննիսյանի այն բարձր և արժանի գնահատականը, որ նա տվել է Մուսա Պրենսի՝ աշխատանքին: Նա գրում է. «Մուսա Պրենսի ամենամեծ, ամենակարևոր ներդրումը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում կայանում է նրանում, որ նա առաջին անգամ գենոցիդի անալոգիայով շրջանառության մեջ դրեց «Արմենոցիդ», «հայասպանություն» եզրը, որը միանգամայն ճշմարտացիորեն, բազմակողմանիորեն և ամբողջականորեն արտացոլում է Հայոց ցեղասպանության կամ հայասպանության էությունը, բնույթը, բնորոշ գծերը և առանձնահատկությունները»[23]: Անտարակույս, Մուսա Պրենսն այդ բառեզրը ստեղծել է աշխարհին հայտնի Ռա-

---

[23] Նշվ.աշխ., էջ 378:

ֆայել Լեմկինի «Գենոցիդ» («ցեղասպանություն») արտահայտության հայտնագործության հիման վրա: Աշխարհում արդեն տարածում գտած «Արմենոցիդ» տերմինը պարզ ու հստակ հասկացվում է հայերի, արմենների ազգի, ցեղատեսակի, էթնոսի ամբողջական բնաջնջում:

Հարկ է նշել, որ Մուսա Պրենսն ամենևին էլ չբավարարվեց «Արմենոցիդ» բառեզրի ստեղծմամբ: Նա «Արմենոցիդը» համեմատում է պատմության մեջ տեղի ունեցած տարբեր ժողովուրդների գենոցիդի հետ և հանգում է այն հետևությանը, որ Արմենոցիդը XX դարի մարդկության պատմության մեջ կատարված բոլոր գենոցիդների հետ համեմատած, ամենամեծ, ամենանողկալի, այսինքն՝ ամենագենոցիդային գենոցիդն է:

Բազմաթիվ են արաբ պատմաբանները, որոնք գիտականորեն, պաշտոնական փաստաթղթերով լուսաբանել են հայերի ցեղասպանությունը: Առավել կարևոր է այն, որ նրանք ցույց են տվել հայերի ցեղասպանությունը ժխտելու թուրքական կառավարողների և ժամանակակից թուրքական պատմագրության փորձերի սնանկությունը: Նիկոլայ Հովհաննիսյանը՝ որպես հմուտ պատմաբան–արևելագետ, հիմնավորել է, ցույց է տվել, որ ինչպես սուլթանական, այնպես էլ երիտթուրքական ու քեմալական կառավարողները վարում էին հայերին բռնի թուրքացնելու քաղաքականություն և իրականացնում էին դրան համապատասխան գործողություններ: Երբ հիմնականում ձախողվեցին այդ նողկալի քաղաքականությունն ու գործողությունները, նրանք ձեռնամուխ եղան Հայոց հրեշավոր ցեղասպանությանը: Այդ կապակցությամբ նա միանգամայն տեղին մեջբերում է Ուինսթոն Չերչիլի հետևյալ խոսքերը. «Պանթուրքիզմի կողմնակիցները հրաժարվեցին պետությունը «օսմանացման» և «թուրքացման» օգնությամբ վերացնելու մտքից: Թուրքական կայսրության դժբախտությունները նրանք նշանակալի չափով վերագրում էին

Թուրքիայում բնակվող ոչ թուրք ռասաների հակազդեցությանը: Նրանք բացահայտ և ուղղակիորեն հայտարարում էին, որ այդ ռասաները «ուշադրության արժանի չեն, միայն խոչընդոտ են և կարող են գրողի ծոցը գնալ»[24]: Ն. Հովհաննիսյանի հետևությունն այն է, որ «Հայերին բռնի թուրքացնելու քաղաքականության ձախողումը դարձավ հայոց ցեղասպանության պատճառներից մեկը: Կարելի է ասել, որ երկու դեպքում էլ՝ բռնի թուրքացում, թե ֆիզիկական ոչնչացում, միևնույնն է, դրված էր հայերին որպես էթնոս վերացնելու հարցը՝ որպես օսմանյան պետության կարևորագույն խնդիրներից մեկը»[25]:

Անշուշտ, ուշագրավ են հատկապես այն մեջբերումները, որոնցում արաբ պատմաբանները բնութագրում են պանթուրքիզմն ու թուրանիզմը: Այսպես, օրինակ, Ջիհադ Սալիհը հատուկ աշխատություն է գրել «Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև» վերնագրով: Նա նշում է, որ «Թուրքական թուրանիզմը ռասիստական, շովինիստական, հետադիմական, ֆաշիստական շարժում է»[26]: Աշխատության մեջ նշված է երիտթուրքական ղեկավարներից մեկի՝ Ալի Իհսան փաշայի հայտարարությունն առ այն, որ «Եթե չլինեին հայերը, մենք վաղուց նվաճած կլինեինք Կովկասը»[27]: Այս ամենից հետո պարզ ու հստակ հնչում են Ն. Հովհաննիսյանի այն խոսքերը, որ «Հայերը, Հայաստան աշխարհը... պատնեշի պես կանգնած էր պանթուրքիզմի ճանապարհին և լուրջ խոչընդոտ էր օսմանյան թուրքերի, նրանց երիտթուրքական ղեկավարության դեպի Արևելք ընդարձակվելու և նոր կայսրություն ստեղծելու ծրագրերի

---

[24] **Уинстон Черчилль.** Мировой кризис (1918–1925). Москва, 1932, с. 276.

[25] **Նիկոլայ Հովհաննիսյան,** Արաբական երկրների պատմություն..., էջ 403:

[26] Նշվ. աշխ., էջ 404:

[27] Նշվ.աշխ., էջ 405:

իրագործման ճանապարհին: Պանթուրքիզմը պահանջում էր հայկական պատնեշի ոչնչացում, որը հնարավոր էր իրականացնել միայն հայերի՝ որպես էթնոսի, ոչնչացման ուղիով»[28]: Այսպիսով, իր նշված աշխատություններում Ն. Հովհաննիսյանը քննության է ենթարկել այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են Հայոց ցեղասպանությանն անդրադառնալու արաբական պատմագիտության մոտիվացիան, արաբական պատմագիտությունը Օսմանյան կայսրության էության մասին, Հայոց ցեղասպանության նախադրյալները, Հայկական հարցը հայերին ֆիզիկապես ոչնչացնելու ուղիով լուծելու թուրքական բանաձևը, պանթուրքիզմը և հայկական պատնեշի վերացման հարցը, «արմենոցիդը որպես ամենագենոցիդային գենոցիդ» արաբական տեսադրույթը, արաբ ժողովրդի ասպնջականությունը 1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ և արաբների մարդասիրական դիրքորոշումը հայերի նկատմամբ և այլ հարցեր: Մանրազնին ուսումնասիրելով այդ հարցերի լուսաբանությունն արաբական պատմագիտության մեջ՝ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը եկել է այն եզրակացության, որ արաբական պատմագիտական միտքն Օսմանյան կայսրությունում 1915 թ. կատարված ողբերգությունն աներկբա համարում է ցեղասպանություն, XX դարի մարդկության պատմության սև էջը, որը հանցանք է ոչ միայն հայ ժողովրդի, այլև համայն մարդկության դեմ, որի համար պատասխանատու են երիտթուրքական մարդասպանները[29]:

Հեղինակը հայերի ցեղասպանության լուսաբանման հարցում արաբական պատմագրության մեջ որոշակի տեղ է հատկացնում քրդական գործոնին: Ցույց է տրվում, որ հայերի ցեղասպանության սկզբից ևեթ՝ մինչև քեմալականների

---

[28] Նույն տեղում:

[29] Առավել մանրամասն տե՛ս Մոհամմադ Ռիֆաթ Ալ-Իմամ, Նիկոլայ Հովհաննիսյանը և արդի արաբագիտությունն ու ցեղասպանագիտությունը http://www.azg.am/AM/2015061220

կառավարողները, որոշակի դեր է կատարել քրդական գործոնը: Այդ հարցը լուսաբանվել է արաբ պատմաբաններ Մուսա Պրենսի, Ուսման Աթ-Թուրքի, Ֆուաադ Հասան Հաֆիզի և այլոց աշխատություններում: Աբդուլ Համիդ Երկրորդը ստեղծեց «Ֆուրսան ալ-Համիդիե» («Համիդիե հեծելազոր»), որը հիմնականում կազմավորված էր քրդական ավազակախմբերից և զբաղվում էր հայ բնակչության նկատմամբ աննախադեպ բարբարոսություններով:

Ականավոր արևելագետն ու ցեղասպանագետը հետագայում էլ իր արժեքավոր հետազոտություններում մանրամասն դիտարկել ու ներկայացրել է հայ-քրդական հարաբերությունները տարբեր կողմերից, այն է՝ դրանց դիտարկումը Հայոց ցեղասպանությանը քրդերի մասնակցության հարցի ուսումնասիրման տեսանկյունից, պատմության քառուղիների խորքային ու խնամքով վերլուծությամբ, ինչպես նաև մեր ժամանակի հրամայականների ու առկա զարգացումների հաշվառմամբ: Ն. Հովհաննիսյանի տարիների պրպտումներն այդ խնդիրների շուրջ ամփոփվեցին բոլորովին վերջերս լույս տեսած «Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում» վերնագրով աշխատության մեջ[30]: Ուսումնասիրվող նյութն առավել քան արդիական է այսօր, երբ Մերձավոր Արևելքում տիրում է մի իրավիճակ, որը չէր կարող չհետաքրքրել ու չմտահոգել խնդրով զբաղվող ու դրանում խորամուխ եղած մեծանուն գիտնականին: Ինչպես նշում է քաղաքական վերլուծաբան Արամ Սաֆարյանը. «Մեզանում այն առաջին փորձն է քննելու քրդական գործոնի դերը Հայոց ցեղասպանության մեջ, ինչպես նաև դրա հնարավոր դերակատարությունը տարածաշրջանային մերօրյա

---

[30] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Երևան, 2016:

զարգացումներում: «Այն, որ քրդերը Թուրքիայում, Իրաքում, Սիրիայում և Իրանում բնակվող ժողովուրդ են, որոնք վերջին տարիներին սկսել են ավելի բարձրաձայնել իրենց էթնիկ ինքնուրույնության և քաղաքական ձգտումների մասին, հայտնի է հետազոտողներին և հարցով հետաքրքրվողներին: Միաժամանակ փաստ է, որ հայ իրականության մեջ ամենատարբեր պատճառներով մինչև այժմ իմաստավորված և հետազոտողի ձեռքով թղթին հանձնված չէր քրդական գործոնի ուսումնասիրությունը հայկական ազգային շահերի տեսանկյունից, առավել ևս, որ քրդերն իրենց դերակատարությունն են ունեցել Հայոց ցեղասպանության իրագործման և հայերի հայրենազրկման գործում: Եվ ահա պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն այն համարձակ և ինքնուրույն մտածող հայ մտավորականը դարձավ, ով գիտական և հասարակական-քաղաքական շրջանակների ուշադրությանը հանձնեց իր տասնամյակների հետազոտության արդյունք դարձած մոտեցումներն ու դիտարկումները այս ավելի քան արդիական թեմայի վերաբերյալ»[31]: Աշխատությունը բաղկացած է երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը մի ուրույն հայացք է քրդական գործոնի որոշակի ասպեկտներին, և այդ երեք գլուխները միասին մի ամփոփ, քաղաքական արդի հնչեղություն ունեցող տեղեկանք են բոլոր նրանց համար, ովքեր կցանկանան տեսականորեն և գիտականորեն հիմնավորել իրենց մոտեցումները քրդական գործոնի հարցում:

Հայ ականավոր ցեղասպանագետը մոտ կես դար է, ինչ ուսումնասիրում է Հայոց ցեղասպանության, ինչպես նաև Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի տարբեր երկրներում XX-XXI

---

[31] **Ա. Սաֆարյան**, Անվանի արևելագետի աշխատությունը քաղաքական արդիականություն ստացած · քրդական գործոնի մասին https://nhovhannisyan.wordpress.com/2016/03/15/nikolay-hovhannisyan-book presentation-at-azg/

դարերում տեղի ունեցած ցեղասպանությունների հիմնահարցերը:

Նոր մոտեցումներով աչքի ընկավ նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ հրատարակված Ն. Հովհաննիսյանի հերթական՝ «Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից» մենագրությունը՝ հայոց, ռուսաց և անգլերեն լեզուներով[32]: Հեղինակն այն նվիրել է Օսմանյան կայսրությունում 100 տարի առաջ իրագործված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Դեռևս 2006 թ. նա անդրադարձել էր այդ հարցին իր «Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը երիտթուրքերի 1919-1920 թթ. դատավարության վճռի լույսի ներքո» վերնագրով մեծածավալ հոդվածում[33]: Հոդվածը գրված է դատական նիստերի արձանագրությունների, մեղադրական կողմի եզրակացությունների, ականատեսների վկայությունների և պաշտոնական այլ նյութերի ուսումնասիրության հիման վրա:

Ելնելով երիտթուրքական բարձրագույն ղեկավարությանը մահվան դատապարտելու վերաբերյալ օսմանյան դատարանի վերդիկտից՝ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը հանգում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է նորովի մոտեցում դրսևորել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Նա հիմնավորում է այն տեսակետը, որ օսմանյան դատարանի վճիռը Հայոց ցեղասպանության փաստի ընդունում է՝ դատահիրավական մակար-

---

[32] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից (հայերեն, ռուսերեն, անգլերեն), Երևան, «Էդիթ Պրինտ», 2015:

[33] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը երիտթուրքերի դատավարության վճռի լույսի ներքո (1919–1920 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», 2006, № 3, էջ 23-35:

դակով, և այդ վճիռը լեգիտիմ ուժ ունի: Միաժամանակ նա այն տեսակետն է հայտնում, որ օսմանյան պետությունը ոչ միայն առաջին պետությունն է, որ իրագործել է XX դարի առաջին ցեղասպանությունը՝ Հայոց ցեղասպանությունը, այլև առաջին պետությունն է, որ ճանաչել է այդ ցեղասպանությունը: Հետևաբար, ըստ հայ գիտնականի, արդի Թուրքիայի կառավարությունից պետք է պահանջել ոչ թե ճանաչել Հայոց ցեղասպանությունը, դա արդեն ճանաչվել է 1919 թ., այլ ընդունել իր նախորդի՝ օսմանյան պետության, որի իրավահաջորդն է նա, կառավարության դատաիրավական մակարդակով ընդունված որոշումն այդ հարցի վերաբերյալ:

Իսկ վերոհիշյալ մենագրությունում դոկտոր Հովհաննիսյանը, վերլուծելով կուտակված վիթխարի քանակությամբ սկզբնաղբյուրները, պաշտոնական փաստաթղթերը և այլ նյութեր, վերանայում է այդ բնագավառում տիրապետող մի շարք հնացած տեսակետներ՝ առաջարկելով հայեցակարգային-ռազմավարական նոր մոտեցումներ 1915 թ. Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության գնահատման հարցում:

Այդ հիմնավորմամբ նա հանգում է հետևյալ եզրակացությունների.

* Հայոց ցեղասպանությունն արդեն միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է՝ հաստատված միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից:

* Օսմանյան կայսրությունը ոչ միայն առաջին պետությունն է, որ իրագործել է XX դարի առաջին ցեղասպանությունը՝ Հայոց ցեղասպանությունը, այլև առաջին պետությունը, որ ճանաչել է դա 1919 թ.՝ ըստ օսմանյան Ռազմական արտակարգ ատյանի դատավճռի:

* Թուրքիան ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հիմնադիրն է:

* Սկսվել է նոր շրջան՝ Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանության ճանաչման փուլից անցում ծանր հետևանքների վերացման և հատուցման փուլին:

Սա նոր երևույթ է պատմագիտության մեջ, նոր խոսք՝ ուղղված աշխարհին, մարդկությանը, հայերի ցեղասպանության իրողության, միջազգային ճանաչման ու դատապարտման մասին:

Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատություններն իրավամբ կարող ենք բնութագրել որպես եզակի, կոթողային, նորարարական, առանձնահատուկ, հիմնարար, բացառիկ, նախադեպը և զուգահեռները չունեցող, ակադեմիական գիտական բարձր մակարդակով գրված ծանրակշիռ աշխատություններ, եզակի հետազոտական ուսումնասիրություններ և կարևոր ներդրում ցեղասպանագիտության ոլորտում: Դրանք իսկապես երևույթ են, նորույթ հայ պատմագիտության, նաև հայ արևելագիտության ու ցեղասպանագիտության բնագավառում: Այդ բացառիկ հիմնարար ուսումնասիրությունները պատիվ են բերում ոչ միայն դրանց հեղինակին՝ Նիկոլայ Հովհաննիսյանին, այլև գիտությանը՝ որպես նրա վերջին տասնամյակների խոշորագույն նվաճումներից մեկը:

ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
Թուրքիայի բաժնի վարիչ
Պատմական գիտությունների թեկնածու

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի բազմաժանր գիտահետազոտական ուսումնասիրություններում կարևոր և հաստատուն տեղ են գրավում միջազգային հարաբերություններին և աշխարհաքաղաքականությանը վերաբերող խնդիրները: Այս հոդվածը բաժանված է երեք հատվածի: Առաջինում կքննարկվեն միջազգային հարաբերությունների թեմատիկայի նկատմամբ նրա հետաքրքրության պատճառները, այնուհետև՝ բուն միջազգային հարաբերություններին նվիրված աշխատությունները, ապա՝ նաև աշխարհաքաղաքականության խնդիրներին նվիրված նրա հետազոտական աշխատանքները:

Խորհրդային Հայաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից 1945 թ. հուլիսի 21-ին ընդունված թիվ 578 և արդեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2009 թ. սեպտեմբերի 23-ին ընդունված թիվ 1111 որոշումներն ունեն մի շարք կարևոր ընդհանրություններ: 1945 թ. որոշմամբ Երևանի պետական համալսարանում ստեղծվեց միջազգային հարաբերությունների ֆակուլտետը,

որը հիմնավորված էր «միջազգային հարաբերությունների գծով համապատասխան որակավորման մասնագետներ պատրաստելու» պահանջով, իսկ 2009 թ. որոշմամբ ստեղծվեց ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցը, որի նպատակների մեջ նշված էր. «դիվանագիտական կադրերի պատրաստում»:

Թե՛ 1945 թ., թե՛ 64 տարի անց ընդունված երկու որոշումները մեկ նպատակ էին հետապնդում՝ միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքականության բնագավառի համար բարձրորակ մասնագետների պատրաստում: Երկու որոշումներում էլ բերված էր գրեթե նույն հիմնավորումը: Տարբեր ժամանակներում ու տարբեր խնդիրներ լուծելու համար ընդունված այս երկու որոշումները մեր երկրի ու պետականության կայացման համար ունեցել են կարևոր նշանակություն: Թեև երկրորդը դեռ ճանապարհ ունի անցնելու, սակայն առաջինի դեպքում վստահորեն կարող ենք մի քանի եզրակացություններ կատարել: Այսպիսով, 1945 թ. որոշմամբ բացված միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, ցավոք, գործեց միայն 4 տարի՝ ունենալով ընդամենը չորս շրջանավարտ կուրս: Ֆակուլտետի վերջին շրջանավարտը 1953 թ. ավարտեց համալսարանը, իսկ ֆակուլտետն ընդհանուր առմամբ տվեց 138 շրջանավարտ, որոնց շնորհվեց պատմաբան-միջազգայնագետի որակավորում: Շրջանավարտների մի մասն անցավ դիվանագիտական ծառայության թե՛ Խորհրդային Միության արտաքին գործերի նախարարությունում, թե՛ 1944 թ.-ից գործող Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում՝ զբաղեցնելով տարբեր ղեկավար պաշտոններ, այդ թվում՝ նախարարներ և դեսպաններ: Շրջանավարտների մի մասն էլ, ուղղակիորեն չզբաղվելով դիվանագիտական աշխատանքով, կարևոր գործունեություն ծավալեցին տնտեսության, կրթության և գիտության ոլորտներում թե՛ Հայաստանում, թե՛

Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում և թե՛ արտերկրում[34]:

Այդ ֆակուլտետի վերջին շրջանավարտների թվում էր նաև Նիկոլայ Հովհաննիսյանը: Որպես միջազգայնագետ, այն խորքային ու բազմակողմանի գիտելիքները, որոնք նա ստացել էր ԵՊՀ-ում ուսանելու տարիներին, հետագա տասնամյակների ընթացքում կանխորոշեցին նրա գիտահետազոտական հետաքրքրությունների շրջանակը: Մինչև Խորհրդային Միության փլուզումը Նիկոլայ Հովհաննիսյանի ուսումնասիրությունների առանցքը Մերձավոր Արևելքն էր՝ իր բազմազանությամբ ու բարդությամբ: 1991 թ.-ից հետո փոխվեցին շատ իրողություններ, ձևավորվեցին նոր ակնկալիքներ: Անկախ Հայաստանին հարկավոր էր, որ Խորհրդային Հայաստանի վաստակաշատ և փորձառու գիտնականներն արագորեն վերակողմնորոշեին ու կուտակած հսկայական փորձն ու գիտելիքները ծառայեցնեին նորանկախ Հայաստանի պետական ու հայոց ազգային շահերին: Հետևաբար, դժվար էր պատկերացնել, որ Նիկոլայ Հովհաննիսյանը և նրա համախոհները հայտնվեին դիտորդի կարգավիճակում և ականատես լինեին, թե ինչպես էր մարտահրավերների առջև կանգնած Հայաստանը դժվարությամբ նավարկում տարածաշրջանային և արտատարածաշրջանային փոթորկուն ալիքներում:

1991 թ.-ից հետո Նիկոլայ Հովհաննիսյանը տպագրեց մի շարք ուսումնասիրություններ, որոնք դարձան նորանկախ Հայաստանի արտաքին գործերի նախարարության աշխատակիցների, դիվանագետների և միջազգային հարաբերություններով հետաքրքրվողների սեղանի գիրքը: Հատկապես կարևոր էր 1997 թ. «Դիվանագիտություն: Ֆունկցիաները, մարմինները և պաշտոնյաները» խորագրով մենագրության լույսընծայումը: Այն իր բնույթով և իր առջև դրված նպատակ-

---

[34] Երևանի պետական համալսարան:. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ 1945-1953 թթ., Երևան, «Զանգակ», 2004:

ներով հայոց լեզվով գրված առաջին աշխատությունն էր: Աշխատանքի առաջնային նպատակն էր ներկայացնել արտաքին հարաբերությունները և դիվանագիտությունն իրականացնող մարմինների գործունեությունը, բացահայտել դիվանագիտության տեղն ու դերն արտաքին հարաբերությունների համակարգում: Այդ աշխատության առաջաբանում Նիկոլայ Հովհաննիսյանը հույս է հայտնում, որ այն. «...օգտակար կլինի ձևավորվող հայկական դիվանագիտական կորպուսի, ապագա հայ դիվանագետների և ընդհանրապես նրանց համար, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերում միջազգային կյանքի նկատմամբ»[35]: Միանշանակ կարելի է պնդել, որ արդեն լույսընծայումից հետո գիրքը ծառայեց իր նպատակին և դարձավ տասնյակ դիվանագետների, միջազգայնագետների և պատմաբանների անդավաճան ուղեկիցը:

Արդեն հաջորդ տարի՝ 1998 թ. պրոֆեսոր Հովհաննիսյանը տպագրեց մեկ այլ կարևոր աշխատություն, որը միտված էր ի մի բերելու անկախության 7 տարիների ընթացքում Հայաստանի իրականացրած արտաքին քաղաքականությունը: Այդ աշխատանքի առավել կարևոր ու հեռագնա նպատակն էր հստակեցնել անկախ Հայաստանի տեղն ու դերը, ինչպես նաև արտաքին քաղաքական շահերի հետապնդման կենսատարածքը: Անգլերենով գրված այդ աշխատությունը, որի վերնագիրը թարգմանվում է հետևյալ կերպ՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն Անդրկովկասյան-Մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում», դարձավ պահանջված աշխատություն ոչ միայն Հայաստանում, այլ նաև արտերկրում[36]: Այդ տարիներին Հայաստանում վերլուծական կենտրոնների

---

[35] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Դիվանագիտություն: Ֆունկցիաները, մարմինները և պաշտոնյաները, Երևան, 1997, էջ 2:

[36] **Nikolay Hovhannisyan**, The Foreign Policy of the Republic of Armenia in the Transcaucasian-Middle Eastern Geopolitical Region, Yerevan, 1998.

թիվը սահմանափակ էր, ուստի հայտնի արևելագետի կողմից նման աշխատության հրատարակումը հասկանալիորեն սպասված էր և պահանջված: Այդ աշխատության հաջողության գրավականներից մեկն այն էր, որ համապարփակ ներկայացվում էին Հայաստանի արտաքին քաղաքականության գերակայությունները, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի, Իրանի, Ադրբեջանի, Վրաստանի, Իսրայելի և Մերձավոր Արևելքի մի շարք այլ երկրների հետ երկկողմ հարաբերություններում առկա խնդիրները և հնարավորությունները: Աշխարհաքաղաքական ուսումնասիրությունների առումով ուշագրավ էր այն մոտեցումը, որ Հարավային Կովկասը և Մերձավոր Արևելքը դիտարկվել էին որպես մեկ տարածաշրջան: Իր բնույթով և շրջանառության մեջ դրված դրույթներով այն փորձ էր դուրս գալու այդ տարիների համար ընդունված վերլուծական կատեգորիաների շրջանակից և մտորելու Հայաստանի համար այլ աշխարհաքաղաքական հնարավորությունների մասին: Հայաստանի Հանրապետության պատմությունը և հատկապես արտաքին քաղաքականությունն ուսումնասիրողների համար այս աշխատությունը պարունակում է կարևոր վերլուծություններ և տեսակետներ, որոնք ամբողջությամբ ներկայացնում են 1990-ական թթ. բարդ իրողությունները և հիմնախնդիրները: Այդ ընթացքում պրոֆեսոր Հովհաննիսյանը հեղինակեց ևս մի քանի ուսումնասիրություններ՝ նվիրված Ղարաբաղյան հակամարտությանը:

Հետագա տարիներին Նիկոլայ Հովհաննիսյանը շարունակեց ընդլայնել ու առավել խորացնել միջազգային հարաբերություններին և աշխարհաքաղաքական խնդիրներին առնչվող հետազոտությունների շրջանակը: Այդ առումով կցանկանայի կանգ առնել մեկ այլ կարևոր դրվագի և նրա գիտահետազոտական գործունեության համար նպաստավոր մեկ այլ հարթակի քննարկման վրա: 2005 թ. Հայաստանում

սկսվեցին Ազգային անվտանգության ռազմավարության մշակման աշխատանքները: Մինչ այն կընդունվեր 2007 թ. փետրվարին, այդ փաստաթղթի աշխատանքային տարբերակը 2006 թ. ավարտին փորձաքննություն անցավ Գիտությունների ազգային ակադեմիայում: Հենց այստեղ տեղի ունեցած քննարկումների ժամանակ էր, որ Նիկոլայ Հովհաննիսյանը բարձրաձայնեց մի խնդիր, որը կարող էր անել միայն միջազգային հարաբերությունների և աշխարհաքաղաքականության խնդիրները խորությամբ ընկալող մասնագետը: Ներկայացված տարբերակում նա ցույց տվեց մեկ բացթողում, որի առանցքը հետևյալն էր. արաբական աշխարհին անհրաժեշտ ուշադրության չի արժանացել փաստաթղթում: Այդ դիտարկումը կարևոր էր ոչ միայն այն պատճառով, որ Մերձավոր Արևելքում ապրում են 100000-ավոր մեր հայրենակիցները, այլ նաև այն հասկանալի պատճառով, որ Հայաստանը չէր կարող անտեսել Մերձավոր Արևելքի իր ավանդական գործընկեր երկրների հետ համագործակցության զարգացման ուղղությունը: Պակաս կարևոր չէր նաև Պարսից ծոցի և Միջերկրական արաբական երկրների հետ հարաբերությունների զարգացումը: Հովհաննիսյանի բարձրաձայնած ձևակերպումները հաշվի առնվեցին ամիսներ անց ընդունված վերջնական փաստաթղթում:

2007 թ.-ից ի վեր Նիկոլայ Հովհաննիսյանը սերտորեն համագործակցում է ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (ԱՌՀԻ) հետ: Ավելին, այդ ինստիտուտում նրա գործունեությունը կարևորվում է նրանով, որ նա ոչ միայն մեծ ավանդ է ներդրել գիտահետազոտական կենտրոնի զարգացման գործում, այլ նաև իր փորձն է փոխանցել այնտեղ աշխատող վերլուծաբաններին: Այդ ինստիտուտը հրատարակում է մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված Հայաստանի ազգային անվտանգության խնդիրներին և դրանց ապահովմանը: ԱՌՀԻ-ն լույս է ընծայում

«Հայկական բանակ» և դրա հավելված համարվող «Աշխատանքային տետրեր» պարբերականները: 2007 թ.-ից հրատարակվող «Աշխատանքային տետրերը» կարևոր նշանակություն ունեն Հայաստանի անվտանգության և արտաքին քաղաքական ոլորտներում կարևոր որոշումներ կայացնող գերատեսչությունների համար: Պրոֆեսոր Հովհաննիսյանը անձամբ է մասնակցել մի քանի տասնյակ քննարկումների և իր ավանդն է ներդրել ռազմավարական բնույթի կարևոր մշակումների պատրաստման գործում:

Այդ գիտական հանդեսներում տպագրված հոդվածները կարևոր ներդրում են Հայաստանում աշխարհաքաղաքական մտքի զարգացման գործում: Այդ ռազմավարական տրամաչափի մշակումներում պրոֆեսոր Հովհաննիսյանին հաջողվել է ոչ միայն վեր հանել առկա խնդիրները, այլ նաև ցույց տալ զարգացման միտումները, ինչը բավական դժվար խնդիր է: Սա որոշ առումով տարբերվում էր նախկինում կատարված հետազոտություններից: Նիկոլայ Հովհաննիսյանին են պատկանում ժամանակի փորձությունն անցած մի շարք գիտական թեզեր: Ես կցանկանայի կանգ առնել դրանցից երկուսի վրա: Նրանք, ովքեր շփվել են պարոն Հովհաննիսյանի հետ, գիտեն նրա հետևյալ թեզերի մասին: Նա իրավացիորեն պնդում է, որ Մերձավոր Արևելքը կարևոր տեղ է զբաղեցնում համաշխարհային գործընթացներում: Ստորև տրվում է երկու մեջբերում նրա հետազոտություններից: Առաջինը՝ Մերձավոր Արևելքի հետ կապված. «Բացառիկ է Մերձավոր Արևելքի ռազմավարական նշանակությունը, ինչն ապացուցվել է հազարամյակների ընթացքում, պատմական բոլոր դարաշրջաններում: Այն երկիրը, որը տիրապետող կամ ազդեցիկ դիրքեր ունի միջազգային շահերի ու հետաքրքրությունների այս խաչմերուկում, որտեղ «եփվում» են միջազգային հարաբերությունների շատ կարևոր հարցեր, ինքնաբերաբար ձեռք են բերում թելադրողի կարգավիճակ»:

Եվ երկրորդ, առավել հիշվող թեզերից մեկն այն է, որ Հնդկական և Խաղաղ օվկիանոսները շուտով դառնալու են աշխարհաքաղաքական գործընթացները թելադրող թատերաբեմեր: Այս երկու պնդումներն արտացոլում են տասնամյակների հարուստ փորձը և ապագան ուրվագծելու ձիրքը:

Հարկ է նաև հավելել, որ միջազգային հարաբերությունների և աշխարհաքաղաքական խնդիրների ուսումնասիրությունը խորը հիմքերի վրա դնելու մղումով էր, որ 2011 թ. պրոֆեսոր Հովհաննիսյանը նախաձեռնեց Արևելագիտության ինստիտուտի կառուցվածքում նոր բաժնի ստեղծումը, որը կոչվում է «Մերձավոր և Միջին Արևելքի միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրության բաժին»:

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ

ԻՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՊՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Միջազգայնագետ-արևելագետ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ է գրավում Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության հետազոտությունը: Այս ոլորտում նրա ուսումնասիրությունների արդյունքում տպագրվել են բազմաթիվ գիտական աշխատություններ և հոդվածներ, որոնք վերլուծում են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականության առանձնահատկությունները Մերձավոր Արևելքում և Այսրկովկասում:

1993 թ. «Իրան Նամե» պարբերականում Նիկոլայ Հովհաննիսյանը վարում էր սյունակ՝ «Իրանը Մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում (1979-92 թթ.)»[37] վերտառությամբ, որտեղ պարբերաբար քննարկում էր Իրան-տարածաշրջանի երկրներ հարաբերությունների վայրիվերումները: Ուշագրավ են նաև հեղինակի անձնական մոտեցումները «Իրանգեյթ» գործարքի վերաբերյալ, որի մասին հայկական պարբերականներում բավական սուղ տեղեկություններ կան: Պրոֆեսոր Հովհաննիսյանը ոչ միայն խորաթափանցորեն հետազոտել է Իրանի հարաբերությունների վայրիվերումները հարևան արաբական երկրների հետ, այլ նաև իր վերլուծություններում նախանշել է Մերձավոր Արևելքում արդի փոփոխությունների ուրվագծերը: Նրա՝ Իրան-Սաուդյան Արաբիա և Իրան-Եգիպտոս հարաբերությունների

---

[37] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Իրանը Մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում (1979-1992 թթ.), «Իրան Նամե», Երևան, 1993, N2-6:

սրման մասին հոդվածներն ընթերցողին հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու Մերձավոր Արևելքի ուժային համամասնության ու ներկայումս առկա խնդիրների իրական արմատների մասին:

Նիկոլայ Հովհաննիսյանի ուշադրության կենտրոնում են եղել նաև էթնոքաղաքական խնդիրները, որոնք բավական ակտիվ դրսևորումներ ունեցան տարածաշրջանում հատկապես ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Նա հատկապես քննության առարկա է դարձրել Ղարաբաղի հիմնախնդրի լուսաբանումը, որն ավելի ուշ տպագրվեց որպես մենագրություն՝ «Ղարաբաղյան հիմնախնդիրը. անկախության և ազատության փշե ճանապարհը»[38] վերնագրով: Միևնույն ժամանակ ԱՄՆ-ում՝ Մերիլենդի համալսարանում, դոկտոր Հովհաննիսյանը հրատարակել է աշխատություն՝ «Էթնոքաղաքական առճակատումներն Անդրկովկասում: Նրանց արմատները և լուծումները»[39] խորագրով, որում ևս վեր էին հանվում Լեռնային Ղարաբաղի շուրջ առաջացած խնդրի ակունքները: Այստեղ մեր ուշադրությունը գրավեց Ն. Հովհաննիսյանի՝ Ղարաբաղյան խնդրի լուծման իրանական ջանքերի վրա ուշադրության բևեռումը: Ինչպես հատուկ շեշտադրում է Ն. Հովհաննիսյանը, Իրանը զարգացրել էր խաղաղության նախաձեռնությունը, որը 1992 թ. մարտին ներկայացվել էր ոչ միայն Հայաստանին ու Ադրբեջանին, այլև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը: Հատկանշական է նրա այն պնդումը, որ ղարաբաղյան խնդրում ներգրավվելիս Իրանը նպատակ էր հետապնդում թե՛ հեռու պահել տարածաշրջանը Թուրքիայի

---

[38] **Nikolay Hovhannisyan**, The Karabakh Problem. The Thorny Road to Freedom and Independence, Yerevan, 2004.

[39] **Николай Оганесян**, "Нагорно-карабахский конфликт и варианты его решения",- в книге "Этнополитические конфликты в Закавказье: их истоки и пути решения" (коллектив авторов). Мерилендский университет, США, 1997, стр. 39-43.

ու ԱՄՆ-ի ազդեցությունից, թե՛ միևնույն ժամանակ զգուշանում էր Այսրկովկասի ռուսական գերիշխանության տակ հայտնվելուց:

Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայաստանի արտաքին քաղաքականությունը» անգլիալեզու գրքի 4-րդ բաժինն ամբողջությամբ նվիրված է Հայաստան-Իրան հարաբերություններին, որտեղ նա բազմակողմանիորեն հետազոտել է Իրանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի շուրջ առաջացած խնդրի նկատմամբ, ինչպես նաև քննարկել է այն միջնորդական առաքելությունը, որն այդ տարիներին ցուցաբերում էր Իրանի Իսլամական Հանրապետությունը: Պրոֆեսոր Հովհաննիսյանն արդարացիորեն նշում է, որ Իրանը հետաքրքրված էր Հայաստանի Հանրապետությունում իրավիճակի կայունացմամբ ու Երևանի ամուր դիրքերի հաստատմամբ, ինչը նախևառաջ դիտարկվում էր որպես հակակշիռ թուրքական շահերին և կարող էր կանխել Թուրքիայի՝ տարածաշրջանում ակտիվ դերակատարության հավանականությունը[40]:

Մեզ համար խիստ արժեքավոր է հատկապես ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանի «Այաթոլլահ Խոմեյնիի մոտեցումը Խորհրդային Միության հետ հարաբերությունները կարգավորելու հարցում և դիրքորոշումը Հայաստանի ու հայության համար» զեկույցը, որով նա 2012 թ. հանդես եկավ «Հայաստան-Իրան 20 տարի համագործակցության ճանապարհով» գիտաժողովում: Զեկույցը պարունակում էր նաև հատվածներ պրոֆեսոր Հովհաննիսյանի հարուստ անձնական հուշերից, որոնք առաջին անգամ ներկայացվեցին հասարակությանը: Ուշագրավ էին հատկապես նրա մասնակցությամբ քննարկումները Մուստաֆա Չամրանի հետ, ով Խոմեյնիի մերձավոր մարդկանցից էր և հետա-

---

[40] **Nikolay Hovhannisyan**, The Foreign Policy of Armenia, Yerevan, 1998.

գայում էլ գլխավորեց Իսլամական հեղափոխության պահապան կորպուսը: Այդ քննարկումների արդյունքում հաջողվեց ստանալ իրանական կողմի հավաստիացումները, որ Իսլամական հեղափոխությունից հետո իրանահայությունն առանց որևէ խնդրի կարող էր շարունակել ապրել Իրանում: Անգամ Խոմեյնիի մակարդակով ուղերձ էր փոխանցվել իրանահայությանը. «Իրանն այն պետությունը չէ, իսկ պարսիկներն էլ այն ժողովուրդը չեն, որ հայերի նոր ցեղասպանություն կազմակերպեն: Հայերը մեր եղբայրներն են»[41]: Դրանից հետո միայն մինչ այդ շահին հավատարիմ իրանահայության մի զգալի մասը վճռեց վերադառնալ և կրկին բնակվել Իրանում: Նիկոլայ Հովհաննիսյանին այս առաքելության շրջանակներում հաջողվել էր Մուստաֆա Չամրանին փոխանցել իրանահայության ուղերձը. «...իրանահայությունը ոչ թե հավատարիմ էր շահին, այլ Իրանի գործող վարչակարգին»: Այսուհետ համայնքը հավատարիմ էր լինելու Իսլամական Հանրապետության վարչակարգին:

Այս ելույթում, որը հետագայում վերածվեց գիտական հոդվածի, այնպիսի պատմագրական հուշեր կան, որ կարող են օգտակար լինել XX դարի վերջի Իրանի արտաքին քաղաքականության ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողների համար:

Դոկտոր Ն. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում մշտապես եղել է Հայոց ցեղասպանության հայեցակարգային հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որին նվիրված է նրա հետազոտությունների մի ամբողջ շարք: Նրա կատարած աշխատանքները բավական բարձր են գնահատվել աշխարհում, ինչով և պայմանավորված է նրա մենագրությունների թարգմանությունն աշ-

---

[41] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 74,75:

խարհի տարբեր լեզուներով: Նրա «Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտական քննական լույսի ներքո» աշխատությունը 2009 թ. տպագրվել է նաև պարսկերենով Թեհրանում[42]:

Մեր ուշադրությունը գրավեց նաև այն փաստը, որ Ն. Հովհաննիսյանն ակտիվորեն զբաղվել է նաև քաղաքական իսլամի ուսումնասիրությամբ: Այստեղ ևս նրա ուշադրության կենտրոնում են եղել Իրանի Իսլամական հեղափոխությունը և դրա անդրադարձը մերձավորարևելյան երկրների քաղաքական ուղեգծի վրա: Նրա գիտական աշխատանքներն այս ոլորտում տպագրվել են Մոսկվայում, հաճախ գերգաղտնի ծածկագրի ներքո, որն օգտագործվում էր միայն հատուկ նշանակության համար: Դրանց շարքին է պատկանում "Современный Ислам: проблемы политики и идеологии" գիտական ժողովածուն, որտեղ նա ունեցել է բազմաթիվ հոդվածներ այս թեմայի վերաբերյալ: Առավել ուշագրավ էին մեզ համար "О некоторых последствиях активизации ислама"[43] и "О соотношении антиимпериалистической и антисоциалистических потенций ислама"[44] գիտական հոդվածները: 1986 թ. Արևելագիտության ինստիտուտում տպագրվեց կոլեկտիվ մի աշխատություն՝ "Ислам в политической жизнии стран современного Ближнего и Среднего Востока" վերտառությամբ,

---

[42] **Nikolay Hovhannisyan**, Nasl-Kushi-i-Armaniyan, tarjumat Qarun Sarqsyan, edited by Mostafa Zamani-Nia, Qitab Siyamak, Tehran, 2009

[43] **Николай Оганесян.** О некоторых последствиях активизации ислама. Современный Ислам: проблемы политики и идеологии, Комплексная программа научных исследований по актуальным проблемам современного исламоведения. Академия наук СССР, вып. 4, часть III, Москва, 1988.

[44] **Николай Оганесян.** О соотношении антиимпериалистической и антисоциалистической потенций ислама. Современный Ислам: проблемы политики и идеологии. Комплексная программа научных исследований по актуальным проблемам современного исламоведения. Академия наук СССР, Москва, 1985.

որը կրկին վերաբերում էր իսլամի ակտիվացմանը: Ուշագրավ է, որ Ն. Հովհաննիսյանի՝ իսլամի ակտիվացման ու հնարավոր ծավալման վերաբերյալ առաջ քաշած մի շարք դրույթներ այսօր արդեն իրականություն են դարձել: Մասնավորապես իսլամի ժողովրդագրական պայթյունը Եվրոպայում նրա կողմից կանխատեսվել էր դեռևս անցյալ դարի ութսունականներին:

Հատկանշական է, որ 2004 թ. Նիկոլայ Հովհաննիսյանը հրատարակեց «Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջան»[45] մենագրությունը, որն ըստ էության այս տարիներին իրանագիտությանը վերաբերող նրա բոլոր հետազոտությունների ամփոփումն է: Հատկապես ուշագրավ է գրքի «Մի դրվագ հայերի հանդեպ այաթոլլահ Խոմեյնիի դիրքորոշումից» գլուխը, որը նոր լույս է սփռում հայերի նկատմամբ Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարության որդեգրած քաղաքականության վրա:

---

[45] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջան, Երևան, 2004:

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտի գիտաշխատող

ՔՐԴԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՊՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Էթնոքաղաքական հակամարտությունները մերձավորարևելյան մի շարք երկրների հասարակական-քաղաքական կյանքում ավանդական երևույթ են դարձել, իսկ քրդական հիմնախնդիրն այսօր էթնոքաղաքական առավել բարդ ու անլուծելի թվացող հակամարտություններից մեկն է ժամանակակից միջազգային հարաբերությունների համակարգում: Աշխարհաքաղաքական վերջին զարգացումների հետևանքով մերձավորարևելյան տարածաշրջանում առաջացած անկայունությունն առավել քան երբևէ արժևորում է քրդական հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը և դրա կարգավորման հեռանկարների կարևորությունը՝ պայմանավորված մերձավորարևելյան մի շարք պետությունների սահմանների վերաձևման անխուսափելիությամբ:

Մեր իրականության մեջ վերլուծական-փորձագիտական տարբեր շրջանակներում պարբերաբար քննարկվում են քրդական հիմնախնդրի տարբեր ասպեկտները, սակայն պետք է փաստել, որ դրանք երբեմն իրատեսությունից զերծ, պատմական փաստերի անտեսմամբ ու աղավաղմամբ վերլուծություններ ու հոդվածներ են: Այս համատեքստում, թերևս, առավել կարևորվում է իրավիճակային զարգացումների խորքային համապարփակ հետազոտությունների և վերլուծությունների անհրաժեշտությունը: Պրոֆեսոր Հովհաննիսյանի՝ քրդական հիմնախնդրին վերաբերող ուսումնասիրությունները հենց այդպիսիք են:

Քրդական հիմնախնդիրը մշտապես գտնվել է Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների ուղեծրում: Իր վաղ շրջանի աշխատություններում[46] Հովհաննիսյանը հաճախ անդրադարձել է տարածաշրջանում պարբերաբար ծավալված քրդական շարժումներին և, ի տարբերություն ժամանակի խորհրդային արևելագետների, համակողմանի ներկայացրել և օբյեկտիվ գնահատել է քրդական շարժումների էությունը, քրդերի ցեղաաշիրեթային ինքնության խնդիրները:

1994 թ. Արևելագիտության ինստիտուտը բրիտանական Curzon Press հրատարակչության հետ համատեղ հրատարակեց «Քրդագիտական գրություններ» (Akta Kurdica) ժողովածուն, որի առաջին համարում լույս տեսավ պրոֆեսոր Հովհաննիսյանի «Պարսից ծոցի պատերազմը և քրդական խնդիրը»[47] բավականին հետաքրքիր հոդվածը: Հոդվածում համապարփակ ներկայացված են ժամանակի քրդական շարժումները Թուրքիայում, Իրաքում և Իրանում՝ շեշտադրելով այս երկրներից յուրաքանչյուրում քրդական պայքարի առանձնահատկությունները՝ իրենց բազմատարր, հակասական դրսևորումներով, քրդերի ազգային ինքնության ձևավորման խնդիրները, քրդական հավակնությունները և ակնկալիքները Ծոցի պատերազմից:

Նիկոլայ Հովհաննիսյանի՝ քրդական հիմնախնդրի վերաբերյալ մյուս ուսումնասիրություններն արդեն այլ ուղղվածություն ունեն և դիտարկում են քրդական գործոնը հիմնա-

---

[46] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Ազգային-ազատագրական պայքարը Իրաքում (1945-1963), Երևան, 1964: Նիկոլայ Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն (VII դ. – 2007 թ.), Երևան, 2003-2007: **Н.Оганесян**, Национально - освободительное движение в Ираке, Ереван, 1976.

[47] **N. Hovhannisyan**, The Persian Gulf War and the Kurdish Problem (A Brief Account), London, 1994, pp. 65-73.

կանում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության հայեցակարգում:

Անդրադառնանք «Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգում»[48] ուսումնասիրությանը: Այստեղ պրոֆ. Հովհաննիսյանը համակողմանի ներկայացնում է քրդական գործոնի ազդեցության աշխարհաքաղաքական կարևորությունը, քննարկում տարածքային սահմանները, որոնք քրդական հարցի սրման դեպքում պարտադիր կներառվեն տարածաշրջանի ռազմաքաղաքական զարգացումներում: Նա շեշտադրում է այն հանգամանքը, որ Իրաքում, Թուրքիայում, Սիրիայում և Իրանում քրդերը դեռևս պահպանում են քաղաքական գործոն լինելու իրենց կարևորությունը. «...քրդական գործոնն ունի իր վեկտորները, դրսևորվում է տարբեր աստիճաններով և ուղղություններով ու տարբեր դերակատարումներ ունի նշված չորս երկրներում»[49]:

Ըստ պրոֆեսոր Հովհաննիսյանի՝ քրդերն այժմ Իրաքում ձեռք են բերել ինքնավարության այնպիսի բարձր աստիճան, որն ընդհուպ մոտեցել է անկախության կարգավիճակի, և Իրաքի քաղաքական կարգավորման խնդիրն անհնար է լուծել առանց քրդական գործոնի հաշվառման:

Անդրադառնալով Իրանի Իսլամական Հանրապետությունում քրդական խնդրին՝ Հովհաննիսյանը նկատում է, որ այստեղ քրդերի իրավունքների հարցը փորձ է արվում տեղավորել համաիսլամական հիմնադրույթների շրջանակներում՝ փաստելով, որ քրդերը երկրի «Իսլամական ազգի» ("Islamic Nation") բաղադրամասերից մեկն են: Սակայն, համա-

---

[48] Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգում, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ գիտափորձագիտական մատենաշար, հ. 3, Երևան, 2014, էջ 48-55:

[49] Նշվ. աշխ., էջ 44, 45:

կողմանի ճանաչելով հարևան պետության բազմաշերտ ու խորքային էությունը, հեղինակը չի բացառում, որ «...քրդական համայնքի ներսում խմորումներ են ընթանում, որոնք որպես գործոն հրապարակավ ի հայտ կգան համապատասխան պայմանների առկայության պարագայում»:

Դեռևս «արաբական գարնան» նախափուլում արված իր վերլուծության մեջ պրոֆ. Հովհաննիսյանը կանխատեսել էր այն իրավիճակը, ինչի ականատեսն ենք այսօր. Սիրիայի ներքաղաքական ճգնաժամի արդյունքում քրդական տարրի ակտիվացմանը զուգընթաց Միացյալ Նահանգները և Ռուսաստանի Դաշնությունը վերանայեցին իրենց դիրքորոշումներն ու հետաքրքրությունները քրդական գործիքակազմը տարածաշրջանային զարգացումներում բազմակողմ շահարկելու վերաբերյալ:

Ամրագրելով և փաստարկելով այն տեսակետը, որ իր ներկա զարգացումներում քրդական տարրը չի կարող անմիջական վտանգ ներկայացնել Հայաստանի համար, լայնախոհ արևելագետը միաժամանակ հիմնավորում է, որ հակամարտային իրադրությունը ՀՀ սահմանների անմիջական հարևանությամբ, միևնույնն է, չի կարող չմտահոգել, քանի որ քրդական հավակնություններն ընդգրկում են Արևմտյան Հայաստանի գրեթե ողջ տարածքը՝ երբեմն ներառելով նաև Հայաստանի Հանրապետության որոշ եզդիաբնակ շրջաններ: Այդ պատճառով քրդական հիմնախնդիրը Թուրքիայում պետք է բացառիկ տեղ գրավի քրդական գործոնի վերաբերյալ հայկական հայեցակարգում:

Խորքային պատմական վերլուծության ենթարկելով հայ-քրդական հարաբերություններն Օսմանյան կայսրությունում՝ պրոֆեսորը միանշանակ հանգում է այն եզրակացության, որ «քրդական տարրը դամոկլյան սրի պես արևմտահայության գլխին կախվեց արդեն այն պահից, երբ սկսվեց քրդերի զանգվածային վերաբնակեցումը հայկական բնօրրա-

նում: Սկսվեց Արևմտյան Հայաստանի վարչատարածքային մարզերի անընդմեջ վերածնումը՝ նպատակակետ ունենալով նպաստելու թուրքական և քրդական էթնոսի թվական գերակայությանը՝ ի հաշիվ հայերի թվաքանակի նվազեցման իր բնօրրանում: Սուլթանական իշխանությունների հակահայ քաղաքականությունը անհնար կլիներ իրագործել այնպիսի մեծ ծավալներով ու դաժանությամբ, ինչպես տեղի ունեցավ իրականում, եթե օսմանյան իշխանություններին չհաջողվեր այդ գործում ներգրավել քրդական ցեղաաշիրեթական ավագանուն, ավատատեր շեյխերին: Միանգամայն իրավացիորեն պրոֆ. Հովհաննիսյանը քրդերին համարում է Մեծ եղեռնի մասնակից երրորդ կողմ, ովքեր հիմնականում կանգնեցին օսմանյան ոճրագործների կողքին՝ ընդդեմ անպաշտպան հայ բնակչության: Քրդերի նման քաղաքականությունը պատահական չէր. այն նախապատրաստված էր նախորդ դարերում նրանց կատարած բազում հակահայ ձեռնարկումներով: Նրանց մասնակցությունը 1915 թ. Հայոց ցեղասպանությանը այդ քաղաքականության տրամաբանական շարունակությունն էր: Հայկական հարցում պատմական պատասխանատվություն են կրում նաև քրդերը: Այս դրույթը հեղինակը զարգացնում և հիմնավորում է նաև «Քրդական պատասխանատվություն»[50] և «Հայկական ջարդերի և Հայոց ցեղասպանության իրականացման մեջ քրդական գործոնի դերակատարման մասին»[51] հոդվածաշարում, որը լույս է տեսել «Ազգ» օրաթերթում: Առաջին հոդվածն անդրադարձ է քուրդ

---

[50] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Քրդական պատասխանատվություն, Քուրդ պատմաբանը քուրդ-հայկական հարաբերությունների բարդ հանգույցի և քրդերի՝ Հայոց ցեղասպանությանը մասնակցելու դրդապատճառների մասին, *«Ազգ»*, №36, 02.10.2015:

[51] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Հայկական ջարդերի և Հայոց ցեղասպանության իրականացման մեջ քրդական գործոնի դերակատարման մասին, *«Ազգ»*, №38, 16.10.2015:

պատմաբան Քամալ Մազհար Ահմադի «Քրդստանն Առաջին համաշխարհային պատերազմում» աշխատությանը (արաբերենով լույս է տեսել Բաղդադում դեռևս 1977 թ.), որտեղ հեղինակը փորձում է վերլուծել քուրդ-հայկական հարաբերությունների բարդ հանգույցը և քրդերի՝ Հայոց ցեղասպանությանը մասնակցելու դրդապատճառները: Անդրադառնալով քրդերի մասնակցությանը 1915թ. Հայոց ցեղասպանությանը՝ Քամալ Ահմադը հաստատում է, «որ քրդերն այս կամ այն չափով, գիտակցաբար, թե անգիտակցաբար, ուրիշների կողմից հրահրված, թե կանխամտածված, մասնակցել են այդ սպանդին», «կույր կրոնական մոլեռանդությունը և քաղաքակրթական հետամնացությունն այն երկու գլխավոր պատճառներն էին, որոնք քրդերին դրդեցին անմիջական մասնակից դառնալու հայկական ջարդերին»[52]: Ներկայացնելով քուրդ պատմաբանի ուսումնասիրությունը՝ պրոֆ. Հովհաննիսյանը հույս է հայտնում, որ այն կօգնի ճիշտ ըմբռնել քրդական վերնախավի հակահայկական նկրտումները և թույլ կտա ավելի խորքային պատկերացում կազմել քրդական արդի գիտական, քաղաքագիտական մտքի միտումների վերաբերյալ, որոնք, ըստ պրոֆ. Հովհաննիսյանի, հակասում են հայոց ազգային-քաղաքական կենսական շահերին: Դա կօգնի նաև հասկանալու քրդերի կատարած պատմական խոշոր սխալի՝ Հայոց ցեղասպանությանն ակտիվ մասնակցելու քաղաքական, տնտեսական և կրոնական դրդապատճառները: Այդ սխալը հետագայում շատ թանկ նստեց քուրդ ժողովրդի և նրա քաղաքական ճակատագրի վրա, երբ հանրապետական Թուրքիայի իշխանություններն արյան մեջ խեղդեցին քրդական բոլոր ընդվզումները: «Դա պատմության ամենամեծ

---

[52] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Քրդական պատասխանատվություն..., *«Ազգ»*, № 36, 02.10.2015:

ծաղրն էր, երբ օսմանյան դահիճների դաշնակից քուրդը դարձավ այդ նույն դաշնակից դահճի զոհը»[53]:

Հաջորդ հոդվածը ևս անդրադառնում է քրդերի դերակատարությանը Հայոց ցեղասպանության իրագործման մեջ՝ ներկայացնելով արդի արաբ պատմագիրների ուսումնասիրությունները: Քրդական գործոնը տիպաբանորեն պատկանում է Հայոց ցեղասպանության իրականացման առանցքային հարցերին: Օսմանյան կառավարողները, օգտագործելով քրդերին որպես զենք հայերին բնաջնջելու գործում, հարստացրին իրենց դահճային զինանոցը: Արաբ հեղինակները, առաջնային համարելով օսմանյան ղեկավարության քաղաքականությունը, քրդերի հակահայկական գործունեությունը դիտարկում են որպես դրանից բխող երևույթ՝ բնավ չնվազեցնելով քրդերի պատմական պատասխանատվությունը: «Քրդերն ունեն մեղքի իրենց բաժինը, և գիտությունը չի կարող դա անտեսել»[54]: Ահա թե ինչու նրանք այդքան մեծ տեղ են հատկացրել քրդերի մասնակցությանը հայկական կոտորածներին և 1915 թ. Ցեղասպանությանը:

Պրոֆեսոր Հովհաննիսյանը, անդրադառնալով այսօր Թուրքիայի քրդերի անկախ պետականություն ձևավորելու հավակնություններին, հռետորական հարցադրում է անում՝ որտե՞ղ, ո՞ր տարածքում է այն կազմավորվելու[55]: Քուրդ շատ առաջնորդներ չեն էլ թաքցնում, որ քրդական պետությունը Թուրքիայում հավակնում են ստեղծել Արևմտյան Հայաստանի տարածքում: Ն. Հովհաննիսյանը հիշեցնում է, որ իրենք սոսկ Արևմտյան Հայաստանի բնակիչներ են, ոչ ավելի և «չի կարելի պայքարել պետականության համար ուրիշի պետականության տարածքների վրա նստած: Դրա համար ոչ

---

[53] Նույն տեղում:

[54] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Հայկական ջարդերի..., *«Ազգ»*, №38, 16.10.2015:

[55] Նույն տեղում:

միայն Հիսուս Քրիստոսն է պատժում, այլև Ալլահը և նրա առաքյալ Մուհամմադը»:

Այնուամենայնիվ, զգուշությունը և արդարությունը լավ բան է»[56]:

Նիկոլայ Հովհաննիսյանի ուսումնասիրություններում հայկական ջարդերին և Հայոց ցեղասպանությանը քրդերի մասնակցության և պատասխանատվության խնդրին անդրադարձը խիստ հիմնավորված է. լուսաբանելով պատմական իրողությունները, քրդական հիմնախնդրի շուրջ ստեղծված ներկա իրավիճակը և զարգացման հնարավոր միտումները, ներկայացնելով քրդերի տարածքային հավակնությունները՝ լայնախոհ մտավորականն առաջարկում է մշակել Քրդական հարցի հայեցակարգ՝ ելակետ ընդունելով ոչ միայն Հայաստանի Հանրապետության ռազմավարական անվտանգության ապահովումը, այլև Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման տեսլականը:

Ակնհայտ իրողություն է, որ Թուրքիայի քուրդ հասարակական-քաղաքագիտական մտքում չկա համախմբվածություն, միասնական գաղափար սեփական ապագայի վերաբերյալ՝ մշակութային ինքնավարություն, համադաշնություն կամ անկախ քրդական պետություն: Սակայն միասնական և համընդհանուր է մեկ մոտեցում. թե՛ ինքնավարության, թե՛ պետականության կայացման դեպքում էլ տարածքային հավակնությունները հայոց պատմական բնօրրանում են...

Այս իրողությունների և տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում մեկ անգամ ևս արժևորելով քրդական գործոնի նշանակությունը՝ Նիկոլայ Հովհաննիսյանը քրդական հիմնախնդրի վերաբերյալ իր ուսումնասիրությունները մեկտեղեց մեկ գրքում՝ դրանք առավել համակարգված և հասանելի դարձնելով թե՛ փորձագի-

---

[56] Նույն տեղում:

տական շրջանակների, թե՛ հասարակական քննույթի համար[57]: Հաշվի առնելով ներկայումս Մերձավոր Արևելքում ծավալվող գործընթացները, երբ ազգային և կրոնական գործոնները կարող են դառնալ պետությունների ներքաղաքական ապակայունացման և քայքայման հենակետ, պրոֆեսորը մեջբերում է Ամերիկյան քաղաքագիտական կենտրոնների փորձագետների վերլուծությունները, ըստ որի՝ տրոհման ենթակա հնարավոր 37 պետությունների ցանկում Թուրքիան 6-րդն է[58]: Հովհաննիսյանը չի բացառում Թուրքիայի Հանրապետության՝ որպես պետության քայքայման հնարավորությունը, ներկայացնում է քրդերի տարածքային հավակնությունները և փաստում, որ Արևմտյան Հայաստանի հիմնախնդրի կարգավորման հայեցակարգն անհրաժեշտ է ձևավորել՝ ելակետ ընդունելով իրադարձությունների զարգացման այսպիսի հնարավոր ընթացքը ևս:

---

[57] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգում, Երևան, 2016:
[58] Նշվ. աշխ., էջ 66-68:

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ
պ.գ.թ., դոցենտ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՆՆԻ-ՇԻԱ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2010 թ. վերջից, իսկ ավելի ստույգ՝ 2011 թ.-ից ի վեր արաբական մի շարք երկրներում սկիզբ առան հակակառավարական բողոքի աննախադեպ ցույցեր, որոնք հայտնի դարձան «արաբական գարուն» անունով: Մասնավորապես Եգիպտոսում, Թունիսում, Լիբիայում և Եմենում դրանք ուղեկցվեցին իշխանափոխությամբ, իսկ Սիրիայում ձևավորված ճգնաժամը վերաճեց միջազգային հակամարտության:

Միտված լինելով հասարակական-քաղաքական բարեփոխումների իրականացմանն ու ժողովրդավարության հաստատմանը՝ «արաբական գարունն» իրականում որոշակիորեն բարդ ու խրթին իրավիճակներ ստեղծեց Մերձավոր Արևելքում, որոնք դեռևս հանգուցալուծման փուլում են:

Իշխանափոխության հետևանքով ձևավորված վարչակարգերը չկարողացան արդարացնել սեփական հասարակությունների հույսերը: Առանձին պետություններ կորցրին ինքնիշխանությունը, իսկ շատերը հայտնվեցին փխրուն հավասարակշռության մեջ: Արաբական երկրներում աշխուժացան նաև գաղափարական տարաբնույթ ուղղվածություն և հասարակական որոշակի աջակցություն ունեցող իսլամական կրոնաքաղաքական շարժումները, որոնք մինչ այդ գործում էին ընդհատակում, կիսաօրինական դաշտում և կամ էլ արտերկրում: Առկա վայրիվերումների արդյունքում արաբական աշխարհը նահանջ ապրեց արդիականությունից: Որքան էլ պարադոքսալ է, ժողովրդավարության, մարդու իրավունք-

ների, խոսքի ազատության, տնտեսության ազատականացմանը և սոցիալական արդարությանը միտված շարժումները ճանապարհ հարթեցին պահպանողական, արմատական, ինչպես նաև մոլեկրոն շարժումների ու գաղափարախոսությունների առաջխաղացման համար: Ասվածի ապացույցը Եգիպտոսում «Մուսուլման եղբայրների» և նրա քաղաքական թևի՝ «Ազատություն և արդարություն» կուսակցության իշխանության գալն էր[59], նաև սալաֆիական ուղղվածությամբ «Ան-Նուռ» շարժման մուտքը Եգիպտոսի օրենսդիր մարմին[60]: Ոչ պակաս ցայտուն օրինակ է «Իսլամական պետության» առաջացումը:

Ընդհանուր առմամբ «արաբական գարնան» գործընթացներն ի հայտ բերեցին Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող միջդավանական, միջցեղային, միջկրոնական, միջէթնիկ ու նաև սոցիալական այն հակասությունները, որոնք մինչ այդ չեզոքացվում էին արաբական աշխարհի երկարամյա առաջնորդների և նրանց կողմից ստեղծված կայուն անվտանգության համակարգերի շնորհիվ: Լուրջ մարտահրավերներ ձևավորվեցին կրոնադավանական փոքրամասնությունների, այդ թվում՝ քրիստոնյաների համար, որոնց շրջանում աստիճանաբար մեծացան արտագաղթի ծավալները: Ասվածի ապացույցը նաև Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքների վիճակն է[61]:

Բացի նշված իրողություններից, «արաբական գարունը» նպաստեց սուննի և շիա աշխարհաքաղաքական դա-

---

[59] The Egyptian Experience of the Muslim Brotherhood in Power 2012-2013. A Report 9 Bedford Row International, June 3, 2015, p. 108.

[60] The Nour Party Goes Dim, Nov. 21, 2015, http://foreignpolicy.com.

[61] Այս մասին տե՛ս **Ն. Հովհաննիսյան**, Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայկական համայնքները և նրանց հեռանկարը:
http://www.psaa.am/hosting/file/PDF-
s/Dr.%20Prof.%20Nikolay%20Hovhannisyan%20Speech%20ARM.pdf

շինքների միջև հարաբերությունների էլ ավելի սրմանը: «Արաբական գարնան» դեպքերը նոր ազդակներ հաղորդեցին ավանդական ու խորքային այն հակասություններին, որոնք գոյություն ունեին վերջիններիս միջև՝ մի կողմից ի դեմս Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ), մյուս կողմից՝ Սաուդյան Արաբիայի Թագավորության (ՍԱԹ):

Նշենք, որ սուննիական և շիայական թևերի միջև նորագույն շրջանում հակասություններ ու մրցակցություն եղել են դեռևս Սառը պատերազմի տարիներին, որոնք ցայտուն ի հայտ եկան 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից հետո, երբ հեղափոխության առաջնորդ ու գաղափարախոս այաթոլլա Խոմեյնին ծրագրում էր արտահանել շիայական հեղափոխությունը դեպի արտաքին աշխարհ: Այս իրողությունը մտահոգություն առաջացրեց Պարսից ծոցի արաբական միապետությունների շրջանում, որտեղ շիայական համայնքներ կային[62]: Առաջին տագնապողներից մեկը հենց Սաուդյան Արաբիան էր, որի Արևելյան նահանգում և այլ շրջաններում բնակվում են 10-15 միլիոն շիաներ: Սաուդյան Արաբիայում շիա մուսուլմանները ենթակա են տարաբնույթ խտրությունների[63]:

Հատկանշական է, որ իրանա-իրաքյան ութամյա պատերազմի (1980-1988 թթ.) պատճառներից մեկն էլ իրականում կապված էր Իրանի հարցում Սադդամ Հուսեյնի ունեցած մտավախության հետ[64]՝ հաշվի առնելով այն փաստը, որ Իրաքի բնակչության մոտ վաթսուն տոկոսը շիաներ էին[65]:

---

[62] Տե՛ս **Vali Nasr**, The Shia Revival. The Conflict within Islam will Shape the Future, USA, 2006.

[63] The Shiite Question in Saudi Arabia, Middle East Report N°45 – 19 September 2005, International Crisis Group; World Report 2015: Saudi Arabia, https://www.hrw.org/world-report.

[64] FBI interviews detail Saddam Hussein's fear of Iran, WMD bluff, July 2, 2009, http://edition.cnn.com.

[65] Ethnic and Religious Groups in Iraq, http://usiraq.procon.org.

Հարկ է նշել, որ «արաբական գարնան» դեպքերից հետո Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև առաջին լուրջ առճակատումը տեղի ունեցավ Բահրեյնում, այսինքն՝ երրորդ երկրում, որտեղ 2011 թ.-ից հետո սկիզբ առավ հասարակական-քաղաքական հուզումների հսկա ալիք: Նշենք, որ Բահրեյնի բնակչության մեծ մասը տեղաբնիկ շիաներ են, շատ դեպքերում՝ իրանական ծագմամբ[66]: ԻԻՀ-ում համարում են, որ Բահրեյնը պատմական Իրանի մի մասն է, որտեղ 1873 թ. հաստատվել էր Արաբիայի Ուտբա ցեղից սերող Ալ Խալիֆաների դինաստիան, իսկ շրջանը՝ արաբականացվել: Դեռևս 1957 թ. Իրանի խորհրդարանը հռչակեց Բահրեյնը Իրանի 14–րդ նահանգ[67]:

Արդեն 2011 թ. մարտին իրավիճակը Բահրեյնում դուրս էր գալիս վերահսկողությունից: Ցուցարարները, որոնք Մարգարտի հրապարակում անժամկետ նստացույց էին հայտարարել, առաջ էին քաշում մարդու իրավունքների պաշտպանության, տնտեսական և քաղաքական ոլորտներում ազատականացման մի շարք պահանջներ[68]:

Ստեղծված պայմաններում Սաուդյան Արաբիայի թագավորական ընտանիքն իր հետ ազգակցական կապեր ունեցող Բահրեյնի վարչակարգին օժանդակելու նպատակով մարտի 24-ին սահմանափակ զորամասեր մտցրեց Մանամա «Թերակղզու վահան» գործողության շրջանակներում: Էռ-Ռիադը մտավախություն ուներ, որ հակառակ դեպքում Իրանը կշտապեր ավելի ակտիվ կերպով ներգրավվել Բահրեյնում ընթացող գործընթացներին, իսկ շիայական հուզումների ալիքը կներթափանցեր երկրի Արևելյան նահանգ:

---

[66] Bahrain Population 2016, http://worldpopulationreview.com.

[67] **Fred M.** Shelley, Nation Shapes. The Story Behind the worlds Border, ABC-CLIO (April 23, 2013), p. 398.

[68] The Bahraini uprising. Four years later, The Atlantic, Jan 21, http://www.theatlantic.com.

Չնայած պաշտոնական հաղորդագրությանը, որ սաուդական զորամասերը Բահրեյն են ժամանել՝ պաշտպանելու երկրի կարևորագույն ենթակառուցվածքները և վերականգնելու կարգուկանոնը, պարզ էր, որ իրական նպատակը Մանամայում շիայական խռովությունը ճնշելն էր[69]: Թեև սաուդական միջամտության արդյունքում իշխանափոխությունը Բահրեյնում կասեցվեց, սակայն սուննիական և շիայական համայնքների միջև արտաքին միջամտության պատճառով խորացավ միջհամայնքային լարվածությունը[70]:

Ամեն պարագայում Բահրեյնում ցույցերի ճնշելը չխանգարեց, որպեսզի ՍԱԹ-ի շիայաբնակ շրջաններում ընդվզումներ լինեն: 2011 թ. փետրվար-մարտից հակաշիայական խտրականության դեմ ցույցեր տեղի ունեցան շիայաբնակ Կատիֆում, Հոֆուֆում, Ալ-Ավամիյայում, նույնիսկ Էռ-Ռիադում՝ շարունակվելով 2012-2013 թթ. ընթացքում[71]:

Հատկանշական է, որ Պարսից ծոցի քաղաքական վերնախավերի և այլևայլ շրջանակներում կար այն տեսակետը, որ թե՛ Բահրեյնի և թե՛ ՍԱԹ-ի Արևելյան նահանգի հուզումները կազմակերպել են իրանական հատուկ ծառայությունները, իսկ տեղական շիայական համայնքների արմատական տարրերը ծառայում են որպես «հինգերորդ շարասյուն»[72]:

Սաուդա-իրանական լարվածության հաջորդ հանգրվանը Սիրիան էր, որտեղ 2011 թ. մարտից սկսված հակակառավարական բողոքի գործողությունները վերաճեցին քաղաքացիական պատերազմի, իսկ որոշ ժամանակ անց՝ միջազգային հակամարտության: Թե՛ Իրանը և թե՛ Սաուդյան

---

[69] Железнов А.А. «Бахрейнская проблема» Саудовской Аравии, 16 января, 2014. http://www.iimes.ru.

[70] Նույն տեղում:

[71] Նույն տեղում:

[72] Նույն տեղում:

Արաբիան ներգրավվեցին սիրիական խնդրում որպես հակառակորդ կողմեր: Սաուդյան Արաբիան դաշինքի մեջ էր Թուրքիայի և Կաթարի հետ, ովքեր նույնպես հետամուտ էին Բաշար Ալ-Ասադի իրանամետ վարչակարգի անհապաղ տապալմանն ու Սիրիայում սուննիամետ ուժերի իշխանության հաստատմանը: Մյուս կողմից, Իրանը Սիրիան համարում էր տարածաշրջանում իր հենակետն ու «Հիզբալլահի» հետ համագործակցության շղթայի կարևորագույն մասը՝ հետամուտ լինելով Ալ-Ասադի վարչակարգի աջակցությանը դիվանագիտական, ռազմատեխնիկական և այլևայլ ոլորտներում: Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ մարդու և մասնավորապես փոքրամասնությունների իրավունքների ոլորտներում բազմաթիվ խնդիրներ ունեցող ՍԱԹ-ը, որի պետական գաղափարախոսության հիմքում ընկած է սուննի իսլամի ամենաարմատական ուղղություններից մեկը՝ վահաբականությունը (որը փաստորեն սալաֆիականության սաուդական մեկնաբանությունն է), առաջ էր քաշում Սիրիայում ժողովրդավարության հաստատման և մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված հարցեր: ՍԱԹ-ի գործուն միջամտությամբ 2011-2015 թթ. դադարեցվեց Սիրիայի անդամակցությունն Արաբական պետությունների լիգային, իսկ 2012 թ.-ից՝ Իսլամական համագործակցության կազմակերպությանը[73]:

Սաուդյան Արաբիան հսկայածավալ միջոցներ ներդրեց սիրիական արմատական ընդդիմությանն աջակցելու, զինելու ու ֆինանսավորելու հարցում: Սիրիայում կառավարական զորքի դեմ կռվող մի շարք վահաբական ռազմաքաղաքական խմբավորումներ ունեն սաուդական հովանավորություն: Բացի այդ, ՍԱԹ-ը համարվում է «Դաիշին» օժան-

---

[73] Organisation of Islamic Cooperation Suspends Syria, Aug 15, http://www.reuters.com.

դակած պետություններից մեկը[74]:

Հարկ է նշել, որ սիրիական ճգնաժամի արդյունքում երկիրը մասնատվեց, կորցրեց ինքնիշխանությունը, հարյուրհազարավոր սիրիացիներ մահացան, միլիոնավորները դարձան փախստականներ, իսկ 2014 թ. հուլիսի 29-ին Դաիշը Սիրիայի և Իրաքի որոշ տարածքների վրա հռչակեց «Իսլամական պետություն» խալիֆայությունը, որը տարածաշրջանի անվտանգությանը, փոքրամասնություններին, ոչ սալաֆիական ուղղվածությամբ մուսուլմաններին, առհասարակ միջին-արևելյան քաղաքակրթությանն ու մշակույթին ուղղված լրջագույն սպառնալիք է: Այս հարցում իր ծանրակշիռ մեղքի բաժինն ունի Սաուդյան Արաբիայի Թագավորությունը, որի քաղաքականությունը վերջնական հարված հասցրեց նաև արաբական միասնության ու համերաշխության գաղափարին:

«Արաբական գարնան» դեպքերից որոշ ժամանակ անց ՍԱԹ-ի և Իրանի մրցակցության մեկ այլ թատերաբեմ դարձավ Եմենը, որտեղ նոր թափ ստացած քաղաքացիական պատերազմը կանխելու նպատակով, ընդառաջ գնալով նախագահ Աբդ Ռաբուհ Մանսուր Հադիի խնդրանքին, ԱՄՆ-ի աջակցությունն ունեցող ՍԱԹ-ի առաջնորդած դաշինքն արաբական ինը երկրի մասնակցությամբ 2015 թ. մարտի վերջից օդային հարվածներ հասցրեց շիա իսլամի զեյդիական ուղղությունը դավանող ապստամբների դիրքերին: Նշենք, որ զեյդիների ռազմաքաղաքական կառույցի անդամները կոչվում են հուսիներ՝ շարժման հիմնադիր և առաջնորդ շեյխ Հուսեյն Բադր Ադ-դին Ալ-Հուսիի անունով, ով մահացել է 2004 թ. սեպտեմբերին Եմենում զեյդիների ապստամբության ժամանակ[75]: Ի դեպ, 2004 թ.-ից ի վեր Եմենում տեղի են

---

[74] **Carol E. B.** Choksy, Jamsheed K. Choksy, The Saudi Connection: Wahhabism and Global Jihad, May/June, 2015, http://www.worldaffairsjournal.org.

[75] Yemeni forces kill rebel cleric, 10 September, 2004, http://news.bbc.co.uk.

ունեցել մի շարք զեյդիական հուզումներ, որոնք առավելապես ղեկավարվել են Հուսիների ընտանիքի կողմից: 2009 թ. հուզումների ժամանակ զեյդիները ներխուժեցին Սաուդյան Արաբիայի հարավային շրջաններ և մի քանի սահմանամերձ գյուղեր գրավեցին, ինչը լուրջ տագնապ առաջացրեց Էր-Ռիադում[76]:

2014-2015 թթ. հուսիները Եմենում կարողացան գրավել բազմաթիվ մեծ ու փոքր բնակավայրեր, ինչպես նաև ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք օբյեկտներ: 2015 թ. հունվարի վերջերին նրանք գրավեցին Սանայի պետական հեռուստաընկերությունը, անվտանգության ծառայության շենքը և նախագահի նստավայրը: Ստեղծված իրավիճակում հունվարի 22-ին թե՛ նախագահ Աբդ Ռաբուհ Մանսուր Հադին և թե՛ կառավարության անդամները հրաժարական տվեցին՝ հայտնվելով տնային կալանքի մեջ: Փետրվարին Հադիին հաջողվեց փախչել Ադեն՝ հռչակելով այն Եմենի ժամանակավոր մայրաքաղաք: Փետրվարի 6-ից իշխանությունն անցավ հուսիներին: Դե ֆակտո նախագահ դարձավ Հեղափոխական կոմիտեի առաջնորդ Մուհամմադ Ալի Ալ-Հուսին: Երբ մարտի 25-ին հուսիները գրավեցին Ադենը, նախագահ Հադին փախավ Սաուդյան Արաբիա՝ օգնություն խնդրելով Պարսից ծոցի համագործակցության խորհրդից՝ վերականգնելու երկրի սահմանադրական կարգը: Ի վերջո, մարտի 26-ին դաշինքը սկսեց Եմենի օդային հարվածները, որոնք կրում էին «Փոթորիկ վճռականության» անվանումը[77]: Դրանք շարունակվում են մինչ օրս: Օդային հարվածների երկար ու ծիգ ամիսների ընթացքում վնասվել են բազմաթիվ պետական և մասնավոր շենքեր, հիվան-

---

[76] Saudis 'in a Panic Mode' as Shi'ite Rebels Move North from Yemen, December 4, 2009, http://www.worldtribune.com.

[77] Saudi Arabia Launches Yemen Air Strikes as Alliance Builds against Houthi Rebels, 26 March, http://www.theguardian.com.

դանոցներ, արդյունաբերական օբյեկտներ, հազարավոր անմեղ քաղաքացիներ ու զինվորականներ են մահացել: Օդային հարվածները խիստ քննադատության արժանացան Իրանի կողմից՝ որպես Եմենի ինքնիշխանությանն ուղղված քայլ, որպես Եմենի ժողովրդի ցեղասպանություն[78]:

Նշենք, որ Եմենի ներքաղաքական գործողություններին ներքաշված է նաև Արաբական թերակղզու Ալ-Կաիդայի մասնաճյուղը[79], ինչպես նաև «Դաիշը», որոնք պատասխանատու են մի շարք ահաբեկչական գործողությունների համար: Հատկանշական է, որ նրանք Եմենում ունեն իրենց օրակարգը՝ կապված իսլամական պետության ստեղծման հետ[80]:

Օդային հարվածներն այդպես էլ չկարողացան կասեցնել Եմենում սկիզբ առած քաղաքացիական պատերազմն ու վերականգնել երկրի կայունությունը, չնայած Հադին վերադարձավ Ադեն, իսկ հուսիները Սանայում շարունակեցին իշխանության մաս կազմել: Իր նորագույն շրջանի պատմության մեջ միասնականության խնդիր ունեցող Եմենը հերթական անգամ հայտնվեց ճգնաժամի մեջ, որտեղ բազմաթիվ այլ խնդիրների կողքին բացասական դեր խաղացին թե՛ սուննիշիա հակամարտությունը և թե՛ Իրանի ու Սաուդյան Արաբիայի միջև գոյություն ունեցող հակասությունները: ՍԱԹ-ի գործողությունները Եմենում կարելի է տարբեր տեսանկյուններից մեկնաբանել՝ որպես արտաքին միջամտություն, որպես եմենա-սաուդական սահմանների, Եմենի սահմանադրական կարգի, ինչպես նաև Պարսից ծոցի անվտանգության պաշտպանությանը միտված քայլ, ինչը նպատակ ունի զերծ պահելու Եմենն Իրանի միջամտությունից և շիայական

---

[78] Iran's Leader Says Saudi Air Strikes Causing Genocide, April 9, http://www.reuters.com.

[79] Нечитайло Д.А. «Аль-Каида» в Йемене, http://www.iimes.ru.

[80] Yemen Crisis: Who is Fighting Whom?, March, 26, http://www.bbc.com.

կառավարումից: Մյուս կողմից, հուսիների գործողությունները կարելի է բնորոշել որպես անթաքույց իրանական հովանավորություն ունեցող շիայական հուզումներ, որոնք հազիվ թե նման հաջողություններ ունենային առանց Թեհրանի և «Հիզբալլահի» գործուն աջակցության[81]:

Փաստորեն Իրանի և Սաուդյան Արաբիայի մրցակցությունը Եմենում հանգեցրեց ոչ միայն քաղաքացիական, այլև տարածաշրջանային պատերազմի՝ իր բոլոր բացասական հետևանքներով[82]:

Սաուդյան Արաբիայի և Իրանի միջև վերջին լարվածությունը կապված էր 2016 թ. հունվարի 2-ին ՍԱԹ-ում շիա խարիզմատիկ հոգևորական Նիմր Ալ-Նիմրի մահապատժի հետ, ով մեղադրվում էր ահաբեկչության մեջ[83]: Այս դեպքը բողոքի լայնածավալ ալիք առաջացրեց Իրանում, խիստ քննադատությամբ հանդես եկան Իրանի իշխանություններն ու իրանական հասարակությունը[84]: Հարձակումներ տեղի ունեցան Իրանում սաուդական դիվանագիտական ներկայացուցչությունների վրա: Արդյունքում Սաուդյան Արաբիան խզեց Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունները՝ ձեռնամուխ լինելով հակաիրանական քարոզչությանը[85]: Իսլամական երկու պետությունների միջև սկիզբ առած ճգնաժամը քննարկման առարկա դարձավ թե՛ Պարսից ծոցի համագործակցության խորհրդի, թե՛ Իսլամական համաժողով կազմակերպության համապատասխան հանդիպումներում,

---

[81] Рябов П.П. Саудовская Аравия: «йеменский ответ» Ирана. http://www.iimes.ru.

[82] How Yemen's Civil Conflict Turned Into a Regional Proxy War, May 4, 2015, http://www.thenation.com.

[83] Sheikh Nimr al-Nimr: Saudi Arabia executes top Shia cleric, Jan 2, http://www.bbc.com.

[84] Iran says Saudi Arabia will 'pay a high price' for execution of Shiite cleric Nimr al-Nimr, Jan 2, http://www.abc.net.au.

[85] Об обострении саудовско-иранских отношений, http://www.iimes.ru.

որտեղ դատապարտվեց Իրանի միջամտությունը ՍԱԹ-ի ներքին գործերին[86]:

Ամեն պարագայում Իրանի դեմ ուղղված ՍԱԹ-ի քայլերն, ըստ էության, սադրանք էին, որոնք մի շարք պատճառներ ունեին: ՍԱԹ-ին անհանգստացնում էր «ութնյակի» հետ հաջող բանակցություններից հետո Իրանի դեմ մի շարք պատժամիջոցների չեղարկումը, ինչը հնարավորություն էր տալիս Թեհրանին վերականգնելու տնտեսությունը, երկրի միջազգային նշանակությունն ու կշիռը՝ դուրս գալով նավթի միջազգային շուկա, ինչը նավթի գների անկման համատեքստում ՍԱԹ-ի կողմից դիտարկվում էր որպես լուրջ մրցակցություն[87]:

Այսպիսով, Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև հակասությունները նոր փուլ մտան «արաբական գարնան» դեպքերից հետո: Երկու երկրների միջև մրցակցությունը տասնամյակների պատմություն ունի և միտված է տարածաշրջանում առաջատար և ազդեցիկ դիրքերի, ինչպես նաև իսլամական աշխարհում առաջնորդության ձեռքբերմանը: Չնայած Իրանի և Սաուդյան Արաբիայի մրցակցությունը շատ դեպքերում գիտակցվում է որպես շիա-սուննի հակամարտություն, սակայն առկա հիմնական խնդիրներն ավելի շատ ընկալելի են աշխարհաքաղաքական հարթության մեջ: Ամեն պարագայում մերձավորարևելյան այս երկու պետությունների միջև գոյություն ունեցող խնդիրները խիստ բացասական հետևանքներ ունեն տարածաշրջանի կայունության, զարգացման և հեռանկարի վրա: Իրանի և Սաուդյան Արաբիայի՝ տարածաշրջանի երկրների ներքին գործերին միջամտելը, ինչպես նաև սուննիական և շիայական գործոնի շահարկումը հանգեցնում են իսլամական աշխարհի երկփեղկվածությանը,

---

[86] Muslim Countries Condemn Iran, Jan 22, http://thearabdailynews.com.

[87] **Железнов А.А.** Казнь шейха Нимра ан-Нимра в Саудовской Аравии: возможные причины и последствия. http://www.iimes.ru.

սուննիական և շիայական համայնքների միջև անտագոնիզմի խորացմանը, իսլամական աշխարհի աղճատմանը, միջցեղային ու միջդավանական թշնամության ձևավորմանը: Ի դեպ, այս իրողություններն իրենց բացասական ազդեցությունն են ունենում ոչ միայն տարածաշրջանային, այլև միջազգային հարթության մեջ: Երկու երկրների միջև առկա լարվածությունն էականորեն նպաստում է մոլեկրոնության և կրոնական ծայրահեղականության աճին, ինչպես նաև օգնում է արտաքին դերակատարներին՝ միջիսլամական հակասություններն օգտագործելով՝ միջամտել Մերձավոր Արևելքի ներքին գործերին: Ասվածի ապացույցը «արաբական գարնան» դեպքերն էին, որոնց արդյունքում Մերձավոր Արևելքի անվտանգության համակարգը փլուզվեց կամ հայտնվեց փխրուն հավասարակշռության մեջ: Ներիսլամական հակասությունները նպաստեցին մի շարք պետությունների՝ Իրաքի, Սիրիայի, Լիբիայի, Եմենի ինքնիշխանության և ամբողջականության փլուզմանը:

Ներկայումս Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև առճակատումը հանգուցալուծման և նահանջի որևէ միտում չունի և հղի է անկանխատեսելի վտանգներով: Այսօր չլուծված են մնում այն հակամարտությունները, որոնցում ներգրավված են թե՛ Իրանը և թե՛ Սաուդյան Արաբիան: Քանի դեռ սուննի-շիա հակամարտության օջախներ կան Սիրիայում, Իրաքում, Եմենում, Բահրեյնում, Լիբանանում և այլն, հակասությունները հետագա զարգացումներ կունենան: Իսլամական աշխարհի շիայական բազմաթիվ համայնքներ, որոնք տասնամյակներ շարունակ եղել են լուսանցքային դերում, վերջին շրջանի զարգացումներից հետո առաջատար դիրքերում մնալու համար կշարունակեն պայքարել: Այսուհետև նույնպես Իրանը կաջակցի արաբական աշխարհի շիայական համանյքներին և կօգտագործի շիայական գործոնն իր դիրքերն ամրապնդելու համար: Մյուս կողմից, Սաուդյան

Արաբիայի մերձավորարևելյան քաղաքականության շատ ուղենիշներ հետայսու պայմանավորված կլինեն ոչ միայն տարածաշրջանում հավակնոտ քաղաքականություն վարելու Էռ-Ռիադի շարունակական ձգտման, այլև նավթային գործոնի նշանակության նվազման հետ: ՍԱԹ-ի հետ կապված գործընթացներում կարևոր դերակատարություն կունենան նաև թագավորության հարցում ԱՄՆ-ի մոտեցումները: Չի բացառվում, որ նավթի գների և նավթային ռեսուրսների նկատմամբ հետաքրքրությունների կրճատման հետևանքով ԱՄՆ-ը վերանայի իր քաղաքականությունը տարածաշրջանի իր հիմնական դաշնակիցների, այդ թվում՝ Պարսից ծոցի միապետությունների նկատմամբ:

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ
պ.գ.թ.
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎՐԱ (2011-2014 ԹԹ.)

2011 թ. մարտին սկսված հակահիշխանական ելույթները Սիրիայում տարբեր գործոնների ազդեցության հետևանքով վերածվեցին քաղաքացիական պատերազմի: Ռազմական բախումները Սիրիայի տարբեր շրջաններում շարունակում են կործանարար ազդեցություն ունենալ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Խնդրո առարկա ուսումնասիրությունը վերաբերում է 2011-2014 թթ. ընթացքում Սիրիայի տնտեսության մի շարք ոլորտներում ճգնաժամի բացասական ազդեցությանը: Բազմաթիվ են այնպիսի հետազոտությունները, որոնք ներկայացնում են սիրիական ճգնաժամի քաղաքական, ռազմական բաղադրիչների և աշխարհաքաղաքական զարգացումների առանձնահատկությունները, այնինչ սիրիական ճգնաժամի համապարփակ վերլուծությունն ու գնահատումը պահանջում են հակամարտության սոցիալ-տնտեսական ենթատեքստի բազմակողմ և բազմաշերտ ընկալում: Քանի որ մեկ հոդվածի սահմաններում անհնար է ներկայացնել սիրիական հակամարտության սոցիալ-տնտեսական ազդեցության բոլոր բաղադրիչները, փորձել ենք ուշադրություն դարձնել սիրիական տնտեսության առանցքային ճյուղերի՝ նավթագազային ենթակառուցվածքների, ֆոսֆատի արդյունահանման, էներգետիկայի, գյուղատնտեսության, ազգային դրամի արժեզրկման, ժողովրդագրական փոփոխությունների և նշված ոլորտների ակտիվության աստիճանով պայմանավորված Սիրիայի համախառն ներքին արդյունքի տատանումներին:

Հակամարտության չորս տարիների ընթացքում մեծածավալ արտագաղթի արդյունքում Սիրիայի բնակչությունը, 21 միլիոնից կրճատվելով, հասել է 17.5 միլիոնի: Երկրի ներսում մնացած բնակչության 1/3-ը համարվում է ներքին տեղահանված[88]: Տարբեր հետազոտությունների և վիճակագրական տվյալների վերլուծությունը գալիս է փաստելու, որ Սիրիայի տնտեսությունը ծայրահեղ ծանր վիճակում է գտնվում: Միավորված ազգերի կազմակերպության օգնության և աշխատանքի գործակալության 2014 թ. զեկույցներից մեկի համաձայն՝ 2010-2014 թթ. ՀՆԱ-ի ամբողջական կորուստը կազմել է 62%: Սիրիական քաղաքականության հետազոտման կենտրոնի տվյալներով տնտեսության ամենակտրուկ կրճատումը գրանցվել է 2012 թ.՝ 30.9 % և 2013 թ.՝ 36.5%, իսկ 2014 թ. այն նվազել է 10%-ով[89]: 2015 թ. մարտի դրությամբ Սիրիայի տնտեսության ամբողջական վնասը կազմել է 2010 թ. ՀՆԱ-ի 229%-ը, շուրջ 180 մլրդ ամերիկյան դոլար: Զեկույցի հեղինակները պնդում են, որ եթե Սիրիայում հակամարտություն չծագեր, ապա 2011 թ. Սիրիայի ՀՆԱ-ն կաճեր 7.1 %-ով, 2012 թ.՝ 6.5%-ով, 2013 թ.՝ 6.6 %-ով, իսկ 2014 թ. պետք է ապահովեր 6.7 %-ի աճ: Այսինքն՝ 2010 թ. համեմատ Սիրիայի համախառն ներքին արդյունքը 2014 թ. կավելանար 29 %-ով: Անվտանգության բացակայությունը երկրում խոչընդոտում է հսկայական գյուղատնտեսական նշանակության հողատա-

---

[88] Համաձայն ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի տվյալների՝ 2015 թ. մարտի 31-ի դրությամբ գրասենյակի կողմից գրանցվել են արդեն 3.9 միլիոն փախստականներ, որոնցից՝ 2.2 միլիոնը Եգիպտոսում, Իրաքում, Հորդանանում և Լիբանանում: 1.7 միլիոն սիրիացիներ գրանցվել են Թուրքիայի կառավարության կողմից: Տե՛ս http://data.unhcr.org/syrianrefugees/regional.php: 2014 թ. դրությամբ սիրիացի ներքին տեղահանվածների թիվը հասել է 6.5 միլիոնի: Տե՛ս http://www.unhcr.org/pages/49e486a76.html:

[89] Alienation and Violence, Syria, Economic Impact of the Crisis, Syrian Centre For Policy Research, UNRWA, 2014, p. 13.

ռածքների մշակումը, ռազմական գործողությունների շարունակականության պայմաններում ծայրահեղ վնասվում կամ ոչնչանում են ոռոգման համակարգերը, այգիները, պահեստները, անասնաբուծական և գյուղատնտեսական նշանակության նյութատեխնիկական միջոցները: Գյուղատնտեսական արտադրության կրճատումը ստիպեց Սիրիայի կառավարությանն ավելացնել ցորենի, շաքարի և ալյուրի ներկրման ծավալները, որպեսզի հնարավոր լինի սննդի անվտանգության ապահովումը[90]:

Եվրախորհրդի արտաքին հարաբերությունների (European Council on Foreign Relations) հետազոտական կենտրոնի զեկույցի համաձայն՝ Սիրիայում մարդկային զարգացման ինդեքսը (Human Development Index/HDI) նվազել է՝ հասնելով 1977 թ. մակարդակին, այսինքն՝ այսօրվա միջին սիրիացին ունի նույն կյանքի տևողությունը, կրթության և աշխատանքային պայմաններն ունենալու պահանջները, ինչը նա ուներ շուրջ 38 տարի առաջ: Հաշվարկների համաձայն՝ տարեկան միջինը 5% անընդմեջ տնտեսական աճի դեպքում միայն 30 տարի անց հնարավոր կլինի Սիրիայի համախառն ներքին արդյունքի ծավալը հասցնել 2010 թ. արդյունքներին, որն այդ ժամանակ կազմել է 60.5 մլրդ ամերիկյան դոլար[91]:

---

[90] Նշվ. զեկույցը, էջ 17-19:

[91] Yazigi J., Syria's War Economy, European Council of Foreign Relations, 07.04.2014. http://www.ecfr.eu/publications/summary/syrias_war_economy: Համաշխարհային բանկի տվյալներով ճգնաժամի հետևանքով ստեղծված հումանիտար աղետը երկրում շարունակվում է: Զոհվածների թիվը գերազանցում է 220 հազարը, շուրջ 840 հազար սիրիացիներ հակամարտության հետևանքով հաշմանդամ են դարձել: 3.8 միլիոն սիրիացիներ փախստականներ են, 1.5 միլիոնն ունեն ոչ փախստական միգրանտի կարգավիճակ: Ավելի քան 12.2 միլիոն մարդ, այդ թվում 5.6 միլիոն երեխաներ, ունեն հումանիտար օգնության կարիք:
Տե՛ս http://www.worldbank.org/en/country/syria/overview.

Բրիտանական Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի՝ «Չեթիըմ Հաուզի» հետազոտող Դեյդիվ Բաթերի ուսումնասիրության համաձայն՝ 2011 թ. մարտից սկսած Սիրիայի տնտեսության արտադրողունակությունը կրճատվել է շուրջ 50%-ով: Հսկայական կորուստներ են գրանցվել գյուղատնտեսական ապրանքների արտադրության, էներգետիկայի և արդյունաբերության տարբեր ոլորտներում: 2013 թ. հուլիս-օգոստոս ամիսներին սիրիական ազգային դրամն արժեզրկվել է 120 %-ով՝ հասնելով նվազման իր մաքսիմումին: 2011 թ. սիրիական ֆունտի միջին տարեկան 4.2 % արժեզրկմանը հաջորդել է 2012 թ. 37% և 2013 թ. 88% արժեզրկումը: Իսկ 2014 թ. արժեզրկումը կազմել է 36.8 %[92]:

Սիրիան ֆոսֆատի արդյունաբերական ամենամեծ պաշարներն ունեցող երկրներից մեկն է աշխարհում[93]. Ճգնաժամի ընթացքում ածխաջրածնային ոլորտում արդյունահանման և արտահանումների կրճատումները ֆոսֆատի արտադրությունը դարձրել էին չափազանց կարևոր սիրիական իշխանությունների համար երկրում ֆինանսական ռեսուրսների կառավարման տեսանկյունից: 2011 թ. Սիրիայում արդյունահանվել է 2 մլն տոննա ֆոսֆատի հանքաքար, իսկ 2014 թ. առաջին կեսին արդյունահանվել է 500 հազար տոննա ֆոսֆատի հանքաքար շուրջ 30 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ: Սակայն 2015 թ. մայիսին «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումը[94] վերահսկողություն

---

[92] Butter D., Syria's Economy, Picking up The Pieces, Middle East and North Africa Program, June 2015. http://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/field/field_document/20150623SyriaEconomyButter.pdf

[93] Սիրիան 2010 թ. արդյունահանել է 2. 800 հազար տոննա ֆոսֆատի հանքաքար՝ արտադրական հզորությամբ զբաղեցնելով 11-րդ տեղն աշխարհում: Տե՛ս http://www.mapsofworld.com/minerals/world-rock-phosphate-producers.html:

[94] Իսլամական պետությունը Իրաքի և Սիրիայի տարածքներում գործող սուննի ծայրահեղ ահաբեկչական խմբավորում է, որ գործունեություն է

սահմանեց Պալմիրայից 70 կմ հարավ գտնվող «Խնայֆիս» ֆոսֆատի հանքավայրերի նկատմամբ, որը Սիրիայի իշխանություններին զրկեց եկամտի ստացման այդ կարևոր աղբյուրից[95]: Եթե իսլամական պետությունը կարողանում է իր վերահսկողության տակ գտնվող նավթի հանքավայրերը որոշ հզորությամբ շահագործման ենթարկել և կայուն եկամուտ ստանալ նավթի վաճառքից, ապա, ըստ Փարիզի Դոֆին համալսարանի պրոֆեսոր, նյութագետ Ֆիլիպ Զալմինի, ֆոսֆատի հանքաքարը վաճառքի ենթակա չէ, իսկ հանքաքարի մշակման տեխնոլոգիաները խմբավորման տեխնիկատեխնոլոգիական հնարավորությունների սահմաններից դուրս են[96]:

Ճգնաժամի հետևանքով հսկայական վնասներ են կրել Սիրիայի նավթի արդյունահանումը և դրան կից ենթակառուցվածքները: 2011 թ. նավթի արդյունահանման 387 000 բարել/օրական ծավալը նվազել է՝ հասնելով 10. 000 բարել/օրական ծավալի: «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումը վերահսկում է 60.000 բարել/օրական արդյունահանման հնարավորությամբ նավթի հանքավայրեր: Չնայած արևմտյան դաշինքի (Operation Inherent Resolve - CJTF) և վերջին շրջանում ռուսական օդատիեզերական ուժե-

---

ծավալում նաև Արևելյան Լիբիայում, Եգիպտոսի Սինայի թերակղզում, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի, Հարավային և Հարավարևելյան Ասիայի մի շարք այլ տարածքներում: 2014 թ. հունիսի 29-ին ազդարարվեց Իրաքի և Լևանտի իսլամական պետության ստեղծումը, որի առաջնորդ դարձավ Աբու Բաքր Ալ-Բաղդադին: Մանրամասն տե՛ս Alastair C., You Can't Understand ISIS if You Don't Know the History of Wahhabism in Saudi Arabia, The Huffington Post, 05.09.2014.

[95] Syrian Planes Pound Islamic State around Palmyra; Jihadis Seize Key Phosphate Mine, http://www.japantimes.co.jp/news/2015/05/26/world/syrian-planes-pound-islamic-state-around-palmyra-jihadis-seize-key-phosphate-mine/#.Vi4f27crKUk.

[96] Iraq Shiite Militias Take Lead in Efforts to Recapture Ramadi, https://www.dailystar.com.lb/News/Middle-East/2015/May-27/299404-iraq-shiite-militias-take-lead-in-efforts-to-recapture-ramadi.ashx

րի ավիահարվածների արդյունքում այդ հնարավորություն-ները ենթադրաբար կրճատվել են, սակայն փորձագիտական շրջանակներում վերոբերյալի մասին հաշվարկված տեղեկություններ դեռևս առկա չեն:

Սիրիայում ջերմաէլեկտրակայանների մեծ մասը էլեկտրաէներգիա արտադրում են բնական գազի այրմամբ, 2011-2014 թթ. ընթացքում ջէկ-երի արտադրած էլեկտրաէներգիայի ծավալը կրճատվել է շուրջ երեք անգամ[97], որը Սիրիայի իշխանություններին կանգնեցրել է հիմնականում բնակչությանը էլեկտրաէներգիայով ապահովելու խնդրի առաջ, քանի որ արտադրաարդյունաբերական ենթակառուցվածքների մասնակի և ամբողջական գործունեության դադարի հետևանքով էլեկտրաէներգիայի արդյունաբերական պահանջարկը կրճատվել է երկրում[98]:

Եվրամիությունը 2011 թ. սեպտեմբերին Սիրիայում սկսված հակակառավարական ելույթները բռնաճնշելու պատճառով սիրիական իշխանությունների, մասնավորապես նավթագազային արդյունաբերության ոլորտի և առանձին ան-

---

[97] **Butter D.**, նշվ. աշխ., էջ 5:

[98] 2000-ական թվականների վերջերին գազի արդյունահանման ոլորտում հսկայական ներդրումներ կատարվեցին, որի արդյունքում գազի արտադրությունը 2010-2011 թվականներին կտրուկ ավելացավ հիմնականում երկու ծավալային ծրագրերի շնորհիվ: Առաջինը Ալ-Շաիր գազի հանքավայրն է, որտեղ արդյունահանումն իրականացնում էր կանադական «Սունկոր» ընկերությունը, իսկ երկրորդը Ջիհար հանքավայրն է, որտեղ երկրաբանական հետախուզական աշխատանքներն իրականացվում էին խորվաթական «Հայան փեթրոլում» ընկերության կողմից: Այս երկու նախագծերի շնորհիվ գազի արդյունահանումը 2010 թ. հասավ 8 մլրդ խմ.-ի, 2011 թ.՝ 8.7 մլրդ խմ.-ի, ի տարբերություն նախորդ 5 տարիների ընթացքում արդյունահանված տարեկան միջին 5.5 մլրդ խմ ծավալի: Մանրամասն տե՛ս Vanderklippe N., Suncor shuts down in Syria, http://www.theglobeandmail.com/report-on-business/industry-news/energy-and-resources/suncor-shuts-down-in-syria/article4201731/, տե՛ս նաև Syrian Oil and Gas News, http://www.syria-oil.com/en/?p=1193.

հատների նկատմամբ պատժամիջոցներ սահմանեց: Եվրամիության երկրներ սիրիական նավթի արտահանման վրա սահմանված պատժամիջոցը ուժի մեջ մտնելուց երկու ամիս անց պատժամիջոցներ սահմանվեցին նաև Սիրիայում գործող Գեներալ փեթրոլյում ընկերության, Սիրիական նավթի առևտրային ընկերության (Syrtol) և Ալ-Ֆուրաթ փեթրոլյում ընկերության գործունեության վրա: Սահմանված պատժամիջոցները խստացվեցին 2012 թ. վերջին, երբ սահմանափակումներ դրվեցին նաև նավթագազային արդյունաբերության ոլորտում օգտագործվող տեխնոլոգիաների ներկրման վրա: Նավթի արտահանման վրա սահմանված պատժամիջոցները ծանր ազդեցություն ունեցան Սիրիայի տնտեսության վրա, քանի որ նախկինում 150.000 բարել /օրական ծավալով դեպի Եվրոպա՝ հիմնականում Գերմանիա և Իտալիա, արտահանման ուղղությունը փակվում էր, իսկ նույն ծավալի այլընտրանքային շուկաներ գտնելը ճգնաժամի պայմաններում դժվար էր: Սիրիայի տնտեսության այդ ոլորտում իրենց գործունեությունը դադարեցրին նաև միջազգային հայտնի օպերատորներ հոլանդական «Շել» ու ֆրանսիական «Տոտալ» ընկերությունները[99]: Համաձայն ամերիկյան «Էներգիայի տեղեկատվության ադմինիստրացիա» կենտրոնի տվյալների՝ սահմանված պատժամիջոցների և սիրիական իշխանությունների կողմից Եփրատի հովտում կարևոր ռեսուրսային տարածքների կորստի հետևանքով 2012 թ. սիրիական իշխանությունների վերահսկողության ներքո գտնվող տարածքներում օրական արդյունահանվել է 164.000 բարել, 2013 թ.՝ միայն 30.000, իսկ 2014 թ. ծավալները նվազել են 20.000 բարելով՝

[99] Embargoes and Sanctions on Syria, Department for Business, Innovation and Skills, Foreign and Commonwealth Office and Export Control Organisation, 28 January, 2015, https://www.gov.uk/guidance/sanctions-on-syria

հասնելով մինչև 10. 000 բարել/օրական ծավալի[100]:

Ճգնաժամը հսկայական բացասական ազդեցություն է ունեցել նաև Սիրիայի արտաքին առևտրի վրա: Նավթի արտահանման ծավալների կրճատումը, գյուղատնտեսության և արտադրական արդյունաբերության ոլորտի կորուստները նպաստեցին, որպեսզի արտահանման ծավալները կրճատվեն 2006-2010 թվականներին տարեկան միջինից 12 մլրդ ԱՄՆ դոլարով: Համաձայն Սիրիայի արտահանման խթանման և զարգացման գործակալության տվյալների՝ 2012 թ. արտահանման ընդհանուր ծավալը կազմել է 2.1 մլրդ ԱՄՆ դոլար, 2013 թ. կազմել է 1.2 մլրդ, իսկ 2014 թ. որոշակի բարելավում է նկատվել. արտահանման ծավալները ավելացել են՝ կրկին հասնելով 2012 թ. ծավալին: 2014 թ. արտահանված հիմնական ապրանքների ցանկում են ֆոսֆատները, միրգ-բանջարեղենը, կաթնամթերքը, կիսաֆաբրիկատները և այլն[101]:

Հնարավոր ուղղություններով ներկայացնելով Սիրիայի սոցիալ-տնտեսական դրությունը պատերազմական իրադրության պայմաններում՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Չնայած հակամարտության չորս տարիների կործանարար ազդեցությանը՝ Սիրիայի տնտեսությունը և նրա կառավարման ինստիտուտները շարունակում են գործել: Սիրիական ազգային ֆունտը, չնայած արժեզրկման տեմպերին, շարունակել է մնալ երկրի հիմնական արժույթը, որով մատուցվել են ծառայությունները, կազմակերպվել է ապրանքների առքուվաճառքը:

---

[100] US Energy Information Administration Report, Syria, International energy data and analysis, 24 June 2015, p. 3, http://www.eia.gov/beta/international/analysis_includes/countries_long/Syria/syria.pdf.

[101] The Syria Report, 17 November 2014. http://www.syria-report.com/syria-report-newsletter-november-17-2014.

2. 2014 թ. Սիրիայի իշխանությունները կարողացել են մի շարք հաջող իրականացված ռազմական գործողությունների շնորհիվ որոշակի տնտեսական առաջընթաց գրանցել: ՀՆԱ-ի կրճատման տեմպերը և գնաճի ու ազգային դրամի արժեզրկման ընթացքը դանդաղել են, արտահանումն ավելացել է, կառավարությունն ուժեղացրել է իր ֆինանսական հնարավորությունները՝ հաջողությամբ ավարտելով սպառողներին տրամադրվող վառելիքի սուբսիդավորումը: Սիրիայի իշխանություններին հաջողվել է պատերազմի կործանարար իրադրության պայմաններում արդեն 2014 թ. որոշակի առաջընթաց գրանցել երկրի սոցիալ-տնտեսական կյանքում, քանի որ կառավարությունը տնտեսության զարգացումը հարմարեցրել է պատերազմի վարման տրամաբանությանը:
3. Վիճակագրական տվյալներն ու տարեկան համեմատություններն ավելի պատկերավոր են դարձնում շարունակվող պատերազմի բացասական հետևանքները Սիրիայի տնտեսության և սոցիալական ոլորտի վրա: Ճգնաժամի հետևանքների համապարփակ ընկալումն ու գնահատումը ենթադրում են Սիրիայի բոլոր շրջաններում մասնագետների գործունեության հասանելիության ապահովում, որը ներկա դրությամբ ահաբեկչական տարբեր խմբավորումների գործունեության պատճառով գրեթե անհնար խնդիր է: Վնասների ու կորուստների ամբողջական գնահատման դեպքում միայն հնարավոր կլինի կազմել և իրականացնել Սիրիայի տնտեսության վերաինտեգրման, վերակառուցման և զարգացման ծրագրերը:

ՀԱՅԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ
պ.գ.թ.
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ

Սիրիայի և Լիբանանի բանակների ստեղծման և հետագա կայացման գործում մեծ դեր են խաղացել մի շարք հայ զինվորականներ, ովքեր լինելով բարձրաստիճան պաշտոնյաներ, և իրենց գործունեությամբ նպաստել են սիրիական և լիբանանյան ազգային բանակների կայացմանն ու դրանց դիրքերի ամրապնդմանն այդ երկրների քաղաքական կյանքում:

Սիրիայի բանակի ստեղծման և կայացման գործում մեծ ավանդ է ունեցել գեներալ-լեյտենանտ Արամ Գարամանուկյանը[102], ով պատկանում է սիրիական սպայական կազմի երկրորդ դասին[103]: Սիրիայի ռազմական պատմության մեջ ոսկե տառերով գրվեց Արամ Գարամանուկյանի անունը[104]: Նա

---

[102] Գեներալ Արամ Գարամանուկյանի մասին մանրամասն տե՛ս **Տոլպագեան Ե.**, Հայրենական նամականի ի պատիւ Զօր. Գարամանուկեանի, Նոր Այնթապ, թիւ 44-56, Լիբանան, 1971-1973, էջ 63-69, **Պապայեան Ե.**, Պատմութիին Անթէպի Հայոց, Գ. հատոր, Լոս Անճելըս, Գալիֆորնիա, 1994, էջ 484-629, Նոր Այնթապ, Ի Բ. տարի, թիւ 9-10 (81-82), նոր շրջան, Լիբանան, 1995, էջ 93-96, **Սիմոնեան Յ.**, Յաիելուած Այնթապի Հայոց Պատմութեան, Ոիոլթիէմ, ԱՄՆ, 1997, էջ 138-142, **Ճեպեճեան Ռ.**, Ինքնակենսագրութիւն, յուշեր և գործունէութիւն, Հալէպ, 1999, էջ 97, Զարթօնք, Պեյրութ, 1974, էջ 3:

[103] **Van Dusen M.**, Intra-and Inter-Generational Conflict in the Syrian Army, Ph.D., Johns Hopkins University, Baltimore, Maryland, 1971, p. 379.

[104] **Սամսոնյան Հ., Վարդանյան Գ.**, Հարցազրույց Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի հետ, Գիտական ֆիլմ, Դամասկոս, 2010 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարան):

ծնվել է Այնթապում 1910 թ. մայիսի 10-ին[105], նախնական ուսումը ստացել է ծննդավայրի Ադենական, այնուհետև Հալեպի Հայկազյան վարժարանում[106], որն ավարտել է 1923 թ.: Զորավարի զինվորական գործունեությունն ընդգրկում է մի փոթորկալի ժամանակաշրջան, որ սկսվում է 1932 թ. և ավարտվում 1958 թ.: 1934 թ. նա ավարտել է Դամասկոսի զինվորական վարժարանի հրետանու բաժինը, իսկ 1935-1937 թթ. ծառայել է Բեյրութում[107]: Մասնագիտությունը կատարելագործելու նպատակով 1938-1939 թթ. նա մեկնել է Ֆրանսիա, իսկ 1945 թ. բարձրագույն զինվորական կրթություն է ստացել Փարիզի զինվորական բարձրագույն ակադեմիայում: Այնտեղ նրան առաջարկվել է զինվորական աստիճանի անմիջական բարձրացումով մնալ ֆրանսիական բանակում, սակայն նա հրաժարվել է և իր պարտքը համարել վերադառնալ Սիրիա և մասնակցել սիրիական ազգային բանակի կազմավորմանը[108]: 1948-1957 թթ. զբաղեցրել է Սիրիայի հրետանու գլխավոր հրամանատարի պաշտոնը:

Զորավարը մասնակցել է 1948 թ. արաբ-իսրայելական պատերազմին[109]: Ռազմական առաջնակարգ կարևորություն ներկայացնող Գոլանի բարձունքներն ամրացված էին զորավարի հաստատած թնդանոթային մարտկոցների խիտ շարքերով և թշնամու համար թվում էին անանցանելի[110]: Իսրա-

---

[105] Ըստ Արամ Գարամանուկյանի եղբորորդի պ.գ.թ. Շահեն Կարամանուկյանի բանավոր տեղեկությունների, Երևան, 2011:

[106] Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, Ա տարի, Հալէպ, 1975, էջ 405:

[107] **Գարամանուկեան Յ.**, Զօրավար Արամ Գարամանուկեանի կեանքն ու գործը, Ֆորթ Լի, Նիի Ճըրզի, ԱՄՆ, 1998, էջ 60:

[108] مختار فوزى النعال، اللواء آرام قره مانوكيان، صفحة ناصعة في سجل العسكرية السورية، أريف، مايو 2001، صفحة 10-11.

[109] محمد رفعت الإمام، العلاقات العربية الأرمنية، الماضى والحاضر، كلية الآداب جامعة القاهرة، 2009، صفحة 173.

[110] **Էպլիղաթեան Մ.**, Գաղթականէն խորհրդարան, Հալէպ, 1998, էջ 159:

յելական բանակի հրամանատարությունը մեծ պարգևատրում էր խոստացել նրան, ով կսպանի կամ գերի կվերցնի Արամ Գարամանուկյանին՝ վնասելով նրա հրետանային համակարգը[111]: Ա. Շորվողլեանը Արամ Գարամանուկյանի մասին գրել է. «Զօր. Արամ Գարամանուկեանին և բաժանմունքին սխրագործութիւնները թևեր առած ամբողջ ժողովուրդին հիացմունքին արժանացան»[112]:

Արամ Գարամանուկյանի հրամանատարության ներքո սիրիական բանակի հրետանին ավելի հզորացավ և դարձավ բանակի կարևորագույն մասը: Սիրիական բանակի հրետանու մասին իսրայելական բանակի գեներալներից մեկն ասել է, որ իսրայելական բանակն անպարտելի է, և նրանք չեն վախենում արաբական զինված ուժերից՝ բացառությամբ սիրիական բանակի հրետանու[113]:

1956 թ. նա ստացել է ստորաբաժանման զորավարի գեներալ-լեյտենանտի աստիճան: Այնուհետև 1957 թ. զինվորական կցորդ է նշանակվել ԱՄՆ-ում Սիրիայի դեսպանատանը, իսկ 1961 թ. ընտրվել է Սիրիայի Ազգային ժողովի պատգամավոր և միաժամանակ Սահմանադիր ժողովի անդամ[114]:

Գեներալ Գարամանուկյանը սովորել է Սորբոնի համալսարանում և, պաշտպանելով «Օտարները և զինվորական ծառայությունը» գիտական ուսումնասիրությունը, 1972 թ. ստացել է իրավագիտության դոկտորի գիտական աստի-

---

[111] Ըստ Ալեքսանդր Քեշիշյանի բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2009, տե՛ս նաև كشيشيان أ.، إسهامات المواطنين الارمن في الحياة العامة للبلاد السورية منذ أقدم العصور وحتى يومنا، حلب، 2007، صفحة 40.

[112] Տե՛ս Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, նշվ. աշխ., էջ 402:

[113] **Գարամանուկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 83:

[114] Ըստ պ.գ.թ. Հուրի Ազեզյանի բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2010, տե՛ս նաև عزازيان هـ.، نبذة تاريخية موجزة عن الجاليات الارمنية في البلاد العربية (سورية، لبنان، مصر، فلسطين، الاردن...)، اللاذقية، 1993، صفحة 62.

ճան[115]: Իր կատարած զինվորական ծառայությունների համար գեներալ-լեյտենանտ Արամ Գարամանուկյանը պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով, այդ թվում նաև ֆրանսիական կառավարության կողմից՝ առաջին կարգի պատվո շքանշանով[116]: Հաշվի առնելով զորավարի մատուցած ծառայությունները Սիրիային և ազգօգուտ անդրադարձը սիրիահայ գաղութին՝ Արամ Գարամանուկյանը պարգևատրվել է նաև Ներսես Շնորհալի և Կիլիկիո Մեծ Խաչի Ասպետի շքանշաններով:

Սիրիայի բանակի ստեղծման և կայացման գործում մեծ դեր է խաղացել նաև գեներալ-մայոր Հրանտ բեյ Մալոյանը[117]: Այս պատվական հայորդին ծնվել է 1895 թ. Մուշում[118]: 1905-1907 թթ. սկզբնական ուսումը ստացել է Վենետիկի Մխիթարյան միաբանության Սուրբ Ղազարի վանքում[119]: 1913-1914 թթ. ընդունվել է իրավագիտական համալսարան: 1914 թ. Հրանտ Մալոյանը զորակոչվեց բանակ և որպես սպա՝ 1916 թ. տեղակալի պաշտոնով ծառայեց թուրքական 53-րդ ստորաբաժնում[120]: Առաջին համաշխարհային պատերազմի

---

[115] Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 555:

[116] عزازيان هـ.، المصدر المذكور، صفحة 62.

[117] Migliorino N., (Re)constructing Armenia in Lebanon and Syria, New York, 2008, p. 136, Հրանտ Մալոյանի մասին տե՛ս նաև Տարեկան տեղեկագիր Դամասկոսի հայ կաթողիկէ բարեսիրական միութեան, 2006, էջ 59, Torrey G., Syrian Politics and the Military 1945-1958, Ohio State University Press, 1964, p. 146, أندرو راثميل، الحرب الخفية في الشرق الأوسط، الصراع السرّي على سورية 1949-1961، جميع الحقوق محفوظة، 1997، صفحة 69-70، دعد الحكيم، أوراق ومذكرات فخري البارودي، 1887-1966، خمسون عاماً من حياة الوطن، دمشق، 1999، صفحة 298.

[118] وزارة الداخلية السورية، إدارة الهجرة والجوازات، جواز سفر، صفحة 1.

[119] **Atamian P.**, Histoire de la communauté Arménienne catholique de Damas, Beyrouth, 1964, p. 155.

[120] Ըստ Լաթաքիայի Թիշրին համալսարանի դասախոս, Արաբ աշխարհագրագետների միության փոխնախագահ Նադիմ Շամսինի բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2010:

զինադադարի նախօրյակին՝ թուրքական բանակի նահանջելու ժամանակ, գերի վերցվեց Դարաայի արաբական գնդերի կողմից[121]: Ազատվելով գերությունից՝ նա մտավ նորակազմ Հայկական լեգեոն և, աչքի ընկնելով որպես ուշիմ և մի քանի լեզուների տիրապետող երիտասարդ, Կիլիկիայի զինվորական կառավարչի կողմից նշանակվեց ժանդարմերիայի օգնական[122]: Հրանտ Մալոյանը մասնակցեց Կիլիկիայի ինքնապաշտպանության մարտերին, և դրանից հետո նա տեղափոխվեց Դամասկոսի առաջին բրիգադի, այնուհետև Հալեպի երկրորդ բրիգադի հրամանատարություններ և միաժամանակ համատեղությամբ փոխարինեց Հալեպի ոստիկանության հրամանատարության ներքո գտնվող ժանդարմերիայի փոխգնդապետ Հասան Բահրային[123]: Սիրիայի ազատագրական պայքարի ժամանակ Դամասկոսի ֆրանսիացի զինվորական կառավարիչ գեներալ Օլիվյե Ռոժեն նրան առաջարկում է հայ երիտասարդների գումարտակ կազմել՝ ֆրանսիական բանակին օգնելու համար[124]: Հրանտ Մալոյանը մերժում է գեներալի հիշյալ առաջարկը: Հայ զորավարի այդ դիրքորոշումը բարձր գնահատվեց սիրիացի ազգայնականների կողմից: Սիրիայի անկախացումից հետո նրան հանձնվեց երկրի ներքին ապահովությունը՝ ստանձնելով ոստիկանական զորքերի ընդհանուր հրամանատարի պաշտոնը[125]: 1946-1950 թթ. Հրանտ Մալոյանը Սիրիայի ժանդարմերիայի գլխավոր հրամանատարն էր[126]: Գեներալ-մայոր Հրանտ Մալոյանը

---

121 Ըստ Հրանտ Մալոյանի մտերիմ Սարգիս Քեշիշյանի բանավոր վկայությունների, Դամասկոս, 2009:

122 Գեղարդ Սուրիահայ տարեգիրք, Ա տարի, նշվ. աշխ., էջ 406, 407:

123 كشيشيان ا.، صفحات وثائقية من جريدة (التقدّم) الحلبية عن الأحوال الأرمنية والعربية في الدولة العثمانية والبلاد الشامية، صفحة 199.

124 «Մասիս», թիվ 39, Բեյրութ, 2008, էջ 27:

125 محمد رفعت الإمام، المصدر المذكور، صفحة 173.

126 نديم شمسين، دمشق، 2008/11/30، صفحة 1.

պարգևատրվել է սիրիական, լիբանանյան, եգիպտական, ֆրանսիական մի շարք շքանշաններով[127]: Մեծանուն զորավարը մահացավ 83 տարեկանում՝ 1978 թ. հուլիսի 24-ին[128]:

Սիրիական բանակում իր ուրույն դերակատարությունն է ունեցել նաև զորավար Ալբեր Քիլեջյանը, ով ծնվել է 1920 թ. Համայում: Նա պատկանում է սիրիական սպայական կազմի երրորդ դասին[129]: Իր ռազմական ուսումը նա ստացել է Հոմսի ռազմական ակադեմիայում, այնուհետև մասնակցել է արաբ-իսրայելական առաջին պատերազմին[130]: Մասնագիտությունը կատարելագործելու նպատակով 1957 թ. Քիլեջյանը մասնակցել է Կահիրեի բարձրաստիճան սպաների դասընթացներին: Դրանից հետո նա նշանակվել է ենթասպաների դպրոցի և պահեստային սպաների վարժարանի հրամանատար: 1959 թ. ավարտել է իր զինվորական ծառայությունը գեներալ-լեյտենանտի աստիճանով և պարգևատրվել է սիրիական, լիբանանյան, եգիպտական և այլ շքանշաններով[131]:

Սիրիական բանակում է ծառայել նաև օդային պաշտպանության գեներալ-մայոր Ավետիս Արսլանյանը, ով ծնվել է 1944 թ. մարտի 8-ին Դամասկոսում: Արմատներով այնթապցի գեներալը 1963 թ. ընդունվել է Դամասկոսի համալսարան և այն ավարտել 1968 թ.: 1968 թ. դեկտեմբերին նա լեյտենանտի աստիճանով ծառայության է անցել սիրիական բանակում: 1973 թ. մասնակցել է արաբ-իսրայելական պատերազմին և պարգևատրվել բազմաթիվ շքանշաններով,

---

[127] Atamian P., նշվ. աշխ., էջ 156, 157:

[128] Ըստ Դամասկոսի Հայ Կաթողիկե Տիեզերքի թագուհի եկեղեցու մահվան գրանցման մատյանի, Դամասկոս, 2009:

[129] Van Dusen M., նշվ. աշխ., էջ 383:

[130] مصطفى طلاس، تاريخ الجيش العربي السوري، الجلد الأول، 1901-1948، مركز الدراسات العسكرية، صفحة 290.

[131] Ըստ Ալբեր Քիլեջյանի կնոջ՝ Գարուն Քիլեջյանի (Մելիքյան) բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2009:

որից հետո բրիգադի գլխավոր ինժեներ Ավետիս Արսլանյանը 1974 թ. ստացել է մայորի աստիճան: 1981-1985 թթ. նա սովորել է Անգլիայում և պաշտպանել «Թվային ազդանշանի մշակում» թեմայով ատենախոսություն: 1985 թ. վերջին վերադարձել է Սիրիա, իսկ 1986 թ. նրան շնորհվել է գեներալ-մայորի աստիճան: 1986-2002 թթ. Ավետիս Արսլանյանը եղել է Դամասկոսի օդային պաշտպանության գեներալ[132]:

Ինչպես սիրիական, այնպես էլ լիբանանյան բանակում նույնպես ծառայել են հայազգի ռազմական գործիչներ, որոնցից են՝ Լիբանանի պետական նախարար, բանակի բրիգադի գեներալ Փանոս Մանջյանը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ Մանուել Քիրեջյանը[133], գեներալներ Նարեկ Աբրահամյանը, Հրայր Թերզյանը, Մելքոն Ուրֆալյանը, Սողոմոն Ֆերնեզյանը, Նազարեթ Գաբրիելյանը[134], Բեյրութի միջազգային օդանավակայանի անվտանգության պետ Ժան Թալուզյանը և այլք[135]:

---

[132] Հարցազրույց Սիրիայի բանակի գեներալ Ավետիս Արսլանյանի հետ, Երևան, 2013: Ավետիս Արսլանյանի հորեղբայրը՝ Ֆրեդ Արսլանյանը, 1947 թ. ընտրվել է Սիրիայի Ազգային ժողովի պատգամավոր: Ֆրեդ Արսլանյանը ծնվել է 1915 թ. Այնթապում: 1964-1970 թթ. նա եղել է Փաստաբանների միության ընդհանուր քննիչի օգնական և "المحامون" «Փաստաբաններ» թերթի տնօրեն: Տե՛ս «Ազդակ», 19 Մայիս, 2001 թ.:

[133] 2015 թ. մարտի 9-ին Հայաստան ժամանեց Լիբանանի պաշտպանության նախարարության պատվիրակությունը՝ բրիգադի գեներալ Մանուել Քիրեջյանի գլխավորությամբ: Այցի ընթացքում քննարկվեցին երկու երկրների միջև պաշտպանական բնագավառում համագործակցությանն առնչվող հարցեր:

[134] Գեներալներ Նազարեթ Գաբրիելյանի և Ժան Թալուզյանի մասին մանրամասն տե՛ս http://www.aztagarabic.com/archives/4276 شخصيات لبنانية من أصول أرمنية،

[135] 2013 թ. օգոստոսի 1-ին լիբանանյան բանակի հիմնադրման 68-րդ տարելիցի առթիվ հայտարարվեցին բանակի շարքերը համալրող նոր սպաների անունները, որոնց մեջ էին նաև բանակի սպա Արցախ Խոշյանը և զինվորական բժիշկ Սարգիս Չանկուլյանը:

Լիբանանի պետական նախարար, բանակի բրիգադի գեներալ Փանոս Մանջյանը ծնվել է 1952 թ. դեկտեմբերի 3-ին Այնճարում: Այս հայորդին մեծ դիրք ու դերակատարում է ունեցել լիբանանյան զինված ուժերում: Նրա զինվորական կյանքը սկսվում է 1939 թ., երբ որպես կամավոր մտնում է ֆրանսիական բանակի շարքերը: Նա սովորել է Այնճարի Հառաջ վարժարանում, ապա Բեյրութի Հայ ավետարանական քոլեջում: 1972 թ. Փանոս Մանջյանը ռազմական ակադեմիայի սան էր, իսկ երեք տարի անց՝ լիբանանյան բանակի սպա: 1979 թ. Փանոս Մանջյանին գործուղում են ԱՄՆ, որտեղ կատարելագործվում է զրահատանկային մասնագիտության մեջ, որից հետո նա նշանակվում է բրիգադի շտաբի պետ, հրամանատարի օգնական, այնուհետև՝ բանակի 10-րդ զրահատանկային բրիգադի հրամանատար: 2001 թ. Լիբանանի նախագահ գեներալ Էմիլ Լահուդի հրամանագրով Փանոս Մանջյանին շնորհվեց գեներալի աստիճան: 2005-2008 թթ. նա բանակի հրամանատար գեներալ Միշել Սուլեյմանի չորս օգնականներից մեկն էր, իսկ 2010 թ. ավարտեց զինվորական ծառայությունը[136]: 2011 թ. Փանոս Մանջյանը նշանակվեց Լիբանանի պետական նախարար[137]:

Լիբանանյան բանակի բրիգադի գեներալ Նարեկ Աբրահամյանը ծնվել է 1953 թ. Այնճարում: Սկզբնական կրթությունը ստացել է Հառաջ վարժարանում, այնուհետև՝ Բեյրութի Հայ ավետարանական քոլեջում: Ռազմական ակադեմիան ավարտելուց հետո նա 1994-1995 թթ. վերապատրաստվել է ԱՄՆ-ի հրամանատարաշտաբային քոլեջում: Նարեկ Աբրահամյանը նշանակվել է վաշտի, գումարտակի, այնուհետև՝ գնդի հրամանատար, իսկ 1998 թ. պաշտոնաթող է եղել: Նա

---

[136] عسكريون في السياسة، الوزير منجيان، مجلة الجيش، العدد 324، حزيران، 2012، http://www.lebarmy.gov.lb/ar/news/?31693#.UqW4kdIW33p

[137] **Сарабьев А.**, Ливан, Ближний Восток, Арабское пробуждение и Россия: что дальше? Сборник статей, Москва, ИВ РАН, 2012, с. 343.

մասնակցել է 1975 թ. սկսված Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի ժամանակ ծավալված գործողություններին[138]: Գեներալ-մայոր Նարեկ Աբրահամյանը հիմնել է Ազատ լիբանանահայերի շարժումը և դարձել նրա ղեկավարը[139]:

1998 թ. Լիբանանի նախագահ ընտրվեց ծագումով նաև հայ գեներալ Էմիլ Լահուդը: Էմիլ Լահուդը ծնվել է 1936 թ. Բեյրութում: Նրա հայրը լիբանանյան բանակի գեներալ Ջամիլ Լահուդն էր, ով հայտնի է եղել «Կարմիր գեներալ» մականվամբ, իսկ մայրը՝ հայազգի Ադրինե Բաջակյանը: Էմիլ Լահուդն ամուսնացած է հայուհի Անդրեա Ամատունու հետ[140]: Նա իր ռազմական կրթությունը ստացել է Բեյրութի ռազմական ակադեմիայում, այնուհետև շարունակել Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ռազմածովային հաստատություններում[141]: 1989 թ. գեներալ Էմիլ Լահուդը նշանակվեց լիբանանյան բանակի հրամանատար, իսկ 1998 թ. ընտրվեց Լիբանանի 11-րդ նախագահ[142]: Էմիլ Լահուդի պաշտոնավարման լիազորությունները ևս երեք տարի ժամկետով երկարացվեցին 2004 թ. սեպտեմբերին կայացած Լիբանանի խորհրդարանի

---

138 ناريك أبراهميان، عميد متقاعد، رئيس "حركة اللبنانيين الأرمن الأحرار"، http://www.focusonlebanon.com/homepage.php?page=Members&cat=Politics&sub=politicfigures&mem=Narek%20Abrahamian

139 **Messerlian Z.**, Armenian Participation in the Lebanese Legislative Elections During the Presidency of Michel Suleiman (2008), Haigazian Armenological Review, Volume 31, 2011, p. 349.

140 Մանրամասն տե՛ս **Dossier**: Emile Lahoud, President of Lebanon, Middle East Intelligence Bulletin, November, 2001, Vol. 3, No. 11.

141 **Հովհաննիսյան Ն.**, Արաբական երկրների պատմություն, հատոր 3, Երևան, 2006, էջ 664:

142 Տե՛ս **Pakradouni K.**, Years of Resistance, The Mandate of Emile Lahood, the former President of Lebanon, Garnet Publishing, 2012, p. 2, Рассадин П., Конфессиональные меньшинства в общественно-политической жизни Сирии и Ливана (1943-2010 гг.). Диссертация, МГИМО МИД России, Москва, 2011, с. 235.

հատուկ նստաշրջանի ընթացքում՝ երկրի Սահմանադրության 49-րդ հոդվածի փոփոխմամբ[143]: Ծագումով հայ գեներալ Էմիլ Լահուդը պաշտոնավարեց մինչև 2007 թ.:

Այսպիսով, հայ զինվորականները, ապրելով և իրենց գործունեությունը ծավալելով Սիրիայում և Լիբանանում իրենց տաղանդի, ռազմական հնարամտությունների և կարողությունների շնորհիվ արժանացել են զինվորական բարձր աստիճանների: Նրանք ազնվաբար ծառայել են ի պաշտպանություն Սիրիայի և Լիբանանի ազգային անկախության, խաղաղության ու անվտանգության պահպանմանը և միասնական ճակատով նպաստել են հայ-սիրիական, հայ-լիբանանյան դարավոր բարեկամության ամրապնդմանը:

---

[143] Sti Шевченко В. «Кедровая революция» в Ливане (2005 г.). Ближний Восток и современность. Сборник статей. Москва, 2011, с. 317.

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ
պ.գ.թ.
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՎՐԱ

1911 թ. սեպտեմբերի 28-ին Իտալիան պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը և ներխուժեց կայսրության աֆրիկյան տարածքներ՝ Տրիպոլի և Կիրենաիկա[144]: Իտալական 40-հազարանոց բանակին, որը զինված էր նորագույն ռազմական տեխնիկայով, դիմադրում էր Տրիպոլիում և Կիրենաիկայի խոշոր բնակավայրերում տեղակայված թուրքական 3-4 հազարի հասնող զորքը, որի պարզունակ սպառազինությունն անհամեմատելի էր իտալականի հետ[145]: Բացի այդ, դեռևս թուրք-իտալական պատերազմի նախօրյակին Հաքքի փաշայի գլխավորած իթթիհադական կառավարությունը Լիբիայից մեծ թվով զենք, զինամթերք և զինվորական ուժ էր փոխադրել Եմեն՝ այնտեղ բռնկված ապստամբությունը ճնշելու համար[146]:

Իտալացիները, օգտվելով թուրքական բանակի անմարտունակ վիճակից, գրեթե մեկ ամսվա ընթացքում գրավեցին Տրիպոլին, Թաբրուկը, Դերնան և երկարատև կռիվներից հետո՝ հոկտեմբերի 21-ին, նրանց հաջողվեց տիրանալ Բենգազիին՝ ստիպելով թուրքական կայազորին և արաբա-

---

[144] **Ch. Irace**, With the Italians in Tripoli, The Authentic History of the Turco-Italian War, London, 1912, p. 3.

[145] **Н. Прошин**, История Ливии, конец XIX в.-1969 г., Москва, 1975, с. 75.

[146] **H. Kayali**, Arabs and Young Turks. Ottomanism, Arabism and Islamism in the Ottoman Empire, 1908-1918, Berkeley, 1997, p. 73.

կան ջոկատներին նահանջել դեպի Բենին[147]: Չնայած իտալացիներին հաջողվեց նվաճել Տրիպոլիի և Կիրենաիկայի ծովափնյա շրջանների գլխավոր քաղաքները, այնուհանդերձ նրանք դեռևս հեռու էին լիակատար հաղթանակից: Իտալիայի նվաճողական քաղաքականությունը և եվրոպական գաղութի վերածվելու սպառնալիքը ոտքի հանեցին տեղի բնակչությանը՝ միավորելով նրանց մեկ ընդհանուր նպատակի շուրջ:

Թուրք-իտալական պատերազմի հենց սկզբից պարզ դարձավ, որ Օսմանյան կայսրությունն ընդունակ չէ դիմակայելու եվրոպական նույնիսկ համեմատաբար ավելի թույլ պետությանը: Վիճակը բարդանում էր նրանով, որ եվրոպական երկրների միջև հարաբերությունների ավելի սրումը վտանգում էր քաղաքական ասպարեզում մեկուսացված կայսրության գոյությունը և առավել հնարավոր էր դարձնում նրա մասնատումը: Այս պայմաններում արաբների մեծ մասը եկավ այն համոզման, որ անկախացումը Կ.Պոլսից կարագացնի այդ գործընթացն ու մեծապես կնպաստի արաբական վիլայեթների՝ եվրոպական տերությունների գաղութի վերածմանը:

Այսպիսով, Լիբիայի ճգնաժամը սկզբնական շրջանում փաստորեն դարձավ կայսրության մուսուլման հասարակության դիրքորոշումը պայմանավորող, նրան համախմբող և միավորող գործոն: Մասնավորապես Սուդանում, Մարոկկոյում, Ալժիրում, Աֆղանստանում, Իրանում, Ինդոնեզիայում և այլուր տեղի ունեցան հակաիտալական ելույթներ[148]: Բաղդադում անցկացվեցին բողոքի զանգվածային ցույցեր, որոնց ժամանակ հավաքագրվեցին կամավորներ, և գումարներ

---

[147] **Н. Прошин**, նշվ. աշխ., էջ 76:

[148] الدكتور توفيق برو، العرب و الترك في العهد الدستورى العثمانى ١٩٠٨-١٩١٤، دمشق، ١٩٩١

հանգանակվեցին՝ Լիբիա ուղարկելու համար[149]: Արաբական մյուս վիլայեթները ևս մեծ ակտիվություն ցուցաբերեցին:

Հարկ է նշել, որ թուրք-իտալական պատերազմին արձագանքեցին նաև Արաբիայի հեղինակավոր առաջնորդները: Եմենի իմամ Յահյան, օրինակ, թուրք սուլթանին հղած իր հեռագրում հայտնում էր, որ պատրաստ է հավաքագրելու 100 հազար կամավոր՝ իտալացիներին դիմակայելու համար: Աբդ Ալ-Ազիզ իբն Սաուդը պատրաստակամություն հայտնեց տեղի ցեղերին համախմբելու օսմանյան դրոշի ներքո իտալացիների դեմ պայքարում[150]:

Իտալիայի ներխուժումը Լիբիա արաբ ազգային գործիչների կողմից ընդունվեց որպես համաարաբական խնդիր: Արաբական վիլայեթներում կազմակերպվում էին հակաիտալական ցույցեր և ելույթներ: Քաղաքական ու հասարակական բազմաթիվ կազմակերպությունների նախաձեռնությամբ ստեղծվում էին կամավորական ջոկատներ: Ռազմական գործողություններին մասնակցելու ցանկություն հայտնած կամավորների թիվը 1912 թ. սկզբին հասնում էր 12 հազարի[151]: Այդ հարցում ակտիվությունը մեծ էր հատկապես Կ. Պոլսում, որտեղ կենտրոնացված էին արաբական հասարակության առավել գործունյա շրջանների ներկայացուցիչները՝ ուսանողներ, սպաներ, պաշտոնյաներ: Ի դեպ, երիտասարդ արաբ սպաների զորակոչման գործում կարևոր ներդրում ունեցավ նաև «ալ-Կահտանիա» գաղտնի ընկերությունը: 1912 թ. Գարնանը, չնայած թուրքական բանակի գլխավոր շտաբի հարուցած խոչընդոտներին, մի խումբ երիտասարդ արաբ սպաներ՝ Սուբհի Ալ-Տարաբլուսին, Մահմուդ Հիլմին, Իսա Ալ-Վատարին, Սայիդ Ալ-Միդֆային, Իզետ Ալ-Ջունդին և այլք, մեկնե-

---

149 **H. Kayali**, նշվ. աշխ., էջ 108:

150 **Н. Прошин**. նշվ. աշխ., էջ 82:

151 Նույն տեղում:

ցին Լիբիա[152]: Կիրենաիկա մեկնեց նաև «ալ-Կահտանիայի» ղեկավարներից մեկը՝ Ազիզ Ալի Ալ-Միսրին: Նա նշանակվեց Բենգազիի ռազմաճակատի հրամանատար և դրսևորեց իրեն որպես հմուտ ռազմական գործիչ ու քաջարի մարտիկ[153]:

Մինչդեռ իթթիհադական կառավարությունում իտալա-թուրքական պատերազմի հենց առաջին օրերից գերիշխում էին Իտալիայի նվաճողական քաղաքականության դեմ պայքարելու անհնարինության զգացումը, հուսալքությունը և ընդհանրապես ծայրահեղ հոռետեսական տրամադրությունները: Պատերազմի սկզբնական շրջանում կառավարությունը, այնուամենայնիվ, ձեռնամուխ եղավ ողջ երկրի տարածքում հատուկ կոմիտեների ստեղծմանը, որոնք զբաղվում էին միջոցների հայթայթմամբ ու կամավորների հավաքագրմամբ: Անկասկած, կառավարության այս և մյուս միջոցառումների հիմնական նպատակը կայսրության հեղինակության պահպանումն էր և ստեղծված իրադրության պայմաններում երկրի տարբեր շրջաններում և մասնավորապես, արաբական վիլայեթներում հնարավոր հակակառավարական հուզումներից խուսափելը: Արդեն 1911 թ. սեպտեմբերին իթթիհադական ղեկավարները հայտարարում էին, որ Տրիպոլիի պաշտպանության համար չեն թափի ոչ մի թուրք զինվորի արյուն: Այս դիրքորոշումն արդարացնելու համար «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության պաշտոնաթերթ «Թանինը» («Արձագանք») գրում էր, որ Տրիպոլին այն վիլայեթներից է, որը չի տալիս որևէ նյութական օգուտ, և օսմանյան կառավարությունն ստիպված է իր վրա վերցնել նրա բոլոր ծախսերը[154]:

---

[152] الدكتور توفيق برو, նշվ. աշխ., էջ 314, 315:

[153] **J. Jankowski**, Egypt and Early Arab Nationalism 1908-1922 / The Origins of Arab Nationalism, New York, 1991, p..247.

[154] الدكتور توفيق برو, նշվ. աշխ., էջ 331:

Թուրքական կառավարության վերաբերմունքը Իտալիայի հետ պատերազմին ավելի քան հստակորեն է արտահայտված Էնվեր բեյի օրագրի գրառումներում, որտեղ ուղղակի նշվում է, որ Թուրքիան ստիպված կլինի համակերպվել Տրիպոլիի և Կիրենաիկայի ժամանակավոր կորստի հետ[155]:

Կառավարության որդեգրած այս դիրքորոշմանը միանգամայն համապատասխան էին գործում նաև Լիբիայի թուրքական զորամիավորումները: 1912 թ. սկզբներին նրանք վերջնականապես դադարեցին մասնակցել ռազմական գործողություններին, և բազմաթիվ սպաներ ու զինվորներ վերադարձան Թուրքիա[156]: Իտալական զորքերի հրամանատար Կենևի խոստովանությամբ թուրքական զորքերի ներկայությունը Տրիպոլիում և Կիրենաիկայում կրում էր ընդամենը խորհրդանշական բնույթ[157]: Պատերազմի ողջ ծանրությունն ընկած էր արաբական աշխարհազորի վրա:

Պատերազմի նկատմամբ իթթիհադական իշխանությունների նման մոտեցումն արդարացի զայրույթ առաջացրեց արաբ քաղաքական և հասարակական գործիչների մոտ, ինչն իր արտահայտությունը գտավ նաև օսմանյան խորհրդարանում:

Արաբ պատգամավորների կողմից կառավարության խիստ քննադատությունը դժգոհության ալիք բարձրացրեց Իբրահիմ Հաքքի փաշայի կառավարության դեմ: Վերջինս ստիպված եղավ հրաժարական տալ[158]: Լիբիայի պատգամավորները պահանջեցին պատասխանատվության ենթարկել

---

[155] **Н. Прошин**, նշվ. աշխ., էջ 81:

[156] **L. Anderson**, The Development of Nationalist Sentiment in Libya, 1908-1922 / The Origins of Arab Nationalism New York, 1991, p. 230.

[157] **Н. Прошин**, նշվ. աշխ., էջ 86:

[158] **S. Show, E. Shaw,** History of Ottoman Empire and Modern Tukey, Reform, Revolution and Republis: The Rise of Modern Turkey 1808-1975, Cambridge, 1977, p. 290.

կառավարության անդամներին, որոնց անտարբերության հետևանքով Տրիպոլին և Կիրենաիկան այդպես էլ չապահովվեցին անհրաժեշտ սպառազինությամբ: Լիբիայի պատգամավորների պահանջը, ինչպես և պետք էր սպասել, աջակցություն գտավ արաբ պատգամավորների ու ընդհանրապես խորհրդարանական ընդդիմադիր խմբավորումների կողմից[159]:

Հարկ է նշել, որ թուրք-իտալական պատերազմն ընդհանուր առմամբ չնվազեցրեց օսմանիզմի գաղափարախոսության և միասնական հայրենիքի գաղափարի նկատմամբ արաբների հավատը: Սակայն այն խարխլեց արաբական առաջադիմական հասարակության վստահությունն իթթիհադական կառավարության նկատմամբ: Պատահական չէ, որ այս ընթացքում արաբներն սկսեցին ավելի ակտիվորեն ներգրավվել համաօսմանյան հակաիթթիհադական ընդդիմադիր կուսակցությունների շարքերը: Պարտությունը պատերազմում մեծ չափով թուլացրեց իթթիհադական ղեկավարների քաղաքական դիրքերը, պատճառ դարձավ իշխանության փոփոխության և մեծապես ազդեց կայսրությունում ծավալված հետագա գործընթացների վրա:

---

[159] H. Kayali, նշվ. աշխ., էջ 107:

Պ.Գ.Թ. ՄՈՒՇԵՂ ՂԱՀՐԻՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՔՅԱՆ ՔՐԴՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Սիրիայում և Իրաքում պատերազմի պայմաններում 2014 թ.-ից ակտիվ գործունեություն է ծավալել «Իրաքի և Լևանտի իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումը: Օգտվելով այդ երկրներում առկա անկայուն քաղաքական դրությունից՝ ԻԼԻՊ-ը զգալի տարածքներ գրավեց և 2014 թ. հունիսի 29-ին հռչակեց Իսլամական պետություն խալիֆայությունը, որի իշխանությունը տարածվում է Սիրիայի արևելքում, հյուսիսում, Իրաքի կենտրոնում և հյուսիս-արևմուտքում:

Իրաքի և Սիրիայի տարածքների զգալի մասում կենտրոնական իշխանությունները կորցրել են վերահսկողությունը, առաջացել է իշխանության և ուժի վակուում, որոնք լցնում են ծայրահեղ իսլամիստները՝ ի դեմս ԻԼԻՊ-ի, և քրդերը:

2014 թ. հունիսին ԻԼԻՊ-ը գրավեց Իրաքի՝ մեծությամբ երկրորդ քաղաքը՝ Մոսուլը՝ տիրանալով իրաքյան բանակի ստորաբաժանումների թողած մեծաքանակ սպառազինությանը, բանկերին, նավթագազային պաշարներին, նավթի վերամշակման գործարաններին, օդանավակայաններին: ԻԼԻՊ-ի կողմից Մոսուլի և մի շարք այլ տարածքների գրավումից իրաքյան քրդերը հայտնվեցին ռազմաճակատի առաջին գծում: Իրաքյան բանակի նահանջի պայմաններում քրդական զինված ջոկատները հարկադրված էին բախումների մեջ մտնել ԻԼԻՊ-ի հետ՝ այդ տարածքներում բնակվող

քրդերին պաշտպանելու և նրանց առաջխաղացումը բուն Իրաքյան Քրդստանի տարածք կանգնեցնելու համար:

Ներկայում թե՛ Իրաքի և Սիրիայի քրդերը, թե՛ ԻԼԻՊ-ը կարևոր դեր են խաղում Մերձավոր Արևելքում սահմանների փոփոխության գործում: Ինչպես իրավացիորեն նկատում է The Economist-ը. «Մերձավոր Արևելքում պետություն չհանդիսացող խաղացողները օրակարգ են թելադրում, մարտահրավերներ նետում կառավարություններին»: Տարածաշրջանի թույլ կառավարությունները, որոնք հաճախ վերահսկվում են փոքրամասնությունների կողմից, չեն կարողանում ապահովել էթնիկ և դավանաբանական բոլոր խմբերի համարժեք ներկայացվածությունը քաղաքական կյանքում: Կառավարությունները հաճախ թերանում են հանրային ծառայությունների՝ դատարանների, դպրոցների, հիվանդանոցների ապահովման հարցում, այդ պատճառով բազմաթիվ մարդիկ իրենց հայացքներն ուղղում են արմատական իսլամական, սալաֆիական տարբեր շարժումներին ու կառույցներին[160]:

Ծայրահեղ իսլամիստների և քրդերի բախման սկզբնական շրջանում հաջողությունն առաջինների կողմն էր: Քրդերի համար մեծ կորուստ էր Սինջար քաղաքի գրավումը, որտեղ ԻԼԻՊ-ը եզդիների կոտորածներ իրագործեց: Մոսուլի, Թիքրիթի գրավումից հետո գրոհայինները հարձակում սկսեցին քրդերի մայրաքաղաք Էրբիլի ուղղությամբ, որը մեծ ջանքերի գնով հաջողվեց կանգնեցնել: Հաշվի առնելով սպառնացող վտանգը՝ Քրդստանի դեմոկրատական կուսակցության և Քրդստանի հայրենասիրական միության զինված ուժերը մի կողմ թողեցին տարաձայնությունները՝ ընդդեմ ընդհանուր հակառակորդի:

---

[160] The Rule of the Gunman. Why Post-Colonial Arab States are Breaking down 11 Oct, 2014, http://www.economist.com/news/middle-east-and-africa/21623771-why-post-colonial-arab-states-are-breaking-down-rule-gunman.

2014 թ. հուլիսին Իրաքյան բանակի ստորաբաժանումները նահանջեցին նաև Քիրքուքի շրջանից, որի նկատմամբ հավակնություններ ունի Իրաքյան Քրդստանը: Քիրքուքի գրավումը թույլ չտալու համար քրդական փեշմերգան մտավ քաղաք: Այսպիսով, կողմերի՝ դիրքեր զբաղեցնելուց հետո այժմ Իրաքյան Քրդստանի և ԻԼԻՊ-ի «շփման գծի» ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 1000 կմ:

ԻԼԻՊ-ը անվտանգության լրջագույն մարտահրավեր է Իրաքի քրդական ինքնավարության համար, սակայն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ԻԼԻՊ-ի գործոնը կարող է աշխատել ի շահ քրդերի:

Իսլամական պետության դեմ մարտերում քրդական փեշմերգան կենդանի ուժի զգալի կորուստներ է ունենում: 2015 թ. հոկտեմբերի սկզբի դրությամբ զոհերի թիվը կազմել է մոտ 1300:[161]

Պատերազմը ֆինանսական լուրջ խնդիրների առաջ կանգնեցրեց Քրդստանի տարածաշրջանային կառավարությանը: Ինքնավարության եկամուտների գլխավոր աղբյուրը նավթն է: Հարյուր հազարավոր փախստականների առկայության, ռազմական ծախսերի ավելացման, նավթի գնի անկման պայմաններում քրդական կառավարությունը դժվարանում է կատարել իր ֆինանսական պարտավորությունները: Աշխատավարձերի չվճարումը հանգեցրեց սոցիալական լարվածության, և 2015 թվականի հոկտեմբերի սկզբից Սուլեյմանիեի շրջանում ցույցեր սկսվեցին ընդդեմ կառավարության և Քրդստանի դեմոկրատական կուսակցության, որի առաջնորդն է քրդական ինքնավարության նախագահ Մասուդ Բարզանին: Կալադիզե, Կալար բնակավայրերում ցույ-

---

[161] 1,300 Iraqi Kurdish Peshmerga Killed So far in War against Islamic State, Oct 2, 2015, http://ekurd.net/1300-peshmerga-killed-islamist-war-2015-10-02.

ցերը վերածվեցին բախումների, որի հետևանքով զոհեր եղան[162]:

2015 թվականի վերջի դրությամբ Քրդստանի տարածաշրջանային կառավարության տվյալներով Իրաքյան Քրդստանում ապաստան էր գտել 1.5 միլիոն ներքին տեղահանված և 280 հազար սիրիացի փախստական: Նրանց աջակցելու համար, ըստ ՔՏԿ-ի և Համաշխարհային բանկի հաշվարկների, տարեկան առնվազն 1.4 միլիարդ դոլար է անհրաժեշտ[163]:

Այս զարգացումները հանգեցրին ներքաղաքական լարվածության աճի խորհրդարանական գլխավոր ուժերի՝ ՔԴԿ-ի և Գորանի միջև: Բանը հասավ նրան, որ Գորանի ներկայացուցիչներին, այդ թվում՝ խորհրդարանի խոսնակին, թույլ չտվեցին մտնել Էրբիլ՝ մասնակցելու խորհրդարանի նիստին[164]: Վերջին տարիներին ԱՄՆ-ի ու այլ երկրների աջակցությամբ քրդական ուժերի հաշտեցման, տարաձայնությունների հաղթահարման ուղղությամբ մեծ աշխատանք է տարվել, սակայն կլանայնությունը, նեպոտիզմը շարունակում են լուրջ խնդիրներ մնալ և ճգնաժամային պայմաններում նոր պառակտման ու անկայունության պատճառ կարող են դառնալ:

Իրաքյան Քրդստանի համար վտանգ են ներկայացնում նաև Իսլամական պետությանն անդամակցած և համակրող քրդերը: Չկան հստակ տվյալներ, թե քանի քուրդ է

---

[162] Three killed in Violent unrest in Iraq's Kurdistan Region, Oct. 10, 2015, http://www.reuters.com/article/us-iraq-kurds-protests-idUSKCN0S40JE20151010

[163] Crisis Looms for Refugees Taken in by Iraq's Kurds, 30 Sep. 2015, http://www.bloombergview.com/articles/2015-09-30/crisis-looms-for-refugees-taken-in-by-iraq-s-kurds.

[164] Goran Gathers for First Meeting since MPs Ousted, Oct. 18, 2015, http://rudaw.net/english/kurdistan/18102015.

անդամակցում ԻՊ-ին, սակայն Իրաքյան Քրդստանի՝ կրոնական հարցերով նախարարության ներկայացուցիչ Մարիվան Նաքշբանդիի տվյալների համաձայն՝ նրանց թիվը գերազանցում է 500-ը[165]:

Էրբիլի համար լուրջ մարտահրավեր է Սիրիայի քրդերի հարցը: 2012 թվականից Սիրիայի հյուսիսի զգալի տարածքներ անցել են քրդերի վերահսկողության տակ, որտեղ ժողովրդական ինքնապաշտպանական ջոկատները (YPG) մարտեր են մղում ԻԼԻՊ-ի դեմ: ԺԻՊ-ի վրա մեծ է Քրդստանի աշխատավորական կուսակցության ազդեցությունը: Ռոժավայի՝ Սիրիական Քրդստանի վերահսկողության հարցով ՔՏԿ-ի և Քրդստանի աշխատավորական կուսակցության միջև դիմակայությունը կարող է սրվել: Մյուս կողմից Անկարան դեմ է քրդական ինքնավարությանը Սիրիայում և պատրաստ է անգամ ուժ կիրառել դա կանխելու համար: Անկարան Էրբիլի գլխավոր գործընկերներից մեկն է, և Սիրիայի քրդերի հարցով թուրքական իշխանությունների հետ առճակատման մեջ մտնելը սպառնալիքի տակ կդնի արտաքին աշխարհին կապող գլխավոր ճանապարհը և Անկարայի բարեհաճ վերաբերմունքը:

Անդրադառնանք այն հնարավորություններին, որոնք Իրաքյան Քրդստանը ստանում է ԻԼԻՊ-ի գոյությունից:

Իրաքյան Քրդստանը ԻԼԻՊ-ին դիմակայող ամենամարտունակ տարածաշրջանային ուժն է, վայելում է միջազգային հանրության աջակցությունը և համակրանքը: Միջազգային ասպարեզում Իրաքյան Քրդստանի հեղինակությունն անշեղորեն աճում է, Էրբիլը տարածաշրջանում լուրջ քաղաքական դերակատար է դառնում: Եվրամիությունը որոշում կայացրեց Իրաքյան Քրդստանին ուղղակի ռազմական

---

[165] **Mohammed Salih**, How Islamic State is Trying to Lure Kurds to its Ranks, 12 August 2016, http://www.al-monitor.com/pulse/originals/2016/08/islamic-state-propaganda-video-kurds-iraq.html.

աջակցություն ցուցաբերելու մասին[166]: 2014 թ. սեպտեմբերի 12-ին Էրբիլ այցելեց Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, որտեղ հայտարարեց, որ Ֆրանսիայի տրամադրած զենքը մեծ նշանակություն է ունեցել «ուժերի հավասարակշռությունը վերականգնելու համար»[167]:

Իրաքի թույլ և պառակտված վիճակը ձեռնտու է քրդերին. որքան երկար տևի Բաղդադի անհաջողությունների շարքը, այնքան կվարկաբեկվի դաշնային պետության գաղափարը, ավելի հիմնավոր կհնչեն քրդերի փաստարկները անկախ քրդական պետության օգտին՝ որպես կայունության օջախ Մերձավոր Արևելքում: Իրաքյան Քրդստանը հնարավորություն է ստացել ընդլայնելու իր վերահսկողությունը վիճելի տարածքների վրա, ինչպիսին է Քիրքուքը: Քրդստանի տարածաշրջանային կառավարության համար Իսլամական պետության զբաղեցրած տարածքները բուֆեր են մի կողմից Բաղդադի, մյուս կողմից Դամասկոսի դեմ՝ հաշվի առնելով Էրբիլի հավակնությունները Սիրիայի քրդաբնակ տարածքների նկատմամբ:

Քրդական գործոնը կարող է հակակշիռ լինել սունիի արմատականությանը և շիական դաշինքին՝ Իրանի գլխավորությամբ: Քրդական փեշմերգան մարտունակ ու ավելի վստահելի է, քան Իրաքի բանակը[168], ինչպես նաև շիական միլիսները, որոնց վրա մեծ է Իրանի ազդեցությունը:

---

[166] E.U. Foreign Ministers Back Military Support for Kurds in Northern Iraq, 14 Aug, 2015, http://www.nytimes.com/2014/08/16/world/europe/european-union-iraq.html?_r=0

[167] Hollande: arming Kurds 'decisive' against ISIS, 12 Sep,2014, http://english.alarabiya.net/en/News/middle-east/2014/09/12/France-s-Hollande-arrives-in-Iraq-to-support-new-government.ht

[168] 2014 թվականին Իրաքի բանակը փաստացի առանց լուրջ դիմադրության զգալի տարածքներ է զիջել ԻԼԻՊ-ին, սունիի-շիա տարաձայնությունները ևս բացասաբար են ազդել բանակի մարտունակության վրա:

Պատմության մեջ առաջին անգամ Իրաքի, Սիրիայի, Թուրքիայի քրդերը հանդես են գալիս միասնական օրակարգով ընդհանուր հակառակորդի դեմ՝ չնայած այն բանին, որ Սիրիայում Քրդստանի տարածաշրջանային կառավարության և Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) միջև ազդեցության տարածման պայքար է ընթանում:

Իրաքի քրդերը կարողացել են իրենց կողմը գրավել միջազգային հանրության և լրատվամիջոցների համակրանքը: Նրանք իրենց ներկայացնում են որպես բարբարոս ծայրահեղ իսլամիստների դեմ հանդես եկող ուժ, որը կռվում է հանուն մարդասիրության և քաղաքակրթության՝ ապաստան տալով մազապուրծ քրիստոնյա ու եզդի փոքրամասնություններին:

Մերձավոր Արևելքում ստեղծված քաոսային վիճակը վտանգներից բացի քրդական անկախ պետության ստեղծման մեկդարյա անընդհատ պայքարն ավարտին հասցնելու, դե ֆակտո անկախ միավորը միջազգայնորեն ճանաչված պետություն դարձնելու հեռանկար է բացում: Տարբեր երկրներ, այդ թվում՝ ԱՄՆ-ը, Եվրամիության առաջատար երկրները, Չինաստանը, Թուրքիան, Ռուսաստանը, Իրանն իրենց ներկայացուցչություններն են բացել Էրբիլում, Իրաքյան Քրդստանի նախագահ Մասուդ Բարզանիին ընդունում են ԱՄՆ-ի, Թուրքիայի նախագահները: Այսինքն՝ աշխարհում բացասաբար չեն վերաբերվում կամ ինչ-որ պահից բացասաբար չեն վերաբերվի քրդական պետության անկախությանը:

Անկախության հռչակման հարցում Էրբիլը շատ զգուշավոր է գործում: 2005 թ. խորհրդարանական ընտրություններին զուգահեռ քրդական ինքնավարության տարածքում ոչ պաշտոնական հանրաքվե անցկացվեց, որտեղ քրդերի ճնշող մեծամասնությունը կողմ արտահայտվեց անկախությանը: 2014 թ. Մասուդ Բարզանին հայտարարեց անկախության

հանրաքվե անցկացնելու հնարավորության մասին, ինչն ավելի շատ հարևան պետությունների և միջազգային տրամադրությունները շոշափելու փորձ էր: 2016 թ. հունվարին Բարզանին հայտարարեց, որ Սայքս-Պիկոյի պակտը, որով 100 տարի առաջ բաժանվել են Օսմանյան կայսրության մերձավորարևելյան տիրույթները, սպառել է իրեն: Նա գերտերությունների ղեկավարներին կոչ արեց աջակցել քրդական անկախ պետության ստեղծմանը:

«Անկախ պետությունը մեր ազգային իրավունքն է: Մենք սպառնալիք չենք ոչ մեկի համար, սակայն թույլտվություն չենք խնդրելու մեր իրավունքներն իրացնելու գործում... Դա (անկախության հռչակումը- Մ.Ղ.) մոտ է ավելի, քան երբևէ: Գիտեմ, որ դա ծանր բեռ է, բայց նաև սուրբ պատասխանատվություն է»[169],- ազդարարեց Մասուդ Բարզանին:

---

[169] Iraqi Kurdistan President: Time has Come to Redraw Middle East Boundaries, 22 Jan. 2016 http://www.theguardian.com/world/2016/jan/22/kurdish-independence-closer-than-ever-says-massoud-barzani

ՏԱԹԵՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ (ԱՊԼ) ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀԱՐԱՅԻ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արևմտյան Սահարայի հակամարտությունը մաղրիբյան տարածաշրջանի առավել սուր և շարունակական խնդիրներից է, որը լուրջ մարտահրավեր է տարածաշրջանի անվտանգության, կայունության և ինտեգրման համար:

Արևմտյան Սահարայի հիմնախնդիրը մինչ օրս մնում է չկարգավորված, իսկ Սահարայի ժողովուրդը հնարավորություն չունի իրագործելու իր ինքնորոշման իրավունքը: Այս խնդիրը վաղուց դուրս է եկել նեղ պետական շրջանակներից և ձեռք բերել միջազգային բնույթ, քանի որ հետապնդում է ոչ միայն սահարացիների, այլև Հյուսիսային Աֆրիկայի այլ երկրների և միջազգային հանրության շահերը: Այդ խնդրի լուծմամբ է պայմանավորված նաև ամբողջ տարածաշրջանում հարատև խաղաղության վերականգնումը:

Վերջին տասնամյակների ընթացքում միջազգային մթնոլորտի, տարածաշրջանային իրավիճակի փոփոխությունները հանգեցրել են հակամարտող երկու կողմերի՝ Արևմտյան Սահարայի ղեկավարության (ՊՕԼԻՍԱՐԻՕ[170]) և Մարոկկոյի առավել իրատեսական դիրքորոշմանը: Դրա հիմքում ընկած է ժամանակակից իրողությունների, ինչպես

---

[170] ՊՕԼԻՍԱՐԻՕ-ն (Սեգիետ Ալ-Համրայի և Ռիո դե Օրոյի ազատագրման Ազգային ճակատի իսպաներեն տարբերակի առաջին տառերի հապավումն է՝ *Frente Popular deLiberación de Saguía el Hamra y Río de Oro):* Արևմտյան Սահարայի հակամարտության մեջ ներգրավված կողմերից մեկն էր, որը ներկայացնում էր Սահարայի ժողովրդի շահերը: Տե՛ս Pazzanita Anthony G., Morocco versus Polisario: a Political Interpretation,The Journal of Modern African Studies, Vol. 32, No. 2, 1994, p. 265.

նաև այն փաստի ճանաչումը, որ Արևմտյան Սահարայի խնդրի կարգավորումը և տարածաշրջանում անվտանգության ապահովումը հնարավոր են միայն խաղաղ բանակցությունների միջոցով՝ որպես միակ ելք ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Սակայն հարկ է նշել, որ հակամարտող կողմերը տարբեր կերպ են հասկանում հակամարտության էությունը, և նրանցից յուրաքանչյուրն այս խնդրի լուծման, խաղաղ գործընթացի և վերջնական արդյունքի վերաբերյալ իր սեփական տեսակետն է արտահայտում, ինչն էլ դժվարացնում է դրա կարգավորումն ու լարվածություն ստեղծում միջազգային հարաբերություններում[171]:

Հակամարտության կարգավորման փորձի գիտական, օբյեկտիվ վերլուծությունը, դրա դրական և բացասական կողմերը մեծ կարևորություն ունեն ոչ միայն տարածաշրջանի համար, այլև կարող են օրինակ դառնալ նմանատիպ այլ ճգնաժամային իրավիճակներից դուրս գալու համար: Այս փորձն օգնում է բացահայտել հակամարտող կողմերի փոխհամագործակցության ընդհանուր օրինաչափությունները, իրենց դիրքորոշումների մերձեցման համար կիրառվող մեթոդները, ինչպես նաև այդ ճանապարհին առկա անհաջողությունների պատճառները: Բացի այդ, ուսումնասիրվող թեման վերաբերում է ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի համար մղված պայքարին, իսկ չճանաչված պետության այս օրինակը, ինչպիսին Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետությունն է (ՍԱԴՀ), մեզ համար կարևոր է և ուսանելի:

Ուսումնասիրվող խնդիրն անհրաժեշտ է դիտարկել ապագաղութացման համատեքստում: Այն ծագել է գաղութային ժամանակաշրջանում Արևմտյան տերությունների կողմից

---

171 صفحة ٩٨. محمود حداد. الصحراء الغربية بين مشكلة الانضمام والانفصال،مركز دراسات الوحدة العربية، بيروت، ١٩٨٧

Արաբական Մաղրիբի բաժանման և Արևմտյան Սահարայի ժողովրդի ինքնորոշման իրավունքից զրկվելու արդյունքում[172]: Պատահական չէ, որ Արևմտյան Սահարան, գտնվելով տարածաշրջանի առևտրային կարևորագույն ուղիների անցման շրջանում և, ունենալով հանքային և ձկնային հարուստ պաշարներ, մշտապես գրավել է գաղութատերերի ուշադրությունը[173]:

Իսպանական գաղութատիրության ժամանակաշրջանում Արևմտյան Սահարայի տարածքային պատկանելության հարցի վերաբերյալ Հաագայի միջազգային դատարանի որոշումը[174], որը թեև խորհրդատվական բնույթ էր կրում, այնուամենայնիվ այս հակամարտության վրա հրավիրեց միջազգային հանրության ուշադրությունը: Օրակարգում դրվեց XX դարի վերջի առավել բարդ և հակասական խնդիրներից մեկի՝ Արևմտյան Սահարայի հիմնախնդրի հարցը: Միջազգային հանրությունը, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունները հակամարտության կարգավորման նպատակով ներգրավվեցին տվյալ խնդրի մեջ: Սակայն նրանցից յուրաքանչյուրն իր շահն էր հետապնդում, որի արդյունքում տարածաշրջանը հայտնվեց պատերազմի մեջ, որի գինը մինչ՝ օրս վճարում է:

---

[172] **Damis J.**, Conflict in Northwest Africa: The Western Sahara Dispute, Stanford: Hoover Institution Press,California, 1983, p. 128.

[173] **Pinto Leite P., Olsson C.**, The Western Sahara Conflict: the Role of Natural Resources in Decolonization,Current African Issues, No. 33, The Nordic Africa Institute: Uppsala, Sweden, 2006, p. 17.

[174] 1975թ. հոկտեմբերի 16-ին Հաագայի միջազգային դատարանը կայացրեց իր վճիռը, որում նշվում էր, որ դատարանին ներկայացված նյութերը և տեղեկությունները բավարար հիմքեր չունեն Արևմտյան Սահարայի տարածքի և Մարոկկոյի Թագավորության կամ Մավրիտանիայի հանրության միջև տարածքային ինքնավարության վերաբերյալ գոյություն ունեցած որևէ կապի առկայությունը հաստատելու համար: Տե՛ս **Наумкин В. В.** Новейшая история арабских стран Африки (1917-1987). М. Наука. Главная редакция восточной литературы, 1990, стр. 425.

Այսպես, Արևմտյան Սահարան՝ որպես աշխարհագրական շրջան, մտնում է Մարոկկոյի կազմի մեջ, սակայն այդ տարածքը հռչակված է ՍԱԴՀ, որը միջազգային իրավունքի սուբյեկտ է, ինչպես նաև միջազգային հարաբերությունների մասնակից: Ներկայումս 83 պետություն[175] ճանաչել է ՊՕԼԻՍԱՐԻՕ-ն՝ որպես ազատագրական շարժում և ՍԱԴՀ-ը՝ որպես պետություն, որին պետք է ենթակա լինի Արևմտյան Սահարայի տարածքի սուվերենությունը[176]:

Արևմտյան Սահարայի անկախության խնդիրը համաշխարհային հանրությունը բաժանել է մի քանի կատեգորիաների՝ երկրներ, որոնք կողմ են Արևմտյան Սահարայի անկախացմանը, և երկրներ, որոնք դեմ են[177]: Այս ամենը դժվարացրել է միջազգային հանրության՝ հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը: Ուստի, կարևոր է դիտարկել խնդրի վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների դիրքորոշումները:

Արևմտյան Սահարայի հակամարտության զարգացման տարբեր փուլերում իրենց մասնակցությունն են ունեցել այնպիսի միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), Աֆրիկյան միասնության կազմակերպությունը (ԱՄԿ) և Արաբական պետությունների լիգան (ԱՊԼ)[178]: Եվ, չնայած նրանց ջանքերին, արդեն ավելի քան երեսուն տարի Արևմտյան Սահարայի շուրջ հակամարտությունը շարունակվում է: Սահարայի բնակչության մեծ մասը բնակվում է Ալժի-

---

[175]The states which recognize the SADR, http://www.arso.org.

[176] **Knop K.,** Diversity and Self-Determination in International Law, Cambridge University Press, Cambridge, England, 2002, pp. 135-138.

[177] **Zoubir Yahia H.,Volman D.,** International Dimensions of the Western Sahara Conflict, Praeger Publishers, Westport, CT, 1993, p. 125.

[178] **Von Hippel K.,** The Non-Interventionary Norm Prevails: an Analysis of the Western Sahara, The Journal of Modern African Studies, Issue No. 33, Vol. 1, 1995, pp. 71-73.

րի փախստականների ճամբարներում և ազատագրված տարածքներում[179]: Այնտեղ օրական խախտվում են մարդու իրավունքներն ու ազատությունները, ինչի մասին վկայում են միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների փաստաթղթերը: Այս ամենը տեղի է ունենում, սակայն միջազգային հանրությունը, մասնավորապես ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, որևէ ջանք չի գործադրում՝ ստիպելու Մարոկկոյի թագավորությանը ենթարկվել միջազգային օրենքներին: Այնուամենայնիվ, չնայած քաղաքական գործիչների տարբեր հայտարարություններին, այս ամենից տուժողը միմիայն Սահարայի ժողովուրդն է, մինչդեռ Մարոկկոն, շրջանցելով միջազգային իրավունքը, դաժանորեն շահագործում է Արևմտյան Սահարայի բնական պաշարները, որի մասին բազմիցս հայտարարել են միջազգային բնապահպանական կազմակերպությունները[180]:

Այս տարածքային բազմակողմանի վեճի կարգավորման համատեքստում իր առանձնահատուկ դերն ունեցավ նաև Արաբական պետությունների լիգան (ԱՊԼ): Ուսումնասիրելով ԱՊԼ-ի կանոնադրությունը՝ պետք է նշել, որ, ի տարբերություն ԱՄԿ-ի և ՄԱԿ-ի, այն գաղութային համակարգի վերացման վերաբերյալ հատուկ հոդվածներ և կետեր չէր ընդգրկում. չնայած ԱՊԼ-ի ստեղծման ժամանակ (1945 թ. մարտի 22), բացի Լիբանանից (1943թ.), Սիրիայից (1946թ.) և Իրաքից (1930թ.), որոնք ձեռք էին բերել անկախություն,

---

[179] **Zunes S., Mundy J.,** Western Sahara: War, Nationalism, and Conflict Irresolution, New York :Syracuse University Press, 2010, p. 127.

[180] International Crisis Group. Western Sahara: Out of the Impasse. Middle East/North Africa, Report 66 (June 11, 2007). Brussels: ICG, p. 20, http://www.crisisgroup.org.

բազմաթիվ արաբական երկրներ դեռ գտնվում էին գաղութային տիրապետության տակ[181]:

ՍԱԴՀ-ի և ԱՊԼ-ի միջև հարաբերությունները բացակայում էին, սակայն առանձին արաբական երկրներ կարողացել էին ձևավորել երկկողմ հարաբերություններ:

ԱՊԼ-ի անդամ-երկրներն Արևմտյան Սահարայի խնդրի վերաբերյալ ունեն տարբեր դիրքորոշումներ և, ըստ այդմ, նրանց կարելի է բաժանել երեք տարբեր խմբերի[182].

• երկրներ, որոնք խրախուսում են սահարացիների ազգային-ազատագրական պայքարը:

• երկրներ, որոնք դեմ են այդ պայքարին:

• երկրներ, որոնք չեզոք դիրքորոշում ունեն վերոնշյալ խնդրի վերաբերյալ:

Առաջին խմբի երկրների մեջ ներգրավված են Ալժիրը, Լիբիան, Սիրիան, Հարավային Եմենը և ՊԱԿ-ը: Շուտով նրանց շարքերում է հայտնվում նաև Մավրիտանիան[183]: Հարկ է նշել, որ Եմենն այդ շրջանում տնտեսապես անկայուն վիճակում էր, իսկ Սիրիան և ՊԱԿ-ը Իսրայելի հետ հակամարտության մեջ էին: Այս երեք երկրների կողմից տրամադրվող օգնությունը հիմնականում կրում էր դիվանագիտական և տեղեկատվական բնույթ: Լիարժեք աջակցություն ցուցաբերում էին միայն Ալժիրն ու Լիբիան[184]:

Երկրորդ խմբի երկրների շարքում, որոնք դեմ էին սահարացիների պայքարին, հիմնականում դասվում էին

---

181 بطرس بطرس غالي. جامعة الدول العربية وتسوية المنازعات المحلية، جامعة الدول العربية، معهد البحوث والدراسات العربية، القاهرة، ١٩٧٧، صفحة ٩٨.

182 **Lawless R., Monahan L.**, War and Refugees: The Western Sahara Conflict, F. Pinter Publ, New York, 1992, p. 280.

183 Նույն տեղում, էջ 285:

184 **Ковтунов А.Г.** Проблемы интеграции стран Магриба, ИИИиБВ. М., 1998, стр. 102.

Սաուդյան Արաբիան, Հորդանանը, ԱՄԷ-ն, Օմանը, ինչպես նաև՝ Իրաքը և Եգիպտոսը:

Այնուամենայնիվ, առավել ազդեցիկ արաբական երկիրը, որը տարբեր ժամանակներում փորձել է իր դերն ունենալ Արևմտյան Սահարայի հիմնախնդրի լուծման մեջ, Սաուդյան Արաբիան է[185]: Այդ մասին են վկայում առաջին հերթին Սաուդյան Արաբիայի իշխանությունների կողմից հնչեցված բազմաթիվ հայտարարությունները տվյալ խնդրի՝ ՄԱԿ-ի բանաձևին համապատասխան որոշում կայացնելու մասին, որը կբավարարեր հակամարտող կողմերին: Սաուդյան Արաբիայի դերը տվյալ հակամարտության կարգավորման գործում վերլուծելու համար անհրաժեշտ ենք համարում հակիրճ ներկայացնել Էռ-Ռիյադի և Ռաբաթի միջև ներկայիս հարաբերությունները՝ հաշվի առնելով ինչպես հարցի բուն պատմությունը, այնպես էլ Սաուդյան Արաբիայի դիրքորոշման էվոլյուցիան տվյալ համատեքստում:

Այս երկու արաբական միապետությունների՝ Սաուդյան Արաբիայի և Մարոկկոյի միջև հուսալի բարեկամական հարաբերությունների սկիզբը համարվում է XVIII դարի երկրորդ կեսը: Արդեն XX դարում (1957 թ.) Սաուդյան Արաբիան դարձավ առաջին երկրներից մեկը, որը ճանաչեց Մարոկկոյի անկախությունը[186]: Սաուդա-մարոկկոյական շփումների էվոլյուցիան ժամանակակից պատմական փուլում նույնպես հստակ պատկերացում է տալիս երկու երկրների հարաբերությունների ռազմավարական բնույթի մասին, որի գագաթնակետը սաուդյան թագավոր Ֆահդի և նրա գործընկերոջ՝ Մարոկկոյի թագավոր Հասան 2-րդի ժամանակաշրջանն է: Ավելի ուշ՝ 2005 թ. վերջին, Սաուդյան Արաբիայի թագավոր

---

[185] **Субх М.А.** О посреднической роли Саудовской Аравии в урегулировании западносахарского конфликта. Институт Ближнего Востока. 6 марта, 2013, http://www.iimes.ru.

[186] Նույն տեղում:

Աբդալլահը Ռաբաթ կատարած պաշտոնական այցի ընթացքում հայտարարեց, որ Սաուդյան Արաբիան լիովին աջակցում է Մարոկկոյի տարածքային ամբողջականությունը, այդ թվում Ռաբաթի՝ մարոկկոյական իրավասության ներքո Արևմտյան Սահարային ինքնավարության կարգավիճակ տրամադրելու նախաձեռնությունը[187]: Ուստի, կարելի է արձանագրել այն փաստը, որ Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլահի կառավարման ժամանակաշրջանը բնորոշվում է սաուդա-մարոկկոյական հարաբերությունների հետագա մերձեցմամբ, այդ թվում՝ Արևմտյան Սահարայի կարգավիճակի շուրջ հակամարտությանն առնչվող հարցերում:

Անդրադառնալով սաուդա-մարոկկոյական ներկայիս համագործակցությանը՝ անհրաժեշտ է նշել, որ երկու թագավորությունների միջև բարձր մակարդակով կանոնավոր քաղաքական երկխոսությունը երկկողմանի առևտրատնտեսական համագործակցության տեմպերի աճ գրանցեց, որի մասին են վկայում երկկողմ առևտրի վերաբերյալ վերջին վիճակագրական տվյալները: Եթե 2002 թ. երկու թագավորությունների միջև ապրանքաշրջանառությունը հազիվ հասնում էր 600 ամերիկյան դոլարի, ապա 2011 թ. այն հասավ 3.2 միլիարդ դոլարի: Հայտնի է նաև, որ 2011 թ. տվյալների համաձայն՝ Մարոկկոյի տնտեսության մեջ սաուդյան ուղղակի ներդրումների գումարը կազմել է 550 միլիոն ամերիկյան դոլար, իսկ ընդհանրապես Մարոկկոյում Սաուդյան Արաբիայի կողմից ֆինանսավորվող ենթակառուցվածքային նախագծերի արժեքը կազմել է շուրջ 420 միլիոն ամերիկյան դոլար[188]:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ Սաուդյան Արաբիան, օգտագործելով երկու սրբազան մզկիթների պա-

---

[187] راغب السرجاني .الصحراء الغربية، المغرب أم البوليساريو، مجلة العلوم الاجتماعية، المغرب،٢٠٠٩، صفحة ٩٥.

[188] **Cooper Daniel R.**, Morocco & the Conflict in Western Sahara: Background and Analyses, Nova Science Publishers, New York, 2013, p. 127.

հապանի կարգավիճակը, կշարունակի տարբեր տարածաշրջանային ուժերի միջև խուսանավելու քաղաքականությունը: Ինչպես նաև կպահպանի միջնորդ պետության հեղինակությունը տարածաշրջանային բազմաթիվ հակամարտությունների կարգավորման շրջանակներում: Սաուդյան վերնախավը քաջ գիտակցում է Արևմտյան Սահարայի շուրջ հակամարտության կարգավորման հարցում «ոսկե միջինի» սկզբունքին հետևելու անհրաժեշտությունը՝ շարժվելով տվյալ տարածքի կարգավիճակի մասին ՄԱԿ-ի հիմնական բանաձևերի հետքերով: Այլ կերպ ասած՝ Մարոկկոյի և Ալժիրի միջև Արևմտյան Սահարայի կարգավիճակի շուրջ հակամարտության վերաբերյալ Սաուդյան Արաբիայի դիրքորոշումը մարոկկոյամետ է, որը պայմանավորված է երկու թագավորությունների միջև կանոնավոր քաղաքական երկխոսությամբ և երկկողմանի առևտրատնտեսական համագործակցությամբ[189]: Կարևոր է նշել, որ սաուդա-մարոկկոյական կապերի ամրապնդմանն ու զարգացմանը նպաստում են նաև Սաուդյան Արաբիա – Ալժիր հարաբերություններում առկա խնդիրները[190]:

Եգիպտոսի դիրքորոշումը ձևավորվել է Անվար Սադաթի օրոք, երբ նա ռազմական օգնություն առաջարկեց Մարոկկոյին: Առաջարկն ընդունվեց, և Եգիպտոսը Մարոկկոյին տրամադրեց զինամթերք և 26 սովետական տանկ: Փոխարենը Հասան II-ը Սադաթի կողքին էր Քեմփ-դեվիդյան համաձայնագրի ստորագրման ժամանակ, այն դեպքում, երբ

---

189 **Zunes S.**, Algeria, the Maghreb Union, and the Western Sahara Stalemate. Arab Studies Quarterly (ASQ), Vol. 17, No. 3, Summer, 1995, pp. 27-28.

190 ليلى خليل بديع، اضواء وملامح من الساقية الحمراء ووادي الذهب، دار العلم للملايين، بيروت، ١٩٩٧، صفحة ٩٨.

արաբական աշխարհն այս քայլը որակեց դավաճանություն, և արդյունքում Եգիպտոսը հայտնվեց մեկուսացման մեջ[191]:

Ինչ վերաբերում է չեզոք երկրներին, ապա նրանք հիմնականում վարում էին զգուշավոր քաղաքականություն, քանզի իրավիճակն այնպիսի երկրների համար, ինչպիսիք են Սոմալին, Ջիբութին, Հյուսիսային Եմենը, այնքան էլ հստակ չէր: Այս երկրների դիրքորոշումը, կապված տարածաշրջանում իրադարձությունների հետագա զարգացման և լարվածության հետ, հաճախ փոփոխվում էր[192]: Այսպես, Սոմալին հիմնականում ԱՄՆ-ի ներխուժման և ԽՍՀՄ-ի հետ կապերի խզման հետևանքով սատարում էր Մարոկկոյին: Ջիբութին ևս կանգնած էր Մարոկկոյի կողքին[193]:

Թեև Արևմտյան Սահարայի խնդրի նկատմամբ այս կազմակերպության դիրքորոշումն այնքան էլ հստակ չէր, այնուամենայնիվ ԱՊԼ-ն հիմնականում աջակցում էր Մարոկկոյին[194]: Այսպիսի դիրքորոշումն ուներ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ պատճառների շարքից կարելի է առանձնացնել այն, որ ԱՊԼ-ն հանդես եկավ արաբական աշխարհի պառակտման դեմ: Իսկ ՊՕԼԻՍԱՐԻՕ-ն ԱՊԼ-ի կողմից դիտվում էր որպես անջատողական կազմակերպություն, այլ ոչ թե ազատագրական շարժում[195]:

---

[191] **Maddy Weitzman B.** "Conflict and Conflict Management in the Western Sahara: Is the Endgame Near?", Middle East Journal, Vol. 45, No. 4, Autumn, 1991, p. 595.

[192] **Joseph R.,** State, Conflict, and Democracy in Africa, Boulder, CO.: Lynne Rienner Publishers, 1999, p. 215.

[193] Նույն տեղում, էջ 218:

[194] يطرس بطرس غالي, նշվ. աշխ., էջ 102:

[195] **Елена Висенс.** Западная Сахара: Преданная независимость. Сборник исследований и документов по современной истории Сахарской Арабской Демократической Республики. М. REGNUM, 2007, стр. 31.

ԱՊԼ-ն խուսափում էր խոչընդոտել հակամարտության կարգավորումը: Թեև ՊՕԼԻՍԱՐԻՕ-ն միայն մեկ անգամ օգնության խնդրանքով նամակ էր ուղղել ԱՊԼ-ի գլխավոր քարտուղար Մահմուդ Ռիյադին, սակայն պատասխան չէր ստացել[196]:

Կարևոր է փաստել այն հանգամանքը, որ ԱՊԼ-ում որոշումներն ընդունվում էին կոնսենսուսով, և այն հարցը, որը չէր ստանում ԱՊԼ-ի անդամ-երկրների ձայները, հանվում էր օրակարգից: Իսկ ԱՊԼ-ի ներսում առկա էին քաղաքական տարբեր բևեռներ (օրինակ՝ Ալժիրը, Լիբիան, Եմենը, Մավրիտանիան և Սիրիան ճանաչում էին ՍԱԴՀ-ը)[197]: Այդ իսկ պատճառով ԱՊԼ-ն փորձեց խուսափել Արևմտյան Սահարայի համար պատասխանատվություն կրելուց՝ համարելով, որ հարցն արդեն ՄԱԿ-ի օրակարգում է:

Արդյունքում ԱՊԼ-ն Արևմտյան Սահարայի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված որևէ էական քայլ չկատարեց:

---

[196] **Shelley T.**, Endgame in the Western Sahara: What Future for Africa's Last Colony, Zed Books, London, 2004, pp. 156-158.

[197] مصطفى الشامي، النزاع على الصحراء الغربية، المركز العربي للدراسات الإستراتيجية، دمشق،١٩٩٨،صفحة ٩٥.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ
պ.գ.թ., դոցենտ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ԱՐԱԲԻԱՆ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հույն պատմիչ Հերոդոտոսը գրում է, որ V սատրապության մաս կազմող երկրներից մեկը Պաղեստինյան կոչված Սիրիան էր[198]: Պատմիչը Պաղեստինյան Սիրիայի մասին հայտնում է մի քանի տեղեկություններ ևս, սակայն, ընդհանուր առմամբ, անտիկ աղբյուրների հաղորդումները Պաղեստինի մասին քիչ են և կցկտուր: Պաղեստին անվանումը ծագում է եբրայերեն Plšth-ից, ինչը նշանակում է «փղշտացիների երկիր»[199]: Համաձայն Հերոդոտոսի՝ պաղեստինցիները Քսերքսեսի հելլենական արշավանքին փյունիկեցիների հետ տրամադրել էին երեք հարյուր տրիերաներ[200]: Պատմիչը նաև հայտնում է, որ Պաղեստինը գտնվել է Փյունիկիայից հարավ՝ հասնելով մինչև Եգիպտոս[201]:

Հերոդոտոսի հետևյալ տեղեկությունը բացահայտում է որոշ հետաքրքիր պատմաաշխարհագրական իրողություններ: Հալիկառնասցի հեղինակը գրում է, որ Սիրիայի առափնյա հատվածը արաբական երկրի մեջ է գտնվել[202], ինչը խոսում է այն մասին, որ Փյունիկիայից հարավ ընկած Պաղեստինյան Սիրիան կամ, ավելի ճիշտ, վերջինիս հարա-

---

198 **Հերոդոտոս**, Պատմությունինը գրքից, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի (այսուհետև՝ Հերոդոտոս), Եր., 1986, II, 104, 106; III, 91:

199 "A Commentary on Herodotus Books I-IV", ed. by O. Murray, A. Moreno, Oxford University Press. Inc., New York, 2007, p. 154.

200 **Հերոդոտոս**, VII, 89:

201 Անդ, III, 91, IV, 39:

202 Անդ, II, 12:

վային մասը համարվել է արաբական երկրի մաս: Շատ դեպքերում հույն հեղինակը Սիրիան համարում է Եգիպտոսին սահմանակից երկիր[203], ինչի տակ պետք է նկատի ունենանք Պաղեստինը:

Հերոդոտոսը, խոսելով Եգիպտոսի փարավոն Պսամմետիքոսի մասին, գրում է, որ վերջինս գրավել է Սիրիայի խոշոր քաղաք Ազոտոսը, իսկ Պսամմետիքոսի որդի Նեկոս Բ-ն (մ. թ. ա. 610-595 թթ.) կառուցել է Կարմիր ծով տանող ջրանցք՝ սկսելով այն Բուբաստիս քաղաքի մոտակայքից և շարունակելով Արաբիայի Պատումոս քաղաքի շրջանով մինչև Կարմիր ծով: Շարունակելով իր պատմությունը՝ պատմիչը Կարմիր ծովը՝ Պարսից ծոցը, նույնացնում է Հարավային ծովին, որի տակ պետք է հասկանալ Հնդկական օվկիանոսը: Մյուս կողմից էլ հեղինակը Արաբական ծոցը տեղադրում է Կարմիր ծովում[204], որը կարելի է բացատրել հետևյալ կերպ. կա՛մ Արաբական ծոցը նույնանում է Կարմիր ծով համարվող Պարսից ծոցին, այսինքն՝ լայն առումով Կարմիր ծովը Հնդկական օվկիանոսն է, կա՛մ էլ Արաբական ծոց[205] է համարվում Պարսից ծոցի հյուսիսային մասը, ինչն ավելի հավանական է: Նեկոսը նաև Մագդոլոսում հաղթել է սիրիացիներին՝ և գրավել նրանց հայտնի քաղաք Կադյուտիսը[206]: Նկատենք նաև, որ, ըստ պատմիչի, Պաղեստինյան Սիրիայի և Եգիպտոսի սահմանը եղել է Կասիոն լեռը, որը տեղադրում է Սերբոնիս լճի մոտ, որտեղից սկսվել է Եգիպտոսը[207]:

---

[203] Անդ, I, 105, II, 116:

[204] Անդ, II, 158, 159:

[205] Հերոդոտոսը Արաբական ծոցը կոչում է նաև Պլինթինետես անունով (անդ, II, 6): Պլինթինե անունով քաղաքը գտնվել է հետագայի Ալեքսանդրիա քաղաքից արևմուտք (տե՛ս "Dictionary of Greek and Roman Geography", ed. by W. Smith, v. I, Boston, 1854, p. 642):

[206] **Հերոդոտոս**, II, 159:

[207] Անդ, II, 6, 158, III, 5:

Կասիոն լեռը՝ Կաթիբ էլ-Քալսը, և Սերբոնիս լիճը՝ Սաբխետ էլ-Բարդավիլը[208], Ստրաբոնը տեղադրում է Պելուսիայից արևելք՝ համարելով Եգիպտոսի մասեր[209]: Որոշ դեպքերում Ստրաբոնը Սերբոնիս լիճը շփոթում է Մեռյալ ծովի հետ[210], ինչը կապված է այն իրողության հետ, որ արաբական Պետրա քաղաքի մոտ գտնվել են Կասիոն անունով բլուրները, որոնք համապատասխանում են ներկայիս էլ-Կասին[211]: Ընդհանուր առմամբ Ստրաբոնը Կասիոն լեռը համարում է կա՛մ Փյունիկիայի մաս, կա՛մ էլ Փյունիկիային անմիջականորեն սահմանակից[212], ինչը պայմանավորված է նրա կողմից վաղ շրջանից եկած աղբյուրների օգտագործմամբ: Աշխարհագետը միաժամանակ հայտնում է, որ Եգիպտոսին արևելքից սահմանակից են Փյունիկիան, Հուդան և նաբաթեական Արաբիան[213], սակայն Հուդան չէր կարող սահմանակցել Եգիպտոսին:

Եգիպտական քաղաք Բուբաստիսը ներկայիս Թել-Բուստակն է կամ Թելլ Բաստան արևելյան Դելտայում[214], իսկ Արաբիայում հիշատակված Պատումոս քաղաքը եգիպտական Pr-itm-ն է, ինչը նշանակում է «Աթոնի տուն» և նույնանում է Հին Կտակարանի Պիթոմին: Պատումոսը գտնվել է ներկայիս Թելլ էլ-Մասխուտահի մոտ[215]՝ Իսմայիլիա քաղաքից 16 կմ դեպի արևմուտք: Պատումոսի նման տեղադրությունը ցույց է տալիս, որ այն Հերոդոտոսից առաջ գտնվել է

---

[208] "A Commentary on Herodotus Books I-IV", pp. 246-247.

[209] **Страбон.** География в 17 книгах. Перевод, статья и комментарии Г. А. Стратановского. Ленинград, 1964, с. 58, 65, 702.

[210] Անդ, էջ 703, 704, 707:

[211] "Dictionary of Greek and Roman Geography", ed. by W. Smith, v. I, p. 558.

[212] **Страбон**, с. 65, 703.

[213] Անդ, էջ 740:

[214] "Dictionary of Greek and Roman Geography", ed. by W. Smith, v. I, p. 453; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 277.

[215] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 358.

Եգիպտոսի տարածքում, սակայն նրա ժամանակ քաղաքն արդեն Արաբիայի մեջ է: Սա նշանակում է, որ վարչական կամ ավելի ճիշտ քաղաքական նկատառումներից ելնելով՝ Պատումոսը պարսիկները տվել էին արաբներին՝ որպես դաշնակիցներ: Փաստորեն մ.թ.ա. V դարում արաբներն արդեն դուրս էին եկել Սինայի թերակղզուց՝ անցնելով Եգիպտոսի աշխարհագրական սահմանները:

Ինչ վերաբերում է սիրիական քաղաքներ Ազոտոսին, Մագդոլոսին և Կադյուտիսին, ապա առաջինն Աշդոդն է, երկրորդը՝ անկասկած Պելուսիայի մոտ գտնվող Միգդոլը, իսկ երրորդը՝ Գազան[216]: Այս նույնացումներն, իրոք, վկայում են այն մասին, որ Սիրիայի կամ Պաղեստինյան Սիրիայի հարավային հատվածը մտել է արաբների երկրի մեջ, այսինքն՝ V սատրապության հարավային սահմանագիծն անցնում էր Սինայի թերակղզին՝ ձգվելով Պելուսիայից հարավ: Հերոդոտոսին հայտնի է նաև Սիրիայի Ասկալոն քաղաքը[217], որը գտնվել է Գազայից 16 կմ դեպի հյուսիս և նույնանում է եգիպտական աղբյուրների Աշկանուին՝ Հին Կտակարանի Աշկլոնին:

Հաջորդ տեղեկության մեջ Հերոդոտոսը Կադյուտիսը՝ Գազան, համարում է պաղեստինյան սիրիացիների սահմանը հարավային ուղղությամբ և ավելացնում, որ Կադյուտիս քաղաքից մինչև Յենյուսոս քաղաքն ընկած նավահանգիստները պատկանել են արաբներին: Պատմիչը շարունակում է՝ գրելով, որ «Յենյուսոսից սիրիական հողերը դարձյալ շարունակվում են մինչև Սերբոնիս լիճը, որի մոտով դեպի ծով ձգվում է Կասիոն լեռը: Իսկ Սերբոնիս լճից արդեն սկսվում է Եգիպտոսը: Արդ, Յենյուսոս քաղաքի, Կասիոն լեռան և Սերբոնիս լճի միջև ընկած ամբողջ երկիրը, որը երեք օրվա

---

[216] Անդ, էջ 357, 359:

[217] Հերոդոտոս, I, 105:

ճանապարհի երկարություն ունի, բոլորովին ջրազուրկ է»[218]: Վերջին տեղեկության մեջ պատմիչը հայտնում է, որ Փյունիկիայից մինչև Կադյուտիս քաղաքը տարածվում է պաղեստինյան կոչված սիրիացիների երկիրը, սակայն հստակ չէ, թե որտեղից է սկսվում Փյունիկիայի հարավային սահմանագիծը[219], քանի որ, դատելով տարբեր սկզբնաղբյուրներից, Պաղեստինյան Սիրիան աշխարհագրական առումով ևս համարվել է Փյունիկիա: Վերոբերյալ տեղեկության մեջ կարևոր է այն իրողությունը, որ Կադյուտիսից մինչև Յենյուսոս ընկած հողերը համարվել են Պաղեստինյան Սիրիայի մասը: Այս վերջին մատնանշումը կարևոր է այն տեսանկյունից, որ Հերոդոտոսը, ըստ էության, անձամբ էր անցել այդ տարածքով, և նրա կողմից Պաղեստինյան Սիրիայի սահմանների նշումն առավել քան իրական է: Մյուս կողմից էլ պետք է նկատի ունենալ, որ ընդհանուր առմամբ Պաղեստինյան Սիրիա անունով նշված Արևելյան Միջերկրական ծովի առափնյա շրջանն ունեցել է խառն էթնիկական կազմ՝ փյունիկեցիներ, արաբներ, փղշտացիներ, եգիպտացիներ և հնարավոր է այլ ցեղեր, ինչն էլ աշխարհագրական տեսանկյունից հին աղբյուրներում արտացոլվել է ոչ միանշանակ: Յենյուսոսի նույնացումը Խան-Յունիսին կասկածելի է, և այն պետք է նույնացնել էլ-Արիշին՝ Ստրաբոնի Ռինոկոլուրային[220], որը տեղադրվում է Փյունիկիայում[221]: Ստրաբոնը նշում է Պետրայից Ռինոկոլուրա բեռների տեղափոխման մասին, ինչից կարելի է եզրակացնել, որ Յենյուսոս-Ռինոկոլուրա քաղաքը գտնվել է արաբների առևտրական վերահսկողության տակ: Հարց է

---

[218] Անդ, III, 5:

[219] Փյունիկիայի մասին տե՛ս Խորիկյան Հ., Փյունիկիայի վարչական կացությունը Աքեմենյան Պարսկաստանի V սատրապության կազմում, «Արևելագիտության հարցեր», հ. IX, 2015, էջ 475-490:

[220] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 403.

[221] **Страбон**, с. 688, 703, 723.

ծագում, եթե Հերոդոտոսը Յենյուսոսից հետո ընկած հողերը համարում է սիրիական տարածքներ, ուրեմն կարելի է՞ ենթադրել, որ Յենյուսոսի և Սերբոնիսի միջև ընկած շրջանը դուրս է գտնվել արաբների վերահսկողությունից: Կարծում ենք, որ նշված տարածքը նույնպես գտնվել է արաբների վերահսկողության տակ, քանի որ, համաձայն Հերոդոտոսի, Հելիուպոլիսից՝ Կահիրեից 12 կմ հյուսիս-արևելք՝ Թելլ Հիսնի մոտ[222], արևելք և հարավ-արևելք գտնվել են Արաբական լեռները[223], այսինքն՝ եթե սրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ Պատումոսը պատկանել է արաբներին, ապա կարող ենք եզրակացնել, որ Սինայի թերակղզու հյուսիսային հատվածը ևս գտնվում էր արաբների՝ Աքեմենյանների դաշնակիցների ազդեցության գոտում[224]: Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ պարսիկները արաբներ էին անվանում Պաղեստինից արևելք և հարավ ապրող քոչվոր ցեղերին[225]: «Արաբ» բառը «քոչվոր» նշանակությամբ կապում են եբրայերեն «arabah»-«անապատ» բառի հետ, ինչը, սակայն, վերջնական չէ[226]: Հետևաբար, արաբների էթնիկական նույնացումը դժվարություններ է ներկայացնում, եթե նկատի ունենանք նրանց հիշատակությունը Մերձավոր Արևելքի ընդարձակ տարածքներում: Կյուրոս

---

222 "A Commentary on Herodotus Books I-IV", p. 243.

223 **Հերոդոտոս**, II, 8, 124:

224 Հմմտ. David F. Graf, Arabia During Achaemenid Times, Achaemenid History, IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 138; Levin Y., The Southern Frontier of Yehud and the Creation of Idumea, A time of change: Judah and its neighbours in the Persian and Early Hellenistic periods, London, New York, 2007, p. 248.

225 **Дандамаев М. А., Луконин В. Г.** Культура и экономика древнего Ирана. М., 1980, с. 191.

226 **David F.** Graf, Arabia during Achaemenid Times, p. 131. Մասնագիտական գրականության մեջ Արաբիան փորձել են տեղադրել նաև միայն Եփրատի միջին հոսանքի շրջանում, ինչը բազմաթիվ հարցադրումների տեղիք է տվել (անդ, էջ 138):

Մեծի՝ մ.թ.ա. 539 թվականի արձանագրության մեջ նշվում է, որ «Արևմուտքի երկրների» բոլոր թագավորները, որոնք «ապրում են վրաններում» (նկատի ունի արաբ ցեղապետներին), հնազանդվում են իրեն[227]: Երբ Քսենոփոնը հայտնում է, որ Կյուրոս Մեծը նվաճել է արաբներին, որոնց սատրապ է նշանակում Մեգաբյուզոսին[228], հավանաբար նկատի ունի Եփրատի միջին հոսանքում ապրող արաբներին: Նշենք նաև, որ Հելիուպոլիսում հայտնաբերված Դարեհ Ա-ի հիերոգլիֆ արձանագրության մեջ, որտեղ թվարկվում են հպատակ ժողովուրդները, արաբները ներկայանում են *hgr*-հագարացիներ անվան տակ, որոնք Պտղոմեոսյան դարաշրջանում տեղադրվում էին Արաբական թերակղզու հյուսիս-արևմուտքում, սակայն նրանց տեղադրությունը Պարսից ծոցի շրջանում առավել հավանական է[229]:

Սկիլաքս Կարիանդացին Կարմել լեռից հարավ ընկած քաղաքները համարում է սիդոնցիների կամ տյուրոսցիների գաղութներ: Օրինակ, Ասկալոնը համարում է տյուրոսցիների քաղաքը, որտեղ ավարտվում է Կելեսիրիայի սահմանը[230]: Անտիկ հեղինակը գրում է, որ Սիրիայից հետո քոչվոր արաբների երկիրն է մինչև եգիպտական Պելուսիոն քաղաքը[231]: Սկիլաքս Կարիանդացու տեղեկություններից պարզվում է, որ Սիրիայի տակ հեղինակը հասկանում է մինչև Ասկալոն ընկած հողերը, որից հետո արդեն արաբների երկիրն է մինչև

---

[227] **Дандамаев М. А.** Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э. Социальные институты и идеология. Санкт-Петербург, 2009, с. 343.

[228] **Քսենոփոն**, Կյուրոպեդիա, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի, Եր., 2000, էջ 5, 287, 355:

[229] **David F.** Graf, Arabia during Achaemenid Times, pp. 143,144.

[230] **Müller C.**, Geographi Graeci Minores, v. I, Parisiis, 1855, fr. 104, p. 79; Скилак Кариандский. Периплобитаемого моря, "Вестник древней истории". 1988, № 2, с. 262.

[231] **Скилак Кариандский.** Перипл обитаемого моря. С. 263.

Պելուսիոն: Փաստորեն պատմիչը Գազան չի հիշատակում, սակայն այն մտել է արաբների երկրի մեջ:

Ալեքսանդր Մակեդոնացու պատմիչներից Արիանոսը գրում է, որ Գազան Պաղեստինյան Սիրիայի քաղաքն է, որը Փյունիկիայից Եգիպտոս տանող ճանապարհի վերջին քաղաքն է անապատի սկզբին: Քաղաքը, ըստ էության, գտնվել է արաբների ձեռքում և համառ դիմադրություն է ցույց տվել Ալեքսանդրին[232]: Արիանոսի տեղեկությունից միաժամանակ երևում է, որ Պաղեստինյան Սիրիան, հատկապես առափնյա շրջանները[233], աշխարհագրական առումով նույնացվել է Փյունիկիայի հետ, ընդ որում՝ Գազայից հետո այլ քաղաքներ պատմիչը չի հիշատակում[234]: Գազայից մինչև եգիպտական Պելուզիում քաղաքն ընկած տարածքը պետք է համարել Պաղեստինյան Սիրիայի սահմաններից դուրս, որը, դատելով այլ աղբյուրներից, մտել է արաբների երկրի մեջ[235]: Վերջիններիս երկիրը, ըստ Արիանոսի, տարածվում էր Հերոոպոլիսի մոտ[236], և այդ տարածքում Ալեքսանդր Մակեդոնացին նշանակում է առանձին կառավարիչ՝ Կլեոմենեսին[237]: Այս վերջին տեղեկությունը համապատասխանում է Հերոդոտոսի վերը բերված տեղեկություններին, և Հերոոպոլիսը կարելի է նույնացնել Պատումոսի հետ:

---

232 Arrian, Anabasis, vol. I, with an English translation by E. Iliff Robson, Cambridge-Massachusetts, 1967, Loeb Classical Library, II, 25, 4; II, 26, 1, pp. 214, 216. Գազայի մասին տե՛ս նաև Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, «Ալեքսանդր Մակեդոնացի» (այսուհետև՝ Ռուփոս), Եր., 1987, էջ 328, 330:

233 **Ռուփոս**, էջ 328:

234 Տե՛ս նաև **Ռուփոս**, էջ 333:

235 Պելուսիան ընկած էր Եգիպտոսի և Արաբիայի սահմանին (տե՛ս Pliny, Natural History, vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, V, XII, p. 268):

236 Հմմտ. Ռուփոս, էջ 335:

237 **Arrian**, III, 5, 4, p. 236.

Ստրաբոնը Սիրիայի մեջ է համարում Փյունիկիան և Հուդան՝ երկրի, այսինքն՝ Սիրիայի ներսում՝ հուդայացիների, իդումեացիների, գազայացիների և ազոտցիների հետ[238]: Ստրաբոնի վկայությամբ Հիոպպեն հուդայացիների համար նավահանգիստ է ծառայել[239], սակայն այս տեղեկությունը չի վերաբերում Աքեմենյան դարաշրջանին, և կարելի է ենթադրել, որ հուդայացիները միայն առևտուր կարող էին անել Հիոպպեում: Ամասիացի աշխարհագետը հայտնում է, որ նախկինում հուդայացիները տիրել են նաև Կարմել լեռան շրջանին[240], ինչը նույնպես վերաբերում է ուշ ժամանակներին: Ընդհանրապես Ստրաբոնի մոտ Հուդայի նկարագրությունը վերաբերում է իր ժամանակներին: Աշխարհագետը

Էլևթերուս գետից մինչև Պելուսիա համարում է Փյունիկիա, որից արևելք՝ մինչև արաբների հողերը, Գազայի և Անտիլիբանանյան լեռների միջև տարածվել է Հուդան[241]:

Դիոդորոս Սիկիլիացին գրում է, որ մ.թ.ա. 312 թվականին Պտղոմեոսը գրավում է Ական Փյունիկյան Սիրիայում, Հիոպպեն, Գազան և Սամարիան Սիրիայում[242]: Վերջին երեք քաղաքների հիշատակությունը խոսում է այն մասին, որ դրանք գտնվել են Պաղեստինում, երբ Հիոպպեն այլ աղբյուրներում վաղ ժամանակներում Սիդոնի գաղութն էր: Դիոդորոս Սիկիլիացին նաև հայտնում է, որ Ասկալոնը և Գազան Սիրիայի քաղաքներն են[243]՝ նկատի ունենալով Պաղեստինյան Սիրիան:

---

[238] **Страбон**, с. 694.

[239] Անդ, էջ 702:

[240] Անդ, էջ 703:

[241] Անդ, էջ 700:

[242] Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. IV, Lipsiae, 1867, XIX, 93, p. 123.

[243] **Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադարան, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ս. Կրկյաշարյանի, Եր., 1985, էջ 18, 149: Պլուտարքոսը Գազան համարում է Սիրիայի ամենախոշոր քաղաքը

Պաղեստինյան Սիրիայի ներքին շրջանները պարսկական տիրապետության շրջանում հայտնի էին տարբեր անուններով, որոնց վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում հին հրեական աղբյուրները: Օրինակ, ըստ Եզրասի, Անդրգետքի առաջին սատրապը Թատնայն էր՝ Թատտանուն[244], որը վարչական առումով ենթարկվում էր Բաբելոնի սատրապին[245]: Եզրասի տեղեկություններից երևում է, որ Անդրգետքը տուրք էր վճարում Գետի՝ Եփրատի այն կողմի իշխանին՝ սատրապին, և հարկատվությունը կազմակերպում էին գանձապետները[246]: Վարչական առումով Անդրգետքը բաժանվում էր ավելի մանր վարչական միավորների, որոնք տարբերվում էին իրենց քաղաքական ինքնավարության կարգավիճակով: Այս առումով պարսկական Պաղեստինը բաժանվում էր երեք վարչաքաղաքական մասերի՝ էթնիկական շրջաններ (Հուդա, Սամարիա և այլն), փյունիկյան քաղաքներ, արաբական ցեղամիություններ[247]: Անդրգետք սատրապության մեջ որպես էթնիկական ենթաշրջաններ կարող էին մտնել նաև Ամմոնը, Դորան, Մեգիդդոն, Հավրանը[248]:

(տե՛ս Плутарх, Александр, XXV,"Избранные жизнеописания", т. II, Москва, 1987, с. 386):

[244] **Եզրաս**, Ե, 3, Զ, 6, 13, Olmstead A. T., Tattenai, Governor of "Across the River", "Journal of Near Eastern Studies", vol. 3, №1, 1944, p. 46; Dandamayev M. A., Neo-Babylonian and Achaemenid State Administration in Mesopotamia, Judah and the Judeans in the Persian Period, ed. by O. Lipschits, M. Oeming, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2006, p. 377.

[245] **Olmstead A. T.**, Tattenai, governor of "Across the River", "Journal of Near Eastern Studies", 1944, № 3, p. 46.

[246] **Եզրաս**, Զ, 8, Է, 21:

[247] **Stern E.**, Between Persia and Greece: Trade, Administration and Warfare in the Persian and Hellenistic Periods, "The Archaeology of Society in the Holy Land", ed. by T. E. Levy, London, 1995, p. 432.

[248] «The Cambridge History of Judaism», ed. by W. D. Davies, L. Finkelstein, v. I, Cambridge University Press, 1984, pp. 88-89; Stern E., New Evidence on the

Ամմոնը (աքքադ. Bīt Ammān), Մովաբը (աքքադ. Mā'ab)[249] և ընդհանրապես Անդրհորդանանը Եզեկիելի մոտ մտնում են այսպես կոչված «Արևելքի ժողովուրդ» բառակապակցության մեջ[250]: Այսպես, Նեեմիան հիշատակում է Սանբալատին, ամմոնացի Տուբիային և արաբ Գեսամին[251]: Սանբալատը Սամարիայի կառավարիչն էր, Գեսամը կամ Գեշամը տիրում էր Իդումեային, հետևաբար՝ Նեեմիայի մոտ թվարկումը սկսվում է արևմուտք-արևելք-հարավ հերթականությամբ՝ Սամարիա-Ամմոն-Իդումեա-Էվդեմոն: Ամմոնի տակ կարելի է հասկանալ, թերևս, ամբողջ Անդրհորդանանը, որի հյուպարքոսն էլ հենց Տուբիան էր՝ նշանավոր տոհմից[252]:

Administrative Division of Palestine in the Persian Period, Achaemenid History, IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 222.

[249] **Lipschits O.**, Achaemenid Imperial Policy, Settlement Processes in Palestine, and the Status of Jerusalem in the Middle of the Fifth Century B. C. E., Judah and the Judeans in the Persian Period, ed. by O. Lipschits, M. Oeming, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2006, p. 20.

[250] **Եզեկիել**, Ի: Մովաբը Եզրասի մոտ առանձին նահանգ է (տե՛ս Եզրաս, Բ, 6, Ը, 4; Ժ, 30):

[251] **Նէեմիա**, Բ, 10, 19, Զ, 1, Lisbeth S. Fried, The Artaxerxes Correspondence of Ezra 4, Nehemiah's Wall, and Persian Provincial Administration, "Go Out and Study the Land" (Judges 18:2), Archaeological, Historical and Textual Studies in Honor of Hanan Eshel, ed. by A. M. Maeir, J. Magness, L. H. Schiffman, Leiden, Boston, Brill, 2012, p. 47. Այս կառավարիչները բավականին մեծ արտոնություններ ունեին և կարող էին, օրինակ, իրենց տրամադրության տակ գտնվող զորքի օգնությամբ հավաքել հարկերը՝ չունենալով առանձին հարկահավաք՝ «hammarakara» (տե՛ս Lisbeth S. Fried, The Role of the Governor in Persian Imperial Administration, In the shadow of Bezalel: Aramaic, Biblical, and Ancient Near Eastern Studies in Honor of Bezalel Porten, ed. by Alejandro F. Botta, Leiden, Boston, Brill, 2013, pp. 328-329): Սանբալատի, Տուբիայի, նաև Գեշամի մասին մանրամասն տե՛ս Mittmann S., Tobia, Sanballat und die Persische Provinz Juda, "Journal of Northwest Semitic Languages", v. 26/2, 2000, S. 1-50.

[252] **Rainey A. F.**, The Satrapy "Beyond the River", "Australian Journal of Biblical Archaeology", 1969, № 1/2, p. 65. Fried L. S., The Political Struggle of Fifth Century Judah, Transeuphratène 24, 2002, pp. 15-16.

Անդրգետքի մեջ մտնող շրջաններն ունեին ավելի պակաս ինքնավարություն և կառավարվում էին տեղական ազնվականության և նույնիսկ դինաստների կողմից: Պարսկական տիրապետության ժամանակ մոավիտների և էդոմիտների հողերը գրավել էին քոչվոր արաբները, որոնցից նաբաթեացի կոչվածները մ. թ. ա. VI դարի առաջին կեսին նվաճում են էդոմական քաղաք Պետրան և հիմնում իրենց թագավորությունը[253]: Սակայն խոսքը վերաբերում է քեդարիտ արաբներին[254], որոնց Աքեմենյան պետության կործանումից հետո փոխարինում են նաբաթեացիները[255]: Հարկ է նշել, որ որոշ ուսումնասիրողներ Բեհիսթունի արձանագրությունում հիշատակվող Արաբիան լայն առումով նույնացրել են Սիրիայի հետ[256], սակայն Սիրիա անունը հին պարսկական Աթուրիա անվան կրճատ ձևն է, որը աքքադերենում համապատասխանում է Էբիր-նարիին: Սիրիայի հետ Արաբիայի նույնացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հին աղբյուրներում Արաբիան ընդգրկում է Եգիպտոսի և Եփրատի միջև ընկած տարածքներում բնակվող քոչվորների բնակության շրջանները[257], և շատ դեպքերում արամեացիները ևս նույնացվել են արաբներին, սակայն պարսիկները Արաբիայի անվան տակ սկզբնապես հասկացել են Արաբա-

---

[253] **Dussaud R.**, La pènètration des Arabes en Syrie avant l'Islam, Paris, 1955, p. 23.

[254] Քեդարիտ արաբները նույնացվել են Հերոդոտոսի ինքնավար արաբներին, որոնց ազդեցությունը տարածվում էր Եգիպտոսի արևելյան, Պաղեստինի հարավային և Արաբական թերակղզու հյուսիսարևմտյան տարածքների վրա (տե՛ս **David F.** Graf, Arabia During Achaemenid Times, p. 139):

[255] Levin Y., The Southern Frontier of Yehud and the Creation of Idumea, p. 252.

[256] **Herzfeld E.**, The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East. Wiesbaden, 1968, pp. 293, 306; Дандамаев М. А., Луконин В. Г. Культураиэкономикадревнего Ирана, с. 191.

[257] **Дандамаев М. А.** Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э. С. 343.

կան թերակղզու հյուսիսային որոշ մասեր, և հետագայում հույն հեղինակներն անվանումը տարածել են ամբողջ թերակղզու վրա[258]:

Արաբներից ճնշված էդոմիտները (եդովմացիներ) գրավում են նախկին հուդայական հողերը, որոնք նրանց անունով կոչվում են Էդոմ, որից էլ՝ Իդումեա: Իդումեան ուշ պարսկական շրջանում էթնիկական առումով խիստ խայտաբղետ էր՝ արաբներ, իդումեացիներ, արևմտյան սեմիտներ, հուդայացիներ, փյունիկեցիներ և այլն[259]:

Ինչ վերաբերում է Սամարիային, որը որպես վարչական միավոր ստեղծվել էր դեռևս Սարգոն Բ-ի կողմից[260], ապա այն կառավարում էին տեղական ազնվական տոհմի ներկայացուցիչները, որոնք ժառանգաբար կրում էին տոհմի հիմնադիր Սանբալլատի (Սանբալլատ I, II, III) անունը կամ էլ նույն տոհմից էին (Delaiah, Shelemiah, Yeshua/Yeshaiah, Hananiah)[261]: Սամարիան (Շոմրոն) և Ամմոնը՝ որպես վարչական ենթաշրջաններ, հիշատակվում են «Աստվածաշնչում» և այլ վկայություններում[262]: Սամարիան աչքի էր ընկնում պաշտպանական ամուր համակարգով[263]:

---

[258] **Dougherty R. P.**, The Sealand of Ancient Arabia, "Yale Oriental Series. Researches", 1932, T. 19, p. 121.

[259] **Kloner A., Stern I.**, Idumea in the Late Persian Period (Fourth Century B. C. E.), Judah and the Judeans in the Fourth Century B.C.E., ed. by O. Lipschits, G. Knoppers, R. Albertz, Indiana, Eisenbrauns, 2007. p. 142 /pp. 139-144/.

[260] **Rainey A. F.**, The Satrapy "Beyond the River", p. 64.

[261] «The Cambridge Ancient History», vol. IV, Cambridge University Press, 1988, p. 151; **Дандамаев М.** Ахеменидская империя: социально-административное устройство и культурные достижения, Санкт-Петербург, 2013, с. 62; Eshel H., The Governors of Samaria in the Fifth and Fourth Centuries B.C.E., Judah and the Judeans in the Fourth Century B.C.E., ed. by O. Lipschits, G. Knoppers, R. Albertz, Indiana, Eisenbrauns, 2007, pp. 225-227 /pp. 223-234/.

[262] **Նէեմիա**, Բ, 10, 19, Դ, 1, Josephus, Jewish Antiquities, with an English translation by R. Marcus, London, Cambridge, Massachusetts, 1958, Loeb

Ռուփոսը հայտնում է, որ սամարացիները սպանում են Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Սիրիայի սատրապ նշանակված Անդրոմաքոսին, որի մահվան համար Ալեքսանդրը դաժանաբար վրեժխնդիր է լինում[264]: Հավանաբար Ալեքսանդր Մակեդոնացու օրոք Սամարիան Սիրիայի կազմում շարունակում էր մնալ որպես առանձին վարչական ենթաշրջան:

Դատելով Հովսեփոս Փլավիոսի տեղեկություններից՝ վարչական առումով Հուդան ենթարկվում էր Սամարիայի հյուպարքոսին և հարկերը մուծելու էր վերջինիս[265]: Մ.թ.ա. V դարի երկրորդ կեսին Հուդան Երուսաղեմ մայրաքաղաքով՝ pehā-ի՝ կառավարչի գլխավորությամբ դառնում է առանձին ենթաշրջան (bîrâ-նահանգ)՝ կազմված մի քանի գավառներից (pelekh) և գավառակներից (ḫasipelekh)[266]: Հնարավոր է, որ այս փոփոխությունը տեղի է ունեցել հենց Նեեմիայի ժամանակ[267], որը մեծ ջանքեր է գործադրում Երուսաղեմն ամ-

---

Classical Library, XI, 7, 2, p. 460; Stern E., New Evidence on the Administrative Division of Palestine in the Persian Period, p. 223.

[263] **Fried L. S.,** The Political Struggle of Fifth Century Judah, p. 10.

[264] **Ռուփոս,** էջ 338:

[265] **Եզրաս**, Դ, 8-23: Josephus, Jewish Antiquities, XI, 1, 3, p. 322; **Olmstead A. T.,** History of the Persian Empire, Chicago, 1960, p. 343; **Дандамаев М. А., Луконин В. Г.** Культура и экономика древнего Ирана. С. 115-116.

[266] **Նեեմիա**, Գ, 9, 12, 14-17: «The Cambridge History of Judaism», p. 74; Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, in: Coinage and Administration in the Athenian and Persian Empires: The Ninth Oxford Symposium on Coinage and Monetary History, Oxford, 1987, pp. 123, 147; Lipschits O., Achaemenid Imperial Policy, Settlement Processes in Palestine, and the Status of Jerusalem in the Middle of the Fifth Century B. C. E., p. 34; Machinist P.,The First Coins of Judah and Samaria: Numismatics and History in the Achaemenid and Early Hellenistic Periods, "Achaemenid History", VIII, Continuity and Change, Leiden, 1994, p. 373.

[267] «The Cambridge Ancient History», vol. VI, Cambridge University Press, 1994, p. 278; Carter E. Ch., The Emergence of Yehud in the Persian Period: A Social and Demographic Study, Sheffield Academic Press, 1999, p. 50.

բացնելու ուղղությամբ[268]: Աքեմենյան պետության վերջին շրջանում արդեն Երուսաղեմի քահանայապետն էր իրականացնում ենթաշրջանի կառավարումը:

Հուդայի աշխարհագրական սահմանների վերաբերյալ «Աստվածաշնչի» տեղեկություններին պետք է զգուշությամբ մոտենալ, քանի որ դրանք շատ դեպքերում ներկայացնում են ոչ թե Հուդայի իրական, այլ ցանկալի սահմանները[269]: Օրինակ, Նեեմիան (մ. թ. ա. V դարի երկրորդ կես)՝ որպես հրեական բնակավայր, հիշատակում է Բերսաբեեան[270], ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ այն Երուսաղեմի անկումից հետո գրավել էին էդոմիտները: Հուդայի սահմանների ճշգրտման համար առավել կարևոր են yhwd (Յեհուդ) դրոշմով կնիքները և դրամները, համաձայն որոնց՝ Հուդայի սահմանները հարավում ձգվում էին Բեթ-Ծուրայից, հյուսիսում՝ մինչև Թելլ էն-Նասբե: Միաժամանակ Պաղեստինում՝ արևմուտքում Յարմուտից և Ազեկայից դեպի արևելք մինչև Խիրբետ էլ-Քատ և Խիրբետ էլ-Զեվիյե, կառուցվում է փոքր ամրությունների գիծ[271]: Հնարավոր է, որ ամրություն-

---

եզրասը և Նեեմիան Երուսաղեմ են գալիս մ.թ.ա. 458 և 445 թվականներին (տե՛ս Yigal B., Judeans in Sippar and Susa during the First Century of the Babylonian Exile: Assimilation and Perseverance under Neo-Babylonian and Achaemenid Rule, "Journal of Ancient Near Eastern History", 2014, 1(2), p. 125):

[268] **Fried L. S.**, The Political Struggle of Fifth Century Judah, p. 12.

[269] «The Cambridge History of Judaism», ed. by W. D. Davies, L. Finkelstein, v. I, pp. 84-85; Carter Ch., The Province of Yehud in the Post-Exilic Period: Soundings in Site Distribution and Demography, "Second Temple Sdudies", 2: Temple Community in the Persian Period, ed. by Tamara C. Eskenazi and Kent H. Richards, Sheffield Academic Press, 1994, pp. 114-120.

[270] **Նեեմիա**, ԺԱ, 27:

[271] **Hoglund K.**, The Achaemenid Context, "Second Temple Sdudies", 1: Persian Period, ed. by Ph. R. Davies, Sheffield Academic Press, 1991, pp. 63-64; «The Cambridge History of Judaism», ed. by W. D. Davies, L. Finkelstein, v. I, pp. 86.

ների այս գիծն ուղղված էր էդոմիտների դեմ: Բեթ-Ծուրայից հարավ սկսվում էր Իդումեան՝ Էվդեմոն կոչված Արաբիայի հարևանությամբ: Դիոդորոս Սիկիլիացու պատմությունից երևում է, որ մ. թ. ա. 310-ական թվականներին Իդումեան արևելքում հասնում էր մինչև Մեռյալ ծով և վարչական առումով համարվում էր սատրապություն՝ սահմանակցելով Արաբիային և Պաղեստինին. վերջինիս տակ Պլինիոս Ավագը նկատի ունի առափնյա շրջանները[272]: Այս տեղեկությունը հետաքրքիր է այն առումով, որ Իդումեայի՝ որպես առանձին վարչական միավորի կարևորությունն առավել խորը ընկալվել է մ. թ. ա. 404-400 թվականներին՝ եգիպտական ապստամբությունից հետո, երբ Եգիպտոսը մինչև մ. թ. ա. 343/342 թվականները մնաց անկախ: Եգիպտոսի անկախացումը նշանակում էր, որ Աքեմենյան Պարսկաստանի V սատրապության հարավային սահմանը դառնում էր միաժամանակ տերության հարավային սահմանագիծը, որի ռազմավարական նշանակության ամրապնդումը պարսիկների համար դառնում է խիստ հրատապ: Հետագայում Եգիպտոսը վերանվաճելու և տերության հարավային սահմանները վերջինիս հարձակումներից պաշտպանելու համար հարավային Պաղեստինում՝ Իդումեայում, կառուցվում է պաշտպանական ամրությունների հզոր համակարգ[273]: Նշենք նաև, որ Կիպրոսի թագավոր Եվագորասի ապստամբության ժամանակ արաբների թագավորը նույնպես օգնական ուժեր է տրամադրում Եվագորասին[274]: Ուսումնասիրողներից Մ. Ավի-Յո-

---

[272] Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. IV, XIX, 94-95, 98, pp. 124-125, 129; Pliny, Natural History, vol. II, V, XIV, p. 270.

[273] Մանրամասն տե՛ս **Fantalkin A., Tal O.**, Judah and Its neighbors in the Fourth century BCE: A Time of Major Transformations, "From Judah to Judaea", Socio-Economic Structures and Processes in the Persian Period, ed. by J. Unsok Ro, Sheffield Phoenix Press, 2012, pp. 133-196.

[274] Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. IV, Lipsiae, 1821, XV, 2, p. 415.

նահը, որի կարծիքը կիսում են շատերը, գտնում է, որ Հուդայից հարավ ընկած Իդումեան նվաճում են էդոմիտյան արաբները հավանաբար մ.թ.ա. 586 թվականին՝ Երուսաղեմի անկումից հետո: Իդումեան ընդգրկում էր ամբողջ հարավային Հուդան՝ Բեթ-Ծուրայից մինչև Բերսաբեեա-Բերշեբա՝ բացի առափնյա հատվածից: Իդումեայի մայրաքաղաքը կարող էր լինել Լախիշը, Մարեշան կամ էլ նույնիսկ Հեբրոնը[275]: Վերջին տասնամյակներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ էդոմիտների լեզուն արաբական բառաֆոնդին չի պատկանում և կապվում է հյուսիսարևմտյան սեմական բարբառի հետ՝ մտնելով քանանական լեզվախմբի մեջ[276]:

Մ.թ.ա. V դարի կեսերին՝ Նեեմիայի կողմից Յեհուդի կառավարման տարիներին, Իդումեան եղել է նրա իրավասության ոլորտից դուրս, և հավանաբար գտնվել է արաբալեզու քեդարիտների տիրապետության տակ[277]: Նեեմիայի թշնամին էր Գեշեմ Արաբացին, որի անունը որդու անվան հետ պահպանվել է դրամների վրա՝ «Քեդարի թագավոր» գրությամբ[278]: Իդումեան՝ Մակեդաի կենտրոնով՝ որպես

---

[275] **Avi-Yonah M.**, The Holy Land from the Persian to the Arab Conquests (536 B.C. to A.D. 640): A Historical Geography, Rev. ed. Grand Rapids, Baker Books, 1977, pp. 25-26.

[276] **Vanderhooft D. S.**, The Edomite Dialect and Script: A Review of the Evidence, in D. Edelman (ed.), You Shall Not Abhor an Edomite for He is Your Brother: Edom and Seir in History and Tradition, Atlanta: Scholars Press, 1995, pp. 137–157.

[277] **Levin Y.**, The Southern Frontier of Yehud and the Creation of Idumea, p. 245; Stern E., New Evidence on the Administrative Division of Palestine in the Persian Period, p. 223; David F. Graf, Arabia During Achaemenid Times, p. 139.

[278] **Dumbrell W. J.**, The Tell el-Maskhuta Bowls and the "Kingdom" of Qedar in the Persian Period, Bulletin of the American Schools of Oriental Research,1971, № 203, pp. 33–44; «The Cambridge Ancient History», vol. IV,

պարսկական նահանգ, այսինքն՝ ենթաշրջան, արդեն հստակ հիշատակվում է մ. թ. ա. IV դարի առաջին կեսից թվագրվող խեցեղենի բեկորի վրա[279]: Հին աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հուդայում կառավարող դինաստիա չի եղել, սակայն պահպանված մի քանի կառավարիչների անունները եղել են հրեական (Nehemiah, Yehizkiyah)[280]: Ինչպես Աքեմենյան տերության շատ նահանգներում, Հուդայի կառավարիչները նույնպես հատում էին արծաթե և պղնձե դրամներ[281]: Հովսեփոս Փլավիոսը հայտնում է, որ Նեեմիայից հետո Հուդայի կառավարիչ է եղել Բագոսեսը (Bagôhî)[282], որն իրանական անուն է, սակայն իրանական անուններ կրել են նաև հրեաները[283]:

---

p. 148; Fried L. S., The Political Struggle of Fifth Century Judah, p. 16. Սաուդյան Արաբիայի հարավ-արևմուտքում՝ Հեգրայում, հայտնաբերված արձանագրություններից մեկում Գեշեմի անունը նույնպես հիշատակվում է Դեդանի (ներկայումս՝ էլ-Ուլա) թագավոր Աբդայի անվան հետ: Դեդանի տարածքն անցնում է հինարաբական Լիհիան թագավորությանը (տե՛ս **Olmstead A. T.**, History of the Persian Empire, p. 295): Գեշեմի անվան առաջինը հիշատակվելը, հավանաբար, ցույց է տալիս նրա գերակա դիրքը Աբդայի նկատմամբ, որը կախման մեջ է եղել Գեշեմից: Արձանագրություններից մեկում, բացի Լիհիանի թագավորից, հիշատակվում է նաև Թայմայի կառավարիչը, որը, հավանաբար, կախման մեջ է եղել Լիհիանից: Ասվածից երևում է, որ Հիջազը գտնվել է պարսկական տիրապետության տակ՝ մտնելով քեդարիտների համադաշնության մեջ (տե՛ս **David F.** Graf, Arabia During Achaemenid Times, pp. 140, 142):

[279] **Levin Y.**, The Southern Frontier of Yehud and the Creation of Idumea, p. 250.

[280] **Aharoni Y.**, Excavations at Ramat Rahel, "The Biblical Archaeologist", vol. 24, № 4, 1961, p. 105;Betlyon J. W., The Provincial Government of Persian Period Judea and the Yehud Coins, "Journal of Biblical Literature", 1986, vol. 105, № 4, p. 634; «The Cambridge Ancient History», vol. IV, p. 152.

[281] **Дандамаев М. А., Луконин В. Г.** Культура и экономика древнего Ирана, с. 205.

[282] **Josephus**, Jewish Antiquities, XI, 7, 1, p. 456; Lisbeth S. Fried, The Artaxerxes Correspondence of Ezra 4, p. 42. Bagôhî = Bigvai, Bagoas (unb'u

Մ.թ.ա. 349-344 թվականներին փյունիկյան քաղաքներն ապստամբում են պարսկական տիրապետության դեմ: Ապստամբությանը միանում է նաև Հուդան, որտեղ ապստամբությունը ճնշելուց հետո հրեաների մի մասը աքսորվում է Վրկան՝ Կասպից ծովի ափին[284]:

Հուդայացիները (Iaudaia) Բաբելոնի առավել կարևոր օտարածագում էթնոսներից մեկն էին, որոնք այստեղ էին հայտնվել դեռևս Նաբուգոդոնոսոր Բ-ի կողմից տասը հազար հրեաների բռնագաղթի ժամանակ: Բաբելոնական տեքստերում հանդիպում է նաև Āl-Jahûdu, այսինքն՝ «Հուդայացիների քաղաք» տեղանունը՝ Երուսաղեմ անվանումով[285]: Հրեական բազմաթիվ բնակավայրեր հիշատակվում են Հարավային Միջագետքում՝ Բաբելոնի մոտ, Սիպպարում, Նիպպուրում, Սուզայում և այլն[286]:

Ackroyd P. R., The Written Evidence for Palestine, Achaemenid History, Centre and Periphery, Leiden, 1990, p. 213).

[283] **Дандамаев М. А.** Политическая история Ахеменидской державы, Москва, 1985, с. 188; Lemaire A., Administration in Fourth-Century B.C.E. Judah in Light of Epigraphy and Numismatics, Judah and the Judeans in the Fourth Century B. C. E., ed. by O. Lipschits, G. Knoppers, R. Albertz, Indiana, Eisenbrauns, 2007. p. 54.

[284] «The Cambridge History of Judaism», p. 77. Անդրգետքն, ընդհանուր առմամբ, Աքեմենյան տերության ամենախաղաղ սատրապություններից մեկն էր, և այստեղ ապստամբություններ շատ քիչ են եղել և արագ են ճնշվել: Օրինակ, մ.թ.ա. 448 թվականի՝ Անդրգետքի սատրապ Մեգաբյուզոսի ապստամբությունը, որը, չնայած որոշ հաջողություններին, լայն թափ չստացավ (տե՛ս Ctesias' History of Persia: tales of the Orient, translated with commentaries by L. Llewellyn-Jones and J. Robson, London and New York, 2010, pp. 189-190; Olmstead A. T., History of the Persian Empire, p. 313; **Олмстед А.**, История Персидской империи, Москва, 2012, с. 342. Հմմտ. Եզրաս, Դ, 7-23):

[285] **Дандамаев М. А.** Месопотамия и Иран..., с. 364.

[286] **Pearce L.**, «Judean»: A Special Status in Neo-Babylonian and Achemenid Babylonia?, Judah and the Judeans in the Persian Period, ed. by O. Lipschits, G. Knoppers, M. Oeming, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2011, pp. 267-

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ պարսիկներին հայտնի Արաբիա երկրանունը հետագայում տարածվում է ամբողջ Արաբական թերակղզու վրա, այն դեպքում, երբ հին աղբյուրներում արաբների տեղադրությունն աչքի է ընկնում աշխարհագրական լայն ընդգրկմամբ: Ինչ վերաբերում է Պաղեստինին, ապա, ելնելով վերջինիս տարածքը զբաղեցնող ժողովուրդների էթնոկրոնական տեղական առանձնահատկություններից, պարսից արքունիքը վարչական առումով այն բաժանում է մի քանի ենթաշրջանների, որոնք ընդհանրական առումով հունա-հռոմեական աղբյուրներում հայտնի են Պաղեստին կամ Պաղեստինյան Սիրիա անվանումով:

277; Yigal B., Judeans in Sippar and Susa during the First Century of the Babylonian Exile: Assimilation and Perseverance under Neo-Babylonian and Achaemenid Rule, "Journal of Ancient Near Eastern History", 2014, 1(2), pp. 119–172.

ՔՐԻՍՏԻՆԵ ՌԱՖԱՅԵԼՈՎԱ
Բ.Գ.Թ.
Երևանի պետական լեզվաբանական համալսարան

ԱՐԱԲԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԼԵԶՎԱՅԻՆ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ

Միջլեզվային իմաստաբանական հարաբերակցությունների հիմնական տեսակների սահմանման խնդիրը զուգադրական լեզվաբանության մեջ դեռևս լիովին բացահայտված չէ: Ստեղծված իրավիճակը կարելի է բացատրել իմաստաբանական հարաբերությունների հսկայական զանազանությամբ, որ գոյություն ունի ինչպես տարբեր մակարդակների լեզվական միավորների, այնպես էլ տարբեր լեզուների միջև: Ըստ էության զուգադրվող բառային համապատասխանության յուրաքանչյուր օրինակ օժտված է իր անկրկնելի առանձնահատկություններով, որոնք պայմանականորեն կարելի է հարմարեցնել որևէ մի ընդհանրացված կաղապարի հետ: Այստեղ առաջնային է դասակարգման հիմնավորման խնդիրը, այսինքն՝ այնպիսի ելակետային հատկանիշների ձևակերպումը, որի միջոցով սահմանվում է տարբեր լեզուների լեզվական միավորների միջև գոյություն ունեցող տիպաբանության հարաբերակցությունը:

Մեր առաջ նպատակ չդնելով ներկայացնել արաբերենի և հայերենի դարձվածաբանական միավորների (այսուհետ՝ ԴՄ) ամբողջական տիպաբանությունը՝ կհիմնվենք միջլեզվական իմաստաբանական հարաբերակցությունների հնարավոր տեսակների համեմատաբար պարզ և համապարփակ դասակարգման վրա: Երկու լեզուներում զուգադրվող ԴՄ իմաստաբանական հարաբերակցության ողջ բազ-

մազանությունը կարելի է բաժանել երեք հիմնական տիպերի՝ համարժեքություն, համանմանություն և անհամարժեքություն[287]:

Համարժեքություն[288]: Համարժեքության կարգը լեզվական միավորների զանազան փոխհարաբերությունների ուսումնասիրության ժամանակ համակարգված մակարդակում կենտրոնական և համընդհանուր է, քանի որ լեզուների վերլուծության հիմնական նպատակը ընդհանրական և տարբերակիչ հատկանիշներով նրա կազմի և գործառույթների սահմանումն է: Սրա հիման վրա կարելի է ասել, որ համարժեք են այն միավորները, որոնք իրենց բոլոր հատկանիշներով համընկնում են մեկ կամ մի քանի զուգադրվող լեզվական համակարգերում, այսինքն՝ դրանք միավորներ են, որոնց միջև հաստատվում են նույնականության հարաբերություններ՝ A=B[289]: Օրինակ՝ *ոտքից (մինչև) գլուխ / من الراس الى القدم,Մի ձեռքով երկու ձմերուկ չես կանի / يد واحدة لا تحمل بطيختين, արյան պես կարմիր / احمر كالدم, փշերի վրա /على الشّوك,հոդս ցնդեց /تبخر في الهواء,նապաստակի պես երկչոտ /جبان كالارنب, ճանճ քշել /نشّ الذباب,աշխարհն աչքին մթնեց / اسودت الدنيا في عينيه, պատերն էլ ականջներ ունեն/ الحيطان آذان/և այլն:*

Այդպիսի ԴՄ իմաստով և կառուցվածքային կազմով միավորներն ամբողջովին համընկնում են ուսումնասիրվող լեզուներում: Դրանց հիմնական իմաստը և գնահատողական երանգավորումը մնում են անփոփոխ: ԴՄ հարաբերակցվում են նաև ոճական առանձնահատկություններով. չեզոք են կամ

---

[287] **Манакин В.Н.** Сопоставительная лексикология. К.: Знания, 2004, с. 123-173.

[288] Համարժեքություն (լատիներենից՝ aequus – հավասար + valentis –արժեք ունեցող) նշանակում է հավասարություն: Словарь иностранных слов, М., 1988, 608 с.

[289] Տե՛ս հղ. 1, էջ 122:

միջոցային: ԴՄ միավորվում են նաև քերականական և կառուցվածքային կազմով:

Համանմանություն: Զանազան լեզուների բառային և ԴՄ զուգադրական ուսումնասիրության ընթացքում առանձնանում են զույգեր, որոնց բնորոշ է իմաստային և ձևական խիստ նմանությունը: Այդպիսի հարաբերակցություններն ի հայտ են գալիս գենետիկորեն տարբեր մերձավորության լեզուների զուգադրական ուսումնասիրության ժամանակ:

Համանմանության բառային և ԴՄ միջլեզվային հարաբերությունների մեր ըմբռնումը տարբերվում է «միջլեզվային համանմանություն» եզրի մեկ այլ մեկնաբանությունից, որը մատնանշում է տարբեր լեզուներում նույնաձև միավորների առկայությունը: Այդպիսի միավորները, մասնավորապես բառային մակարդակում, համարվում են համանմանություններ: Դրանք տարբեր լեզուներում գոյություն ունեցող այնպիսի բառեր են, որոնք, չնայած իմաստաբանական տարբերություններին, ծագել են միևնույն աղբյուրից կամ էլ փոխառվել միևնույն լեզվից[290]: Միջլեզվային իմաստաբանական համանմանության այդպիսի ըմբռնումը հավանաբար շատ ավելի մոտ է միջլեզվային համանունությանը, քան բուն համանմանությանը:

Մեկ այլ լեզվում իմաստաբանական համանմանության որոնումը համարժեք բառի գոյություն չունենալու կամ բացահայտված չլինելու դեպքում լիակատար համապատասխանության ընտրության համար բարդ խնդիր է համարվում:

Զուգադրվող լեզուների ԴՄ համանմանության օրինակները ցույց են տալիս, որ դրանց միևնույն իմաստը և միևնույն կառուցվածքաքերականական միջոցներով օժտված առանձին բաղադրիչների տարբերությունները նույնպես բացատրվում են լրացուցիչ արտալեզվաբանական առանձնա-

---

[290] **Вилюман В. Г.** Семантико-синтаксические проблемы в контрастивной лингвистике. Проблемы структурной лингвистики. М., 1981, с. 13–17.

հատկություններով, մասնավորապես մի լեզվական կոլեկտիվում ընդունված յուրահատուկ զուգորդություններով:

Համեմատի՛ր՝ شعل النَّارُ فِي الهَشِيمِ / կրակին յուղ լցնել, كالنبت الشيطاني / սնկի պես աճել, أرخص من التمر في البصرة / ջրի գին, շան ոտի հետ գնալ, إنه لأشبه به من التمرة بالتمرة / երկու կես արած խնձոր, بحجم الخردلة /կորեկի հատիկի չափ, أكل الفلاح تفاحا، قال الفجل أحسن / էշն ինչ գիտի նուշն ինչ է, الغريق يتشبث بثمام / խեղդվողը ձեռքը փրփուրներին է գցում, هو منك على الثمام / քթի տակ, երկու մետրի վրա, عملوا يدا واحدة / ձեռք ձեռքի տված, قلبا وقلبا / ամբողջ հոգով, من شب على شيء شاب عليه / կարմիր կովը կաշին չի փոխի, اسودمثلالفحم / *ծյութի պես սև*, *بخرس ابلق* / սպիտակ ագռավ, *اخرجه من طوره* / հունից հանել, *إبرةفيكومةقش* գետնի տակն անցնել, *حبل الكذب قصير*ստի պոչը կարճ է, *تحككت العقرب بالافعى* / *շուն ու կատու դառնալ* և այլն:

Այսպիսով, միջլեզվային դարձվածաբանական համանմանություններ են տարբեր լեզուների այնպիսի համապատասխանությունները, որոնք արտահայտում են միևնույն իմաստը, բայց բնութագրվում են ներքին տարբերությամբ կամ մոտավոր նմանությամբ, որոնք չեն խախտում նրանց հիմնական իմաստը և գնահատողական երանգավորումը:

«Անհամարժեքություն»: Գիտական գրականության մեջ «անհամարժեքություն» եզրը մեկնաբանվում է որպես այնպիսի բառային միավոր, որը բացակայում է տվյալ լեզվից և ընդհանուր հիմունքներով չի թարգմանվում[291]: Անհամարժեք միավորները արտացոլում են տվյալ լեզվակիրների ապրելակերպի, սովորույթների, պատմության, մշակույթի, մտածելակերպի տարբերությունները, իսկ «եզակի»-«համընդհանուր» «ազգային»-«համաշխարհային» հակադրություններում հանդես են գալիս որպես եզակիության բաղադրիչ[292]:

---

[291] **Кочерган М. П.** Основи зіставного мовознавства : підручник, М. П. Кочерган, К., Академія, 2006, 423 с.

[292] **Мокиенко В. М.** В глубь поговорки, М., 1976, с. 223.

Եզակիությունն արտահայտում է լեզվամշակութային առանձնահատկությունները, որոնք դառնում են ազգերի էթնիկ գիտակցության ըմբռնման բանալին: Այն, ինչ օտար մշակույթի տեքստում հասցեատերը չի հասկանում, ինչը նրան տարօրինակ է թվում, մեկնաբանություն է պահանջում՝ ծառայելով որպես այն մշակույթի ազգային, յուրահատուկ տարրերի գոյության ազդանշան, որում ստեղծվել է տեքստը:

Ե՛վ իրողությունները, և՛ դրանք մատնանշող բառային միավորներն իրենց տեսակի մեջ միակն ու եզակին են, այդ իսկ պատճառով էլ ոչ մի բանի հետ չեն կարող համեմատվել: Այդ բառերը կարելի է սահմանել որպես անթարգմանելի միավորներ[293]:

Այսպիսով, անհամարժեքությունը միջլեզվական իմաստաբանական հարաբերակցությունների այնպիսի տեսակ է, որը գտնվում է բուն հարաբերակցությունների սահմաններից դուրս, քանզի անհամարժեք լեզվական միավորները հարաբերակցվում են որևէ մշակույթի անկրկնելի իրողությունների հետ: Դրանք էլ, որպես դարձվածքների բաղադրիչ մաս, իրենց հերթին որոշում են ԴՄ անհամարժեքությունը: Համեմատի՛ր՝ أيلول دباغ الزيتون (բառացի՝ սեպտեմբերը ձիթապտուղ ծեծելու ժամանակն է) / ամեն բան իր ժամանակն ունի, أبصر من زرقاء اليمامة (բառացի՝ ավելի սրատես, քան Յամամայի կապուտաչյա դուստրը) / խելացի, زي البقدونس محشور في كل أكل (բառացի՝ մաղադանոսի նման ամեն տեղ երևում է)/ ամեն տեղ քիթը խցկել, زبالعقربهقرصتهاوالقبر (բառացի՝ կարիճի պես խփեց և գերեզման)/ խայթում է նրան, ով իրեն ցավ է պատճառում حامض زي المش (շիճուկի պես թթու), *նայել ինչպես թուրքը խոզի մսին (ափելի հայացք)*, անպոչ գդալի պես մեջ ընկնել (խառնվել իրեն չվերաբերող գործերին), Վանա տա-

---

293 **Верещагин Е. М.** Язык и культура: Лингвострановедение в преподавании русского языка как иностранного. М., 1983, с. 56.

ռեխ (շատ նիհար), տանձի պոչ (շատ նիհար, տկար), գոմշի կաշի (անամոթ, աներես), սպասը եփել (մեկի վերջը տալ):

Ի տարբերություն անհամարժեք բառապաշարի՝ ԴՄ ազգային յուրահատուկ իրողությունների մասին տալիս են մանրամասն պատկերացում, դրանք ներառում են մշակութային սցենարների մեջ՝ հաճախ արտացոլելով համեմատության ճանաչողական և պատմական շարժընթացը: Այսպես օրինակ, հայերենում *նայել ինչպես թուրքը խոզի մսին* դարձվածքն օգտագործվում է ատելի հայացքը նկարագրելու համար: Արտահայտությունը կապված է թուրքերի և ընդհանրապես մուսուլմանների՝ խոզի միս չօգտագործելու հետ: Հիմնական գիտելիքն օգնում է հասկանալ, օրինակ, հետևյալ դարձվածքը՝ *اخرجه من المولد بلا حمص* (բառացի՝ դուրս գալ տոնավաճառից առանց հումմուսի) */օգուտ չքաղել*, որը բացահայտում է արաբների՝ տոնավաճառներում այցելուներին քաղցրավենիք և հումմուս բաժանելու սովորույթը: Իսկ ով մտնում էր տոնավաճառ և նույնիսկ մեկ սիսեռի հատիկ էլ չէր կարողանում վերցնել, նա անհաջող և ձախորդ մարդ էր համարվում, կամ *مثل الاطرش في الزفة (բառացի՝ ինչպես խուլը հարսանիքին / շատ հիմար լինել)*: Այս ԴՄ ծագումը մեզ բերում է արաբական աղմկոտ հարսանիք, որտեղ խուլ անձնավորությունը, ներկա գտնվելով խնջույքին, անմասնակից է մնում ընդհանուր ուրախությանը և հիմարի տպավորություն թողնում:

Մշակութային կնիք կրող բառապաշարն ինքնին և մասնավորապես ԴՄ կազմում արտացոլում է որևէ ազգի ապրելակերպին բնորոշ երևույթներ, ամրագրում է էթնոսի սոցիալական և հոգևոր կյանքի զանազան կողմերը և աշխարհընկալման յուրահատկություններն առհասարակ: Այդպիսի բառապաշարի հիմք են կազմում այսպես կոչված մշակութաբանական «դատարկությունները»՝ անթարգմանելի

բառերը[294]՝ արաբերենում՝ حمص հումմուս, تبلة թաբուլե, جن ջին, شيطان շայթան, عود ուդ, طحينية թահին, հայերենում՝ *դուդուկ, քամանչա, դրամ, թան* և այլ բառեր: Անհամարժեք բառապաշարի մեծ մասը հատուկ առարկաներ ցույց տվող գոյականներ են: Դրանք հիմնականում ընդգրկում են այնպիսի իրողություններ, ինչպիսիք են՝ կենցաղային իրերը, ազգային խոհանոցը, պարզունակ աշխատանքային և երաժշտական գործիքների, հագուստի, ընտանի կենդանիների, զենք ու զրահի, խաղերի, պարերի, սովորույթների, լանդշաֆտային առանձնահատկությունների անվանումները[295] և այլն: Ըստ տարածվածության՝ դրանք կարող են լինել ազգային (ուկրաիներեն՝ *гопак, рушник*; հայերեն՝ *դուդուկ, քանոն*, ռուսերեն՝ *щи, балалайка*, արաբերեն՝ *ուդ, դափքե (ազգային պար)*, տարածքային *(չայխանա, խարչո, քարվանսարա, նարգիլե)* և միջազգային *(դոլլար, ջինս, վիսկի, սաֆարի)*[296]:

Անհամարժեքության եզրը մի քանի լեզուներ համեմատելիս հարաբերական է դառնում: Այն, ինչ տվյալ լեզվում անհամարժեք է համարվում այլ լեզվի համեմատ, կարող է գոյություն ունենալ մեկ ուրիշ, երրորդ լեզվում[297]: Օրինակ՝ հայերենում *բաստրմա* բառն անհամարժեք է եվրոպական և սլավոնական մի շարք լեզուների, բայց ոչ արաբերենի, թուրքերենի և այլ արևելյան կամ կովկասյան լեզուների համեմատ: Կամ պարսկերեն خرجبه բառը կարելի է համարել համարժեք արաբերենի, թուրքերենի և ուրիշ լեզուների համեմատ, բայց ոչ հայերենի և ռուսերենի:

---

[294] **Кочерган М. П.** Նշվ. աշխ., էջ 327:

[295] **Тер-Минасова С. Г.** Язык и межкультурная коммуникация, учебное пособие. М., 2000, с. 171-174.

[296] **Кочерган М. П.** Основи зіставного мовознавства : підручник, Նշվ. աշխ., էջ 327:

[297] **Манакин В. Н.** Сопоставительная лексикология. Նշվ. աշխ., էջ 140:

Անհամարժեք ԴՄ ծագման հետ միասին առաջ է գալիս դրանք այլ լեզուներով թարգմանելու խնդիրը: Ինչ վերաբերում է բուն բառապաշարին, ապա այստեղ հաճախ դիմում են տառադարձությանը: Օրինակ՝ հայերեն՝*լավաշ* – ռուսերեն՝ *лаваш* – պարսկերեն՝ لواش; *вареники* – հայերեն՝ *վարենիկներ* –արաբերեն՝ فارينيك,արաբերեն՝ لحم مع عجين – հայերեն՝լահմաջու – ռուսերեն՝ *лахмаджун* և այլն:

Անհամարժեք բառապաշարի այդպիսի թարգմանությունը փոխադարձաբար հարստացնում է լեզուները, իսկ գեղարվեստական գրականության մեջ ազգային (բնորոշ առանձնահատկությունները) կոլորիտը վերականգնելու ոճաբանական եղանակ է:

Ավելի բարդ են ԴՄ թարգմանությունները, որոնք, բացի ընդհանրացված նշանակությունից, ընկալման զուգորդական-փոխաբերական մակարդակում ներառում են նաև համեմատության իմաստաբանական առանձնահատկություններ: Որոշ դեպքերում այլ լեզվում ընտրել համանման կամ համարժեք ԴՄ բավականին դժվար է, քանի որ այստեղ, այնուամենայնիվ, կարևոր դեր են խաղում ԴՄ ներքին ձևը և բոլոր բաղադրիչների պատճառաբանվածությունը: Խոսքը մասնավորապես այսպիսի ԴՄ մասին է. *գազար կերած էշի ձեն (խռպոտ ձայն), փախչակ գլուխ (ցածր ինտելեկտուալ կարողություններ ունեցող անձ), ասեղ մաշկող (գծուծության աստիճան), աղի պես հալվել (ասվում է ամոթված մարդու մասին),* بكرة في المشمش*(արտահայտում է երբեք որևէ բան չլինելու մասին),* السر في بئر *(բառացի՝ գաղտնիքը ջրհորում է /գաղտնի),* ناس تاكل بلح وناس تنضرب بالشمارخ/ *(բառացի՝ մարդ կա խուրմա է ուտում, մարդ էլ կա՝ արմավենու ճյուղ /հարստության և չքավորության համեմատություն),* ستر تحت الحجاب *(բառացի՝ ծածկվել հիջաբի տակ / գաղտնի),* شجاع كالسيف القاطع *(խիզախ):*

Երկլեզվյան դարձվածաբանական բառարանները բնականաբար այդպիսի ԴՄ համար առաջարկում են որոշակի զուգահեռ տարբերակներ, բայց ամեն դեպքում դրանք ներքին իմաստային, հետևաբար նաև դարձվածաբանական զուգորդությունների ձևավորման ազգային եղանակում որոշակի տարբերություններ են ի հայտ բերում: Համեմատի՛ր՝ ռուսերեն՝ *вертеться как белка в колесе* / անգլերեն՝ *to be as busy as a bee* / հայերեն՝ *ձեռ ու ոտ ընկնել* / *արաբերեն՝* دار كالنحلة; ռուսերեն՝ *два сапога пара* / անգլերեն՝ *birds of one feather* /հայերեն՝ *մի սանրի կտավ*/ արաբերեն՝ من طينة واحدة և այլն:

Ընդհանուր առմամբ ԴՄ անհամարժեքությունը շատ դեպքերում որոշվում է ոչ թե վերջիններիս նշանակությամբ, բովանդակային բնորոշմամբ (տարբեր լեզուներ ունեն միևնույն իմաստաբանական միավորների խմբեր), այլ այդ նշանակությունները ներկայացնելու միջոցով, ներքին ձևի հիմքում դրված զուգորդված հատկանիշների անկրկնելի առանձնահատկություններով:

Մեծ հետաքրքրություն է առաջացնում ոչ միայն բուն զուգորդական թարգմանելի բառերի ուսումնասիրությունը, այլ նաև արտալեզվական իրականության միևնույն դրսևորումներին տարբեր լեզվակիրների հնարավոր արձագանքները: Օրինակ՝ ավանակի ձայնին հայ աղջիկներն արձագանքում են՝ ձգելով իրենց մազերը, որպեսզի դրանք արագ երկարեն, քանզի երկար մազերը միշտ բարձր են գնահատվել տվյալ էթնոսի մոտ: Իսկ ահա արաբները բվի ճիչն ասոցացնում են մահվան լուրի հետ: Հայտնի է, որ բուն շատ տարօրինակ ձայն ունի: Այն հիմնականում մանկան լաց է հիշեցնում: Եթե որևէ մեկի տան մոտ բուն ձայներ է արձակում, ապա, ըստ արաբների, այդ տանն անպայման դժբախտություն կլինի: Բայց դա արդեն միջմշակութային նշանագիտության, նույնիսկ հնարավոր է՝ «հարալեզվաբանական մշակու-

թաբանության» տիրույթն է, որի շրջանակներում պետք է ուսումնասիրվի էթնոսների վարվելաձևերի առանձնահատկությունը լեզվական և այլ հաղորդակցությունների նշանների համակարգով:

Այսպիսով, ուսումնասիրված իմաստաբանական համապատասխանության հիմնական տեսակները (համարժեքություն, համանմանություն և անհամարժեքություն) արտացոլում են ԴՄ ընդհանուր, սակայն առավել էական տիպաբանական բնութագրությունները զուգադրական ասպեկտում: Գործնականում տվյալ համապատասխանության տեսակները հնարավոր չէ միշտ ճշգրիտ սահմանազատել, որը, որպես բազմապլան սիներգետիկ կազմակերպված համակարգ, միանգամայն արտացոլում է լեզվի բնույթը: Այնուամենայնիվ, վերը նշված իմաստաբանական համապատասխանության հիմնական տեսակները կարող են լինել զանազան լեզուների ԴՄ համադրության որոշակի ցուցանիշ՝ արտացոլելով միմյանց հետ զուգադրվող աշխարհի լեզվական պատկերների նմանությունների և տարբերությունների աստիճանը և բնույթը:

ԱՆՈՒՇ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ՍՈՒՖԻԶՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆ ԻԲՆ ԱԼ-ՋԱՈՒԶԻԻ «ԹԱԼԲԻՍ ԻԲԼԻՍ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իբն Ալ-Ջաուզին (1116-1201 թթ.), ով արաբ պատմիչ, աստվածաբան, մուհադիս էր և հանբալիական մազհաբի քարոզիչ, իր «Թալբիս Իբլիս» (թարգմ.՝ «Սատանայի խաբկանք») աշխատության մեծ մասը[298] նվիրել է սուֆիզմին՝ մասնավորապես դրա կրոնափիլիսոփայական հիմքի և փորձընթացի քննադատությանը՝ այդպիսով ստեղծելով կարևորագույն աղբյուր այդ ուսմունքի ուսումնասիրության համար:

Իր աշխատության մեջ հեղինակը նախ անդրադառնում է սուֆիզմի ծագմանը և այդ եզրի առաջացմանը: Նա նշում է, որ սուֆիզմն առաջացել է ասկետիզմից, սակայն հետագայում հեռացել է դրանից՝ դառնալով սխալ և մոլորությունների ուղիով տանող ուսմունք: «Մարգարեի ժամանակներում մարդիկ իրենց կապում էին հավատի կամ իսլամի հետ՝ իրենց անվանելով հավատացյալներ (مؤمن) կամ մուսուլմաններ: Հետո եկան մարդիկ, որոնք իրենց կապում էին ասկետիզմի և բարեպաշտության հետ, նրանք մեկուսացան աշխարհից իրենց պաշտամունքով և ընտրեցին իրենց ուրույն ճանապարհը»[299]:

Ըստ Իբն Ալ-Ջաուզիի՝ սուֆիզմը համակարգ է, որ սկզբնավորվել է սովորական ասկետիզմից (زهد): Սակայն դրա հետևորդները հետագայում տարբերվեցին ասկետներից որոշակի հատկանիշներով և արտաքին դրսևորումներով:

---

[298] لبنانتلبيس ابليس، ابن الجوزى، ص . 161-388.

[299] **Իբն Ալ-Ջաուզի**, *Թալբիս Իբլիս*, էջ 161, այս և հետագա մեջբերումների թարգմանությունը մերն է (Ա. Թ.):

Օրինակ՝ նրանք ընդունելի համարեցին երաժշտությունը և պարը: Սուֆիները մեծ համակրանք էին վայելում ասկետիզմի միջոցով սեփական էության վերացարկում և աստվածային էության հետ միաձուլում, ինչպես նաև պարզապես զվարճանքներ և մարդկային հաճույքներ փնտրողների շրջանում:

Անդրադառնալով սուֆի եզրի ծագմանը՝ հեղինակը նախ մեջբերում է անում Մուհամմամ Բին Նասիրից, որը, վկայակոչելով Աբու Մուհամմադ Աբդ Ալ-Ղանի Բին Սայիդ Ալ-Հաֆեզին[300], ասում է. «Ես հարցրի Վալիդ Բին Ալ-Կասիմին, թե որտեղից են սուֆիները իրենց անունը վերցրել, նա պատասխանեց, որ նրանք հեթանոսության (ջահիլիայի) շրջանի մարդիկ են, որոնց կոչել են սուֆա (صوفة): Նրանք հեռացել են Աստծո պաշտամունքից և բնակվել են Քաաբայում: Իսկ նրանց նմանվել ցանկացողները կամ հարողները կոչվել են սուֆիներ»[301]:

Իբն Ալ-Ջաուզին նշում է, որ կա կարծիք, որ առաջին մարդը, ով մեկուսացրել է իրեն աշխարհից և հրաժարվել, ինչպես ինքն է ձևակերպում. «Ամենակարող Աստծո փառքին՝ նրա սուրբ տանը ծառայելուց», մի մարդ էր, որին կոչում էին Սուֆա, իսկ նրա անունն էր Ալ-Կաութ Բին Մուր: Եվ մարդիկ, որ նմանություն ունեին վերջինիս հետ, կոչեցին իրենց սուֆիներ: Այնուհետև հեղինակը բերում է այս տեսակետը պաշտպանող տարբեր վկայություններ: Բերում է նաև մի ավանդություն, որը սկիզբ է առել Ալ-Զուբայր Բին Բաքքարից[302]. «Ալ-Կաութ Բին Մուրը կոչվել է սուֆա իր մոր պատ-

---

[300] Աբու Մուհամմադ Աբդ Ալ-Ղանի Բին Սայիդ Ալ-Հաֆեզին (944-1018 թթ.) ծնվել և ապրել է Եգիպտոսում, որտեղ համարվել է իր ժամանակի ամենաականավոր *հաֆիզը*՝ Ղուրանի տեքստը անգիր իմացողը և պահպանողը, Ibn Khallkan's Biographical dictionary, vol. II, Paris, p. 169.

[301] **Թալբիս Իբլիս**, էջ 161:

[302] Զուբայր Բին Բաքքարը (788-870թթ.) ծնվել է Մեդինայում, Մեքքայում եղել է կադի (դատավոր): Նաև պատմաբան է, որ զբաղվել է գլխավորա-

ճառով, ով, իր բոլոր երեխաներին կորցնելով, խոստանում է տղայի գլխին բամբակի կտոր (صوفة) կպցնել և դրանով կապել նրան Քաաբային: Մայրը իր խոստումը կատարում է, և արդյունքում Ալ-Կաութ Բին Մուրը և իր հետևորդները կոչվում են սուֆա»:[303] Իբն Ալ-Ջաուզին ավելացնում է, որ Ալ-Զուբայրը, հետագայում վկայակոչելով Իբրահիմ Բին Մունդիրին (մ. հիջր. 236 թ.), ասում է. «Կաութ Բին Մուրի մայրը, ով աշխարհ էր բերել բազմաթիվ աղջիկների, խոստանում է Աստծուն, որ եթե տղա ունենա, նրան կդարձնի Տան[304] ծառա: Եվ երբ ծնվում է Կաութ Բին Մուրը, մայրը նրան կցում է Տանը: Մի օր, երբ տղան բարձր ջերմություն է ունենում և դողէրոցքի մեջ կիսաուշաթափ վիճակում է լինում, մայրը, տեսնելով այդ պատկերը, ասում է, որ իր որդին ավելին չէ, քան բամբակի մի կտորը. այստեղից էլ նրան անվանում են սուֆա»[305]:

Այս մեջբերված վկայությունների բովանդակությունից կարելի է ենթադրել, որ հեղինակի կարծիքով Ալ-Կաութ Բին Մուրը եղել է մարդ: Այդպես է համարել նաև Մուհամմադ մարգարեի կենսագիր Իբն Հիշամը, համաձայն որի՝ Կաութ Բին Մուրն այն մարդն էր, ով առաջնորդում էր ուխտագնացների երթը Արաֆաթ լեռից: Քանի որ նա և իր հետևորդները բրդե շալեր էին կրում, նրանց անվանեցին «սուֆաթ»[306]: Սակայն նշենք, որ արաբ պատմագիր Բալազուրիի մոտ նշված է, որ Ալ-Կաութ Բին Մուրը մի ցեղ էր, որին պատկանում էին սուֆիները[307]:

պես Հիջազի շրջանի արաբների ծագումնաբանությամբ: Dr. Amanullah Khan, The critical study of Al-Bhaladhuri as a Historian, Punjab, 1987, p. 104.

[303] **Թալբիս Իբլիս**, էջ 162:

[304] Մեր կարծիքով խոսքը Մուհամմադ մարգարեի տան մասին է, որ գտնվել է Մադինայում կառուցված առաջին մզկիթի բակում:

[305] **Թալբիս Իբլիս**, էջ 162:

[306] **Ибн Хишам**, Жизнеописание Пророка Мухаммада. Перевод с арабского А. Гайнуллина. М., 2003, с. 25.

[307] صفتوح البلدان، بيروت، ص. 149، 1976

Հեղինակը ներկայացնում է նաև այն տեսակետը, որ սուֆիզմ եզրի ծագումը սկիզբ է առնում «Սուֆայի մարդկանցից» (اهل الصفة, թարգմ.՝ նստարանի մարդիկ): Այս տեսակետն արտահայտողները բերում էին այն փաստարկը, որ սուֆայի մարդկանց բնորոշ են Աստծո պաշտամունքը և աղքատության քարոզումը: Հեղինակը գրում է. «Այս մարդիկ աղքատներ էին, ունեզուրկներ, որ եկան Մուհամմադի մոտ և չունեին ո՛չ ընտանիք, ո՛չ որևէ ունեցվածք: Նրանց համար մի նստարան կառուցվեց Մուհամմադի մզկիթում, դրա համար նրանք անվանվեցին նստարանի մարդիկ: Կա ավանդություն, որ եկել է Ալ-Հասանից, դրանում ասվում է, որ նստարանը կառուցվել էր հիվանդ և աղքատ մուսուլմանների համար, և մյուս մուսուլմանները սովորություն ունեին նրանց ողորմություն բերելու: Մուհամմադը մոտենում էր նրանց և ասում. «Խաղաղություն ձեզ, նստարանի մարդիկ», որին նրանք պատասխանում էին. «Քեզ նույնպես, Աստծո առաքյալ»[308]:

Հեղինակը ենթադրում է, որ այս մարդիկ ապրում էին աղքատների համար նախատեսված մզկիթում և սնվում միայն ողորմությամբ: Սակայն նրան այս տեսակետը քիչ հավանական է թվում. «Երբ Աստված հաղթանակ պարգևեց մուսուլմաններին, նրանք կարող էին ազատագրվել այս խղճուկ վիճակից և հեռանալ: Բացի այդ, սուֆի (صوفى) բառի ծագումը ահլ ալ-սուֆայի (اهل الصوفة) հետ կապելը սխալ է, քանի որ այդ դեպքում բառաձևը կլիներ սուֆի (صفى)»[309]:

Ներկայացվում են նաև այլ տեսակետներ. օրինակ, որ այս անունը վերցվել է սուֆֆանայից, որը փափուկ, հողի վրա աճող բանջարեղեն է: Մարդիկ այս անվանումը ստացել են այն պատճառով, որ դաշտում աճող բույսերով են սնվել: Այս տեսակետը, ըստ հեղինակի, նույնպես ճիշտ չէ, որովհետև բառաձևը կլիներ սուֆանի (صوفانى): Մյուս տեսակետի համա-

---

[308] **Թալբիս Իբլիս**, էջ 162:

[309] Նույն տեղում:

ձայն՝ այդ բառեզրը կապվում է ծոծրակի (صوفة القفا), մասնավորապես դրա վրա աճող մազերի հետ: Միտքն այն է, որ սուֆիները հեռացել են մարդկային արարածներից և ամբողջությամբ նվիրվել Աստծուն: Նաև հեղինակը նշում է, որ շատերն այդ բառեզրը կապում են բուրդ բառի հետ, հավանաբար նրանց բրդե, կոշտ հագուստը նկատի ունենալով: Սա, ըստ հեղինակի, հավանական տարբերակ է: Վերը նշված առաջին տարբերակը հեղինակը նույնպես հավանական է համարում:

Իբն Ալ-Ջաուզին, անդրադառնալով սուֆիզմին, դիտարկում է դրա՝ սկզբնական ասկետիզմից մինչև ինքնուրույն ուսմունք դառնալու ընթացքը: Եթե ասկետիզմի հետևորդները՝ վաղ սուֆիները, հեղինակի կողմից համակրանք էին վայելում և, ըստ նրա, չէին հակասում ավանդական իսլամի բարոյական և կրոնական նորմերին, ապա ամբողջովին այլ էր իրադրությունը իր ժամանակի՝ արդեն մեծ առաջընթաց ապրած և իսլամական հասարակության մեջ մեծ տարածում գտած սուֆիական տարիկաների դեպքում: Դրանք հեղինակի կողմից դիտարկվում են որպես իսլամական ավանդույթի խեղաթյուրում:

Հեղինակը մանրամասնորեն մատնանշում է այն բոլոր «մոլորությունները», որ կան այդ համակարգում: Դա, ըստ նրա, հնարավոր է անել սուֆիզմը իր բոլոր ճյուղավորումներով բացահայտելու և այդ ուսմունքի հիմքերը և սկզբունքները մանրամասնորեն քննարկելու միջոցով: Այս գործում նա հենվում է Ղուրանից, սուննայից և հիմնականում հանբալիական աստվածաբաններից բերված մեջբերումների վրա: Նա գրում է. «Այս անվանումը (սուֆիզմ-Ա.Թ.) սկսել է օգտագործվել դեռևս երկու հարյուր թվից (Հիջրայից սկսած-Ա.Թ.) առաջ, և երբ առաջին անգամ մարդն այն օգտագործեց, այդ բառի մեջ տարբեր իմաստներ դրեց, բայց դրա էությունը բացատրվում էր որպես հոգու ուսմունք (النفس رياضة) և ջանք,

պայքար, որ վերակերպում է մարդու բնույթը, մաքրագործում այն արատներից, արթնացնում մարդու մեջ այնպիսի առաքինություններ, ինչպիսիք են՝ ճգնավորությունը, բարությունը, համբերատարությունը, անկեղծությունը, ճշմարտախոսությունը և այլն: Այդ մարդիկ գովասանքի են արժանի այս կյանքում և պարգևների՝ հաջորդում: Այսպես էր առաջին սուֆիների մոտ: Սակայն սատանան հետո մոլորեցրեց նրանց և նրանց հետևորդներին: Ամեն մի նոր հարյուրամյակի հետ մեծացավ նրա ցանկությունը մարդկանց իշխելու և մոլորեցնելու, մինչև որ վերջնականապես չհաղթահարեց վերջին սերնդին»[310]:

Շարունակելով խոսել վաղ սուֆիների մասին՝ հեղինակը բերում է մի քանի ավանդույթ: Դրանցից մեկը կապվում է Ալ-Տուսիի հետ, որում ասվում է. «Ես լսեցի Աբու Բաքր Բին Ալ-Մուտաքիֆին, ով ասաց, որ հարցրել է Ջունայդ Բին Մուհամմադին[311] սուֆիզմի մասին, և նա ասել է, որ այն հեռացնում է մարդկանց բոլոր չար հատկանիշներից և մոտեցնում ճշմարիտ, առաքինի հատկանիշներին»[312]: Մյուս ավանդույթը վերագրվում է Աբդ Ալ-Վահիդ Բին Բաքրին, որում նա ասում է. «Մուհամմադ Բին Խաֆիֆին[313] ինձ ասել է, որ լսել է Ռուվիմին[314], ով ասել է, որ ողջ մարդկությունը հենվում է

---

[310] **Թալբիս Իբլիս**, էջ 163:

[311] Ջունայդ Բին Մուհամմադը (մ. 910թ.) վաղ սուֆիզմի հայտնի ներկայացուցիչ է, սակայն ավանդական իսլամի իրավական դպրոցների ներկայացուցիչների կողմից երբեք չի համարվել անհավատ, և նրա վկայությունները համարվել են հավաստի, John P. Brown, The Darvishes or Oriental Spiritualism, New York, 2008, p. 50.

[312] **Թալբիս Իբլիս**, էջ 163:

[313] Մուհամմադ Բին Խաֆիֆին(մ. 982թ.) Շիրազում հայտնի սուֆի աստվածաբան էր, նրա քարոզները և աշխատությունները զգալի ազդեցություն են ունեցել հանբալիական կրոնաիրավական դպրոցի վրա, N. Hanif, Biographical Encyclopaedia of Islam, New Delhi, 2002, p. 199.

[314] Ռուվիմին (մ. 915 թ.) ծնվել է Բաղդադում, հայտնի սուֆի աստվածաբան, իրավաբան և հաֆիզէ, Ibn Khallkan's Biographical dictionary, Vol. II, Paris, p. 172.

տեսանելի, արտաքին աշխարհի վրա, իսկ այս աղանդը (فئة)՝ իրականության վրա: Բոլոր մարդիկ էլ անհրաժեշտություն ունեն դրսևորվելու, այս մարդիկ իրենցից պահանջում են իրական առաքինություն և հաստատակամություն ճշմարտությանը հասնելու համար»[315]:

Հեղինակը մեղադրում է սուֆիներին տգիտության մեջ, նա գրում է. «Սատանան սկսեց մոլորեցնել՝ շեղելով նրանց գիտելիքից: Հեռանալով գիտելիքի լույսից՝ նրանք սկսեցին խարխափել մթության մեջ: Նա վստահեցրեց նրանց, որ իրենց ուսմունքի նպատակը աշխարհից բացարձակ մեկուսացումն է, հետևաբար նրանք վանում էին այն ամենը, ինչը լավ էր իրենց մարմինների համար: Բարեկեցությունը համեմատում էին կարիճի հետ՝ մոռանալով, որ դա պարզապես անհրաժեշտություն է, և իրենց ենթարկում էին տարբեր տեսակի ինքնախարազանումների: Օրինակ՝ նրանցից ոմանք պետք է երբեք չպառկեին: Այս մարդկանց նպատակը ճշմարիտ էր, սակայն նրանք դուրս էին եկել ճշմարիտ ուղուց: Նրանցից ոմանք, ցանկանալով ինչ-որ գիտելիք ստանալ, հաճախ հետևում էին կեղծ ավանդություններին և գործում էին համաձայն դրանց՝ չիմանալով և չհասկանալով, որ դրանք կեղծ են»[316]:

Հեղինակը խիստ քննադատորեն է վերաբերվում սուֆիզմի փիլիսոփայության և փորձընթացի առանձնահատկություններին, սուֆիական ծեսերն ու ավանդույթները համարում հավատամերժ նորամուծություն (بدعة), որը վերածվում է շարիաթի հիմունքների լիովին մոռացման և ամենաթողության քարոզի: Նա վկայություն է բերում Մուսա Բին Իսայից, ով, վկայակոչելով Աբու Յազիդ Ալ-Բիսթամիին[317], ասում է.

---

[315] *Թալբիս Իբլիս*, էջ 164:

[316] Նույն տեղում, էջ 164:

[317] Աբու Յազիդ ալ- Բիսթամին, ով ավելի հայտնի է որպես Բայազիդ ալ-Բիսթամի (մ. 875թ.), հայտնի սուֆի փիլիսոփա և աստվածաբան է, Carl W.

«Նրանք, ովքեր արհամարհում կամ անտեսում են Ղուրանի ընթերցանությունը, հրապարակային աղոթքները, հուղարկավորության ծեսը, հիվանդների զննումը, դավանում են սուֆիզմ և անհավատներ են»[318]:

Հեղինակը, անդրադառնալով հայտնի սուֆի հեղինակների՝ Աբու Համիդ Ալ-Ղազալիի, Մուհամմադ Բին Տահիր Ալ-Մակդիսիի, Աբու Նաիմ Ալ-Իսբահանիի, Աբու Աբդ Ալ-Ռահման Ալ-Սուլամինի և այլոց աշխատություններին, նրանց նույնպես մեղադրում է անհավատության, տգիտության, Ղուրանի և հադիսների վկայությունները կեղծելու կամ իրենց ուսմունքին հարմարեցնելու մեջ: Նա գրում է. «Նրանք սկսեցին մտորել սովի, աղքատության, գայթակղության և զրպարտության մասին և գրեցին աշխատություններ այս ամենի մասին: Նրանց հեղինակները համակարգեցին սուֆիզմը և տվեցին դրա առանձնահատկությունների բնութագրումը, օրինակ՝ ցնցոտիներ կրելը, սաման, էքստատիկ վիճակը, պարը, ծափահարությունները: Նրանք համարում էին, որ առանձնահատուկ են իրենց անաղարտության և ինքնամաքրագործման շնորհիվ: Հետո ընթացքը շարունակվեց, և նրանց շեյխերը, հասնելով ինչ-որ դիրքի և տուրք տալով իրենց երևակայությանը, սկսեցին կատարել բազմաթիվ նորամուծություններ: Այսպիսով, անդունդը նրանց և գիտնականների (علماء) միջև մեծացավ: Դեռ ավելին, նրանք իրենց ուսմունքը սկսեցին համարել ամենահամապարփակ և կատարյալ գիտելիքը, որը նրանք անվանեցին «Ներքին գիտելիք»: Իսկ Շարիաթի գիտելիքը (علم الشارعة) անվանեցին «Արտաքին գիտելիք»: Նրանցից ոմանք, առաջնորդվելով կեղծ ենթադրություններով, հայտարարում են, որ անմոռաց սիրահարված են Աստծուն և տենչում են նրան՝ որպես գեղեցկության ամենակատարյալ նմուշ: Սա միջանկյալ մի

Ernst, Words of Ecstasy in Sufism, New York, 1985, p. 11.

[318] **Թալբիս Իբլիս**, էջ 168:

բան է անհավատների և նորարարների միջև: Եվ երբ նրանց ուսմունքը բաժանվեց տարիկաների, այն աղավաղվեց և աղճատվեց: Նրանցից ոմանք ստեղծեցին էքստատիկ վիճակի մասին ուսմունք, ոմանք՝ միասնականության (Աստծո հետ ձուլման-Ա.Թ.): Եվ սատանան շարունակում է շրջապատել նրանց տարբեր հերետիկոսություններով, այնպես որ նրանք նույնիսկ իրենց համար ստեղծեցին նոր օրենքներ»[319]:

Նա գրում է, որ այս հեղինակների մոտ բերված Ղուրանի, սուննայի և հադիսների բոլոր մեկնաբանությունները հենված են միայն իրենց ենթադրությունների վրա, առանց որևէ գիտական ապացույց կամ հիմք ունենալու. «Տարօրինակ է իրոք, որ նրանք, լինելով այդքան բծախնդիր ուտելիքի հարցում, այսպես ազատ են պահում իրենց Ղուրանի մեկնաբանության հարցում»[320]: Սուֆի հեղինակները, ըստ նրա, իրենց աշխատություններում ներկայացնում են սուֆիզմում որևէ հեղինակավոր ավանդույթով հիմնավորում չունեցող երևույթներ. օրինակ՝ օր ու գիշեր շարունակվող ծոմապահությունը և շատ ուրիշ սխալ և անընդունելի դրույթներ, որ շատ հաճախ, ըստ հեղինակի, նողկանք են առաջացնում: Դրանք ամրապնդվում են միայն սուֆի հեղինակների մտքերով, որ փոխանցվում են մեկից մյուսին: Նա գրում է. «Այս հեղինակները չամաչեցին սուֆիների շարքում դասել Աբու Բաքրին, Օմարին, Օսմանին, Ալիին, Սադաթին և Մուհամմադի համախոհներին: Նրանց մասին գրեցին հրաշալի բաներ: Սուֆիների թվում դասեցին նաև կադի Շարիհային, Հասան Ալ-Բասրիին, Սուֆյան Ալ-Թաուրիին և Ահմադ Բին Հանբալիին, Ալ-Ֆուդաիլին և Իբրահիմ Բին Ահմադին և Մաարուֆ Ալ-Քարխիին՝ որպես ապացույց նշելով, որ նրանք ասկետական կենցաղ են վարել: Նրանք (սուֆի հեղինակները-Ա.Թ.) թվարկում և շատ անհեթեթ մեկնաբանություններ են տալիս այն

---

[319] **Թալբիս Իբլիս**, էջ 166:

[320] **Թալբիս Իբլիս**, էջ 168:

բոլոր անհիմն մոլորություններին, որ հատուկ են սուֆիներին՝ ձուլում, անհետացում, համառություն, մեկուսացում, էքստատիկ վիճակ, արբեցում, իմացություն, պայծառացում, կերպարանափոխություն և այլն: Գրում էին Շարիաթի և Հակիկայի[321] վերաբերյալ իրենց պատկերացումների մասին»[322]:

Հեղինակը գրում է, որ այս աշխատությունները գրված են սուֆիզմին հատուկ խորհրդապաշտական, էզոթերիկ ոճով: Դրանք հավաքագրելով՝ սուֆիները անվանեցին էզոթերիկ՝ ներքին գիտություն (العلم الباطنا), և իրենց համարեցին այդ գիտության կրող: Հեղինակը, որպես օրինակ, մեջբերում է անում Ալ-Ղազալիի «Ձևերի հստակ հաշիվ» աշխատությունից, որտեղ վերջինս նշում է, որ սուֆիները ծագման սկզբնական շրջանում տեսել են հրեշտակներ և մարգարեների հոգիներ, լսել են նրանց ձայները և գիտելիք ստացել նրանցից: Հետագայում նրանք այդ ականատեսի վիճակից բարձրացել և հասել են շատ ավելի բարձր և վեհ աստիճանի, որն անհնար է բառերով նկարագրել:

Իբն Ալ-Ջաուզին կարծում է, որ այս մարդկանց՝ նման պատմություններ հորինելու պատճառն առաջին հերթին իրավագիտության, ճշմարիտ իսլամի և շարիաթի անտեսումն էր: Եվ դրա արտահայտությունը եղավ նրանց ստեղծած կեղծ համակարգը: «Նրանք համառորեն պնդում էին ասկետիզմի կարևորության և մարդու մարմնական վիճակի անկարևորության մասին, և այն մասին, որ ամենաարդյունավետը նրանց լեզուն և ուսմունքն է: Հետագայում նրանք մեծ ճանաչում և

---

[321] Հակիկան (արաբ. թարգմ.՝ իրականություն) սուֆիզմի՝ ինքնակատարելագործման ուղու երեք աստիճաններից վերջինն է: Այդ աստիճաններն են՝ շարիաթը, տարիկան և հակիկան: Այս մասին տե՛ս Ա. Թամրազյան, Սուֆիզմը՝ որպես փիլիսոփայություն և փորձընթաց իսլամի հոգևոր համակարգում, Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, V, Երևան, 2008 թ., էջ 69:

[322] **Թալբիս Իբլիս**, էջ 165:

հարգանք վայելեցին մարդկանց շրջանում, որովհետև նրանց ուսմունքին արտաքինից հատուկ են մաքրությունը, բարեպաշտությունը և հանդարտությունը, նաև այն, որ ազատություն է տալիս մարդուն՝ թույլատրելով երաժշտության ունկնդրումը և պարը: Այս ամենը գրավում է մարդկանց: Բացի այդ, առաջին սուֆիները միշտ հեռու էին մնում սուլթաններից և էմիրներից՝ մտերմանալով հասարակ մարդկանց հետ»[323]:

Հեղինակը, վկայակոչելով հայտնի հանբալիական և նաև մյուս մազհաբների աստվածաբանների՝ Աբդ Ալ- Համիդ Ալ-Հուբլի, Ջույանյդի, Աբու Բաքր Շաֆաֆի, Ալ-Հուսեյն Ալ-Նուրիի և այլոց ավանդությունները աներկբա պնդում է, որ սուֆի հեղինակների վկայությունները պետք է համարվեն կեղծ և անընդունելի, իսկ նրանք ճանաչվեն անհավատներ. «Նա, ով դավանում է ներքին գիտությունը և ժխտում հայտնի օրենքները, ճանաչվում է աղետ հասարակության համար: Գիտելիքները և իրավագիտությունը մեզ (ուղղադավան իսլամի հետևորդների-Ա. Թ.) համար հիմնված են Գրքի և Սուննայի վրա»[324]:

Հեղինակը դեմ է սուֆիզմին, քանի որ այն մեկուսացնում է մարդկանց աշխարհից և բոլոր ծանոթ և սիրված երևույթներից, նրանց մատնում է չքավորության: Սուֆիները համարում են, որ ինքնաճանաչողության կարելի է հասնել միայն սեփական մարմինը կտտանքների ենթարկելու միջոցով: Սուֆիները, ըստ հեղինակի, մատնանշելով իրենց առաքինի վարքը, իրականում խախտում են մարդու արտաքին դրսևորմանը վերաբերվող Շարիաթում տրված բոլոր արգելքները և այդպիսով կորցնում են ներքին հոգեկան հավասարակշռությունը: Նա գրում է. «Մենք ոչինչ չունենք ասելու այն մարդուն, ով պնդում է, որ Աստծո հետ կապի ժամանակ նա գտնվում է մի վիճակում, որը դուրս է Շարիաթում տրված գի-

---

[323] **Թալբիս Իբլիս**, էջ 166:
[324] Նույն տեղում, էջ 167:

տելիքների շրջանակից և բերում է այնպիսի դրույթներ, որ չունեն հաստատում, հավաստի վկայակոչում: Նրանք հաստատակամ են իրենց այդ համոզմունքներում, ուրեմն միանշանակ պետք է դատապարտվեն և արհամարհվեն ճշմարիտ ուղու վրա գտնվող մարդու կողմից, և մենք պետք է պահապան կանգնենք և պաշտպանենք մեզ նրանցից և կեղծ ուսմունքի ցանկացած նման հետևորդից»[325]:

Հեղինակը նաև խստորեն դատապարտում է սուֆիզմին չհարող, բայց դրա հանդեպ համակրանք ունեցողներին, որոնք, ինչպես վերը նշված է հեղինակի կողմից, և ինչպես հայտնի է պատմությունից, տասներկուերորդ դարում մեծ թիվ էին կազմում անգամ սուննիների շրջանում: Հեղինակը գրում է. «Այն մարդիկ, ովքեր չեն հետևում այս ուսմունքին, բայց համակրանք ունեն դրա հանդեպ, նույնպես պետք է խստորեն դատապարտվեն՝ Շարիաթի մաքրությունը պաշտպանելու նպատակով: Եվ տգետ մարդկանց այն հարցին, թե ինչպես կարելի է հերքել ասկետների փորձառությունը, մենք կպատասխանենք, որ մարդը խոնարհության հասնում է միայն Աստծո հետ շփման միջոցով, այլ ոչ անձնական փորձով: Մարդ կարող է իր էությամբ մաքուր լինել և արժանի դրախտի, սակայն սխալներ գործել և սխալ ուսմունքների ազդեցության տակ ընկնել: Պետք է իմանալ, որ նա, ով առաջնահերթում է ներանձնական փորձը, անտեսում է վարքի կարևորությունը: Ի՞նչ կարելի է դրանից ենթադրել. դա նման է այն բանին, երբ մեկը դիտարկի Քրիստոսի կատարած հրաշագործությունները՝ առանց նրա անձը ուսումնասիրելու: Եվ այդպիսով աստվածությունը պահանջում է մարդուց բացահայտել իր էությունը՝ չմոռանալով վարվեցողության մասին, և չվերագրել իրեն այնպիսի բաներ, որոնց ինքն արժանի չէ: Եվ մարդիկ, որ իրենց անվանում են Ներքին գիտելիքի

---

[325] Թալբիս Իբլիս, էջ 168:

կրող և պնդում, որ Աստված կարող է տեսանելի և շոշափելի լինել այս աշխարհում, որ նա կարող է լինել մի մարդու մեջ, որին հանդիպում ենք փողոցում և շփվում՝ այդպիսով առնչվելով աստվածային էության հետ, նրանք պատրանքների և մոլորության մեջ են:

Այս ամենը շատ աղետալի է, և պետք է աղերսենք Աստծո պաշտպանությունը, որ չհեռանանք դեպի Իրեն տանող ճշմարիտ ուղուց»[326]:

Այսպիսով, ծանոթանալով Իբն Ալ-Ջաուզիի «Թալբիս Իբլիս» աշխատությանը, հստակ պատկերացում ես կազմում XII դարում սուֆիզմի վերաբերյալ հանբալիականության վերաբերմունքի մասին. այն դիտարկվում էր որպես աղետ ճշմարիտ իսլամի համար: Հանբալիականության քննադատությունը, ի դեմս Իբն Ալ-Ջաուզիի, սուֆիզմի հանդեպ ուներ արմատական բնույթ. այն ուղղված էր սուֆիզմի փիլիսոփայության և փորձընթացի բացարձակ մերժմանը: Միայն վաղ սուֆիզմը, որ նույնականացվում էր ասկետիզմի հետ, որոշ չափով ընդունելի էր հեղինակի համար, որը, սակայն, ըստ նրա, այլևս որևէ կապ չուներ իր ժամանակի՝ արդեն հստակ ձևավորված և բազմաթիվ տարիկաների բաժանված սուֆիզմի հետ: Հանբալիական մազհաբի գլխավոր նպատակն էր զերծ պահել իսլամը ցանկացած նորամուծությունից, այդ թվում՝ նաև սուֆիական ուսմունքից:

Այս ամենով հանդերձ Իբն Ալ-Ջաուզիի «Թալբիս Իբլիս» աշխատությունը շատ կարևոր աղբյուր է սուֆիզմի՝ որպես կրոնափիլիսոփայական համակարգի ծագման և հետագա զարգացման պատմությունն ուսումնասիրելու համար:

---

[326] Թալբիս Իբլիս, էջ 169:

ՄԱՐԻԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՄԱԿԱՍԻԴՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ԻՍԼԱՄԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ

Մակասիդներն աստվածային նպատակների, մտադրությունների և բարոյական հայեցակարգերի խումբ են, որոնց վրա էլ հիմնված է իսլամական օրենքը: Մակասիդների օրինակներ են մարդկային արժանապատվությունը, արդարությունը, ազատ կամքի դրսևորումը, սոցիալական համագործակցությունը և այլն: Մակասիդներն իրավագետներին հնարավորություն են տալիս վավերացնելու այն միջոցները, որոնք նրանք կիրառում են օրենքի հիմնարար արժեքները պաշտպանելու համար: Հոդվածի նպատակն է ցույց տալ մակասիդների տեսության նորովի կիրառումը որպես սուննիական իսլամի մեկնաբանման միջոց:

Հոդվածում կներկայացվեն մակասիդների դասակարգումը և կիրառումը ժամանակակից այնպիսի կրոնաիրավագետների կողմից, ինչպիսիք են՝ Յուսուֆ Կարադավին և Ջասեր Աուդան, ինչպես նաև կներկայացվեն մակասիդները մարդու իրավունքների և զարգացման տեսակետից:

Մակասիդների տեսության նորացումը և կիրառումը

Ինչո՞ւ է զաքաթը իսլամի հիմնասյուներից մեկը: Որո՞նք են Ռամադան ամսին պահքի ֆիզիկական և հոգևոր առավելությունները: Ինչպե՞ս կարող է իսլամական օրենքը նպաստել զարգացմանը և բարեկրթությանը: Այս և իսլամական օրենքին վերաբերող շատ այլ հարցերի պատասխանները կարելի է գտնել մակասիդ ալ-շարիայի սկզբունքներում: Արաբերենից թարգմանաբար մակասիդ նշանակում է

նպատակ, մտադրություն: Մակասիդը նաև այն տրամաբանական դրական վերջնակետն է, որին օրենքը նպատակ ունի հասնելու՝ արգելելով կամ թույլատրելով որևէ երևույթ: Մակասիդ ալ-շարիան իսլամական վճռի հետևում թաքնված նպատակն է: Նպատակը՝ մակսադ, վավեր չէ, եթե այն տրամաբանորեն չի տանում որևէ լավ բանի իրականացման կամ խուսափում է որևէ բացասական երևույթից[327]:

Այս մոտեցումն էապես տարբեր է իրավական պատճառաբանության մեթոդաբանությունից, որն առաջարկվում է ուսուլ ալ-ֆիկհի[328] կողմից, որն էլ իր հերթին խրախուսում է իրավական պատճառաբանությունը և իջթիհադը[329]: Մակասիդների մոտեցումն անուղղակի է և շատ հեռու որևէ անհատի մտադրություններից: Վերջին ժամանակներս մակասիդների շուրջ մեծացող հետաքրքրությունը պայմանավորված է նաև նրանով, որ իջթիհադի և ուսուլ ալ-ֆիկհի մեթոդաբանությունն ամբողջովին հիմնված է միջնադարյան սոցիալական արժեքների վրա և դժվար է ադապտացվում (հարմարվում) ներկայիս օրենսդրության պայմաններին[330]:

Այսպիսով, մակասիդները ներկայացնում են կապը իսլամական օրենքի և ներկայիս մարդու իրավունքների գաղափարի, զարգացման և քաղաքավարության միջև և կարող են պատասխանել այնպիսի հարցերի, ինչպիսիք են, օրինակ՝

---

[327] **M. H. Kamali**, Maqasid al-shariah. Made Simple, London, 2006, p. 8.

[328] Իսլամական կրոնաիրավագիտության սկզբունքները: Տե՛ս Ислам. Энциклопедический словарь. М.,1991, стр. 110.

[329] Կրոնաիրավագետների գործունեություն, որն ուղղված է աստվածաբանական և իրավական հարցերի ուսումնասիրմանն ու լուծմանը, այդ ուսումնասիրության ժամանակ կիրառվող սկզբունքների և մեթոդների համակարգը, ինչպես նաև հենց կրոնաիրավագետի հեղինակության աստիճանն աղբյուրների իմացության և մեկնաբանման հարցում: Տե՛ս Ислам. Энциклопедический словарь. Стр. 91.

[330] **M. H. Kamali**, Law and Ethics in Islam. The Role of the Maqasid, Article from the book New Directions in Islamic Thought, London 2009, pp. 23-24.

1. Ո՞րն է Ղուրանի և սուննայի վերամեկնաբանման ժամանակակից ամենալավ տարբերակը:
2. Ո՞րն է կապը ներկայիս մարդու իրավունքների գաղափարի և իսլամական օրենքի միջև:
3. Ինչպե՞ս կարող է իսլամական օրենքը նպաստել զարգացմանը, բարոյականությանը և քաղաքավարությանը:

Ավանդաբար մակասիդների դասակարգումը նրանց բաժանում է կարիքների երեք աստիճանի, որոնք են՝ պահանջները (դառուռաթ), կարիքները (հաջիյաթ) և շքեղությունները (թահսինիյաթ)[331]:

Դառուռաթ կոչվող խմբի մեջ մտնող երևույթները կենսական կարևորություն ունեն մարդու կյանքի համար: Այսպիսով, մարդկանց կյանքը վտանգի տակ է, եթե վտանգված է նրանց միտքը: Այդ պատճառով իսլամում, օրինակ, արգելված է ալկոհոլը: Մարդու կյանքը վտանգված է նաև ֆինանսական ճգնաժամի պարագայում: Այդ իսկ պատճառով իսլամն արգելում է մենաշնորհները, կաշառակերությունը և նմանատիպ այլ երևույթներ:

Հաջիյաթի խմբի երևույթները կենսարար նշանակություն չունեն մարդու կյանքում: Դրանք ևս կարևոր են, սակայն ոչ այնքան, ինչքան դառուռիյաթները: Այս դասակարգման մեջ են մտնում, օրինակ, ամուսնությունը, առևտուրը, փոխադրամիջոցները և այլն: Ինչևիցե, սրանցից որևէ մեկի պակասը չի կարող կյանքի և մահվան հարց լինել:

Թահսինիյաթ խմբի մեջ են մտնում, օրինակ, օծանելիքը, գեղեցիկ հագուստը, շքեղ տունը: Այս ամենը իսլամում խրախուսվում է և համարվում Աստծո ողորմածության դրսևորում, բայց, միևնույն ժամանակ նշվում է, թե որքան փոքր տեղ պիտի ունենա մարդու կյանքում[332]:

---

[331] Նույն տեղում:
[332] **J. Auda**, Maqasid al-Shariah, a Begginers'Guide, The International Institute of Islamic Thought, London, 2007, pp. 9-11.

Ղուրանի կամ մարգարեի կարգադրությունների տակ թաքնված նպատակի շահարկման պատմությունը շատ հին է և սկսվել է դեռևս մարգարեի զինակիցների ժամանակներից: Որպես վառ օրինակ կարելի է բերել խալիֆա Օմարի հետևյալ արարքը: Հայտնի է, որ մարգարեի կողմից հրամայված էր զաքաթի[333] համար նվիրատվությունների մեջ չներառել ձիերին: Սակայն խալիֆա Օմարը (577-644) հրամայում է ներառել այն, ինչը հավատացյալների համայնքի մեջ շփոթություն է առաջացնում: Իր արարքը խալիֆա Օմարը բացատրում է նրանով, որ իր ապրած ժամանակահատվածում ձիերն առավել արժեքավոր էին, քան ուղտերը, որոնց մարգարեն դարձրել էր զաքաթի պարտադիր նախապայման: Այլ կերպ ասած, Օմարը հասկացավ զաքաթի «նպատակը» սոցիալական աջակցության տեսքով՝ չնայած այն բառացի կարգադրությանը, որ նախատեսված էր ավանդույթով: Այսպիսով, Օմարը հստակ տարբերություն սահմանեց «պաշտամունքի առարկաների» (իբադաթ) և աշխարհիկ գործերի (մուամալաթ) միջև[334]:

Մակասիդների տեսության հիմնադիրներից էր Շիհաբ Ադ-Դին Ալ-Կարաֆին[335]: Վերջինս իր «Ալ-ֆուրուկ» («Տարբերությունները») աշխատության մեջ գրում է. «Մարգարեի գործողությունների միջև՝ որպես Աստծո խոսքի փոխանցողի, դատավորի և առաջնորդի, կան տարբերություններ: Որպես մարգարե նրա արարքները և ասածները ընդհանրական են և հավերժ: Ինչ վերաբերում է որոշումներին՝ կապված ռազ-

---

333 Զաքաթ կամ նվիրատվությունը համարվում է իսլամի հինգ հիմնասյուներից մեկը: Զաքաթը հարստության կամ ունեցվածքի մի մասն է, որը պետք է վճարել կարիքի մեջ գտնվող մուսուլմաններին: Տե՛ս Ислам. Энциклопедический словарь. Стр. 74.

334 Նույն տեղում:

335 Շիհաբ Ադ-Դին Ալ-Կարաֆին(1228-1285) մալիքիական մազհաբի կրոնաիրավագետ է, ապրել և ստեղծագործել է Եգիպտոսում:

մավարության, դատավորներ նշանակելու, ավարը բաժանելու, պայմանագրեր ստորագրելու հետ, ապա դրանք հատուկ են առաջնորդներին»: Այսպիսով, Ալ-Կարաֆին նոր իմաստ տվեց մակասիդներին որպես Մուհամմադ մարգարեի անձնական գործողությունների նպատակներ կամ մտադրություններ, և հակառակը: Ալ-Կարաֆիի աջակցությունը մակասիդների տեսությանը հիմնված էր իրավական ծուղակների՝ ալ-հիյալ ալ-ֆիկհիյա երևույթի քննադատության վրա, որով նա ապացուցում էր, որ վերջիններս հակասում են մակասիդներին[336]:

Հետագայում՝ XIV դարում, Անդալուսի իմամ Աշ-Շատիբին գրում է. «Այսպիսով, ընդհանուր առմամբ, պաշտամունքի ոլորտը պետք է մնա հստակ սահմանված և անփոփոխ, որտեղ հավատացյալները պետք է կատարեն Մարգարեի բառացի կարգադրությունները: Մինչդեռ Մարգարեի և նրա զինակիցների օրինակը (վարքը) ընդօրինակելի չէ, բառացիորեն մուսուլմանների տարբեր ոլորտներում, և առավել նախընտրելի է առաջնորդվել սկզբունքներով և մակասիդներով»[337]:

Մակասիդների տեսությունը պատմության ընթացքում զարգացում ապրեց: Ներկայիս կրոնաիրավագետներից շատերը չեն համաձայնվում մակասիդների նման դասակարգման հետ մի քանի հիմնարար պատճառներով, որոնցից են՝

1. Ավանդական մակասիդներն ավելի շատ կապված են անհատի, քան հասարակության, մարդկության և ընտանիքի հետ:

---

336 **S. Jackson**, Islamic Law and the State: The Constitutional Jurisprudence of Shishab ad-Din Al-Qarafi, Leiden, Brill, 1996, p. 89.

337 J. Auda, "Maqasid al-Shariah, a Begginers' Guide", The International Institute of Islamic Thought, London, pp. 22-24.

2. Ավանդական դասակարգումը չի ընդգրկում այնպիսի համընդհանուր և հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են՝ արդարությունը և ազատությունը:
3. Մակասիդները սերում են ոչ թե օրենքի հիմնաղբյուր համարվող իսլամական տեքստերից, ինչպես օրինակ՝ Ղուրանից, այլ իսլամական իրավական ժառանգությունից, որի հեղինակներն այս կամ այն կրոնաիրավական դպրոցի ներկայացուցիչներն են[338]:

Մակասիդների տեսության զարգացման և ներկայիս պայմաններին ադապտացնելու համար ժամանակակից կրոնաիրավագետները ներկայացրել են մակասիդների դասակարգման նոր հայեցակարգեր՝ բաժանելով մակասիդները երեք մակարդակի.

1. գլխավոր մակասիդներ, որոնք ներառում են վերը նշված առաջին երկու հին դասակարգումները և նոր առաջարկված մակասիդներ, որոնք վերաբերում են, օրինակ, արդարությանն ու համընդհանուր արժեքների:
2. Հատուկ մակասիդներ, որոնք դասակարգվում են իսլամական օրենքի հատուկ գլուխներում, ինչպես օրինակ՝ երեխայի բարեկեցությունը ընտանեկան օրենքում կամ մենաշնորհի կանխարգելումը ֆինանսական գործարքային օրենքում:
3. Մասնակի մակասիդներ, որոնք հատուկ տեքստերի կամ օրենքների հետևում թաքնված մտադրություններն են: Մասնակի մակասիդ է, օրինակ, պահքի մեջ գտնվող և առողջական խնդիրներ ունեցող մարդուն թույլատրել դադարեցնել պահքը[339]:

---

[338] **J. Auda,** Maqasid al-Shariah as Philosophy of Islamic Law, London, 2007, p. 45.
[339] Նույն տեղում:

Այսպիսով, նոր դասակարգման մեջ մակասիդների գաղափարն ավելի ընդլայնվեց՝ ընդգրկելով ընդհանուր առմամբ ողջ մարդկությանը և նրան վերաբերող բազմաթիվ հարցեր և ոլորտներ:

Ռաշիդ Ռիդան[340], օրինակ, մակասիդների տեսության մեջ ներառեց կանանց իրավունքները որպես առանձին բաժին: Յուսուֆ Ալ-Կարադավին[341] մակասիդների իր տեսության մեջ ներառեց «մարդու արժանապատվությունը և օրենքները»[342]:

Մակասիդների շրջանակի նման ընդլայնումը թույլ է տալիս նրանց պատասխանել գլոբալ հիմնախնդիրների և գործնական ծրագրեր զարգացնել բարեփոխումների և նորարարությունների համար: Մակասիդները և դրանց արժեհամակարգը նաև դրվում են այնպիսի բանավեճերի կենտրոնում, ինչպիսիք են ոչ իսլամական հասարակություններում բնակվող և փոքրամասնություն կազմող մուսուլմանների քաղաքացիության, ինտեգրացիայի և քաղաքացիական իրավունքների խնդիրները:

Ի վերջո, ժամանակակից կրոնաիրավագետները ներկայացրին նոր, համընդհանուր մակասիդներ, որոնք ուղղակիորեն սերում են գրավոր սկզբնաղբյուրներից:

Յուսուֆ Ալ-Կարադավին իր հերթին առաջարկում է համընդհանուր մակասիդների իր տեսակետը՝ հիմնված Ղուրանի վրա, որի բացատրությունը հետևյալն է. «Մարդու իրավունքների և արժանապատվության պահպանումը, կոչը

---

[340] Ռաշիդ Ռիդան (1865-1935 թթ.) մուսուլման բարենորոգիչ է, սալաֆիականության հետևորդ: Վերջինիս աշխատանքները հետագայում մեծ ազդեցություն են ունեցել XX դարի իսլամական մտքի զարգացման վրա:

[341] Յուսուֆ Ալ-Կարադավին եգիպտացի կրոնաիրավագետ է, ով ապրում և ստեղծագործում է Կատարում:

[342] **M. H. Kamali**, "Law and ethics in Islam. The role of the maqasid",New Directions in Islamic thought, London, 2009, p. 28.

հավատալ և երկրպագել Աստծուն, հոգու ապաշխարումը, բարոյական արժեքների վերականգնումը, լավ ընտանիքների կառուցումը, կանանց՝ որպես հավասարի վերաբերվելը, ուժեղ իսլամական ազգության կառուցումը»[343]:

Ընդհանրացնելով նշենք, որ մակասիդներն իրականում նրանցից յուրաքանչյուրի անհատական կարծիքն է իսլամական օրենքի զարգացման վերաբերյալ:

Մակասիդները որպես զարգացման և մարդու իրավունքների ծրագիր

Կրոնաիրավագետները ժամանակակից լեզվաբանության միջոցով այժմ զարգացրել են մակասիդների ավանդական եզրաբանությունը: Նման մի օրինակ է «ժառանգների պաշտպանությունը» տեսության զարգացումը և վերափոխումը: Ավանդաբար «ժառանգների պաշտպանությունը» իսլամական իրավունքի անհրաժեշտություններից մեկն է, որն իսլամական օրենքը ձգտում է ի կատար ածել: Ալ- Ամիրին[344] դեռևս շատ վաղուց փորձել էր ներկայացնել դա՝ ուրվագծելով անհրաժեշտ նպատակների տեսությունը, ինչն արտահայտվում էր «պարկեշտությունը խախտելու համար սահմանված պատիժ» եզրույթով: Ալ-Ջուվայնին[345] զարգացրեց Ալ-Ամիրիի պատիժների տեսությունը՝ դարձնելով այն պաշտպանության տեսություն և սահմանելով այն որպես անձնական մասերի պաշտպանություն: Ալ-Ղազալին[346] «ժառանգների պաշտպանություն» եզրույթը դարձրեց իսլամական

---

[343] يوسف القرضاوي''الاجتهاد ف في الشريعة الاسلامية''دار القلم 1996 ص 87

[344] Պարսկական ծագումով մուսուլման կրոնաիրավագետ, փիլիսոփա:

[345] Աբու Ալ-Մաալի Ալ-Ջուվայնին(1028-1085 թթ.) շաֆիայական մազհաբի կրոնաիրավագետ է:

[346] Աբու Համիդ Մուհամմադ Ալ-Ղազալին (1058-1111 թթ.) պարսկական ծագմամբ մուսուլման աստվածաբան, կրոնաիրավագետ, փիլիսոփա է:

օրենքի նպատակներից մեկը՝ այն հասցնելով հաջիյաթ դասակարգման աստիճանի: XX դարում մակասիդներով զբաղվող հեղինակները զարգացրին «ժառանգների պաշտպանություն» տեսությունը՝ այն դարձնելով ընտանեկան ուղղվածություն ունեցող տեսություն: Օրինակ, Իբն Աշուրն ընտանիքի մասին հոգ տանելը դարձրեց իսլամական օրենքի մակասիդ: Այսպիսով, Իբն Աշուրը իսլամական օրենք մտցրեց արժեք և համակարգ հասկացությունները: Այնուամենայնիվ, որոշ ժամանակակից գիտնականներ դեմ են այնպիսի նոր հասկացությունների կիրառմանը, ինչպիսիք են, օրինակ, արդարությունը կամ ազատությունը՝ նշելով, որ այդ հասկացություններն անուղղակիորեն ներառված են դասական տեսության մեջ[347]:

Մարդու իրավունքների տեղը իսլամում ամենաշատ քննարկված թեմաներից մեկն է: 1981 թ. ընդունվում է «Մարդու իրավունքների համաշխարհային իսլամական հռչակագիրը»: Այն ներառում էր Մարդու իրավունքների համաշխարհային հռչակագիրը, ինչպես նաև հղումներ իսլամական բազմաթիվ աղբյուրներին և գրականությանը: Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի որոշ բարձրաստիճան անդամներ իրենց մտահոգությունը հայտնեցին «Իսլամական հռչակագրի» վերաբերյալ, քանի որ, ըստ նրանց, այն լրջորեն վտանգում էր միջմշակութային համերաշխությունը, որի վրա հիմնված էին մարդու իրավունքների գործիքները[348]:

Մյուս անդամները գտնում էին, որ հռչակագիրը նոր, դրական երանգ է հաղորդում մարդու իրավունքներին, քանի որ, ի տարբերություն այսպես կոչված միջազգային գործիք-

---

[347] **M. H. Kamali**, "Law and ethics in Islam. The role of the maqasid", New Directions in Islamic thought, London, 2009, p. 68.

[348] **M. Chapra**, The Islamic Vision of Development in the Light of Maqasid al-Shariah, London 2008, p. 56.

ների, սերում է աստվածային աղբյուրից և բարոյական շարժառիթ է տալիս դրանց հետևելու համար:

Ինչպես առաջարկում է մակասիդների տեսությամբ զբաղվող գիտնական Ջասեր Աուդան, մարդու իրավունքների զարգացումը պետք է լինի «մասլահայի» անմիջական արտահայտումը, որի արդյունքում մակասիդները պետք է ի կատար ածվեն իսլամական օրենքի միջոցով[349]:

[349] J. Auda, Maqasid al-Shariah as philosophy of Islamic law, London 2007, p. 75.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ..... 7

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ 16

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԼԻԹ
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ ՊՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 20

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ԿԱՊԻՏԱԼ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ 32

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆՈՒՇ
ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ . 40

ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 60

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ
ԻՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՊՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 68

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ
ՔՐԴԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՊՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ . 74

ՓԱՇԱՅԱՆ ԱՐԱՔՍ
ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՆՆԻ-ՇԻԱ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 83

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎՐԱ (2011-2014 ԹԹ.) 96

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՀԱՅԿ
ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ 105

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ
ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՎՐԱ 115

ՂԱՀՐԻՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՔՅԱՆ ՔՐԴՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ 121

ՀԱԿՈԲՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ
ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ (ԱՊԼ) ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀԱՐԱՅԻ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 129

ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԱՐԱԲԻԱՆ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 140

ՌԱՖԱՅԵԼՈՎԱ ՔՐԻՍՏԻՆԵ
ԱՐԱԲԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԼԵՋՎԱՅԻՆ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ 160

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՆՈՒՇ
ՍՈՒՖԻԶՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆ ԻԲՆ ԱԼ-ՋԱՈՒԶԻԻ «ԹԱԼԲԻՍ ԻԲԼԻՍ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ 170

ՄԱՐԻԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՄԱԿԱՍԻԴՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ԻՍԼԱՄԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ 183

CONTENTS

THE BIBLIOGRAPHY OF THE PUBLISHED MONOGRAPHIES OF PROF. NIKOLAY HOVHANNISYAN 7

THE ACADEMIC DEGREES AND TITLES OF PROF. NIKOLAY HOVHANNISYAN 16

ARTICLES

HARUTYUNYAN LILIT
THE LIFE AND THE ACADEMIC ACTIVITIES OF PROF. NIKOLAY HOVHANNISYAN 20

KARAPETYAN RUBEN
THE FIRST FUNDAMENTAL WORK ON THE HISTORY OF ARAB COUNTRUES IN THE FIELD OF ARMENIAN ORIENTAL STUDIES 32

HOVHANNISYAN ANUSH
THE ISSUES OF GENOCIDEOLOGY IN THE ACADEMIC WORKS OF NIKOLAY HOVHANNISYAN 40

TER-MATEVOSYAN VAHRAM
THE INTERNATIONAL RELATIONS AND GEOPOLITICAL ISSUES IN THE ACADEMIC WORKS OF PROF. NIKOLAY HOVHANNISYAN 60

ISKANDARYAN GOHAR
THE ISSUES OF IRANIAN STUDIES IN THE ACADEMIC WORKS OF PROF. NIKOLAY HOVHANNISYAN 68

MANUKYAN TATEVIK
THE ISSUES OF KURDISH STUDIES IN THE ACADEMIC WORKS OF PROF. NIKOLAY HOVHANNISYAN 74

PASHAYAN ARAX
THE CONTRADICTIONS BETWEEN SUNNI-SHII GEOPOLITICAL ALLIES IN THE CONTEXT OF "ARAB SPRING" 83

VARDANYAN GRIGOR
THE INFLUENCE OF SYRIAN CRISIS IN SOCIAL-ECONOMIC SITUATION OF THE COUNTRY (2011-2014) 96

SAMSONYAN HAYK
THE ARMENIAN GENERALS OF SYRIAN AND LEBANESE ARMIES 105

GASPARYAN ARAM
THE INFLUENCE OF TURKISH-ITALIAN WAR IN THE ARAB NATIONAL MOVEMENT 115

GHAHRİYAN MUSHEGH
THE ISLAMIC STATE. NEW CHALLENGES AND OPPORTUNITIES FOR IRAQI KURDISTAN 121

HAKOBYAN TATEVIK
THE POSITION OF THE LEAGUE OF ARAB STATES (LAS) ON THE ISSUE OF WESTERN SAHARA 129

KHORIKYAN HOVHANNES
ARABIA AND PALESTINE IN THE SYSTEM OF ADMINISTRATIVE DIVISION OF ACHAEMENID PERSIA 140

RAFAYELOVA KRISTINE
THE TYPES OF INTERLINGUAL SEMANTIC CORRELATION OF PHRASEOLOGICAL UNITS IN ARABIC AND ARMENIAN .. 160

TAMRAZYAN ANUSH
THE GENESIS OF SUFISM AND THE DISCUSSION OF IT'S MAIN CONCEPTS IN IBN AL-JAWZI'S "TABLIS IBLIS" WORK 170

MKHITARYAN MARIAM
MAQASID THEORY AS A NEW INTERPRETATION OF SUNNI ISLAM 183

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՏՈՐ II

ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

(Ժողովածուն նվիրվում է պ.գ.դ., պրոֆ., ՀՀԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ Նիկոլայ Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակին)

Խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 789
Ստորագրված է տպագրության՝ 14.07.2017թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16, 12.5 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 150 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0465612

102834